ՀԱՐԱՑԻ

1979

ԺԱ

146



ԼԶ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Նոյեմբեր

1979

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(14 հոկտեմբերի, կիրակի)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ամէն»:

«Հոգին է կենդանարար» (Հովհ. Զ 64), «Զհոգին մի շիջուցանէք» (Ա Թեսաղ. Ե 19):

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այս խորիմաստ խոսքերը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի պատգամներն են՝ ուղղյալ համայն մարդկության՝ երեկ, այսօր և հավիտյան:

«Զհոգին մի շիջուցանէք», «Հոգին է կենդանարար»:

Այս պատգամները եղած են առաջնորդող ոգի, լուսատու ջահ նաև մեր ժողովուրդի համար, մանավանդ այն պահից, երբ քրիստոնեությունը մուտք գործեց Հայաստանում: Հայ ժողովուրդը այդ օրվանից իր սիրտը բացեց Քրիստոսի Ավետարանին, Քրիստոսի լույսին և այդ լույսով ապրեց դարեր շարունակ, մինչև այսօր: Այդպես է, որ հայ ժողովուրդը պայծառակերպվեց ու փառավորեց իր հոգին, իր հոգեկան ուժերը:

Հոգին, սիրելի հավատացյալներ, մարդկային հոգեկան աշխարհը, տիեզերական ստարաշագործության գագաթնակետն է հանդիսանում: Ահա այդ բարձունքին հասավ, այդ գիտակցությունն հասավ մեր ժողովուրդը քրիստոնյա դառնալով: Իսկ հայ հոգու, հայ ոգեկանության օրրանը և գանձատունը հանդիսացավ Հայաստանյայց առաքելական եկեղեցին /հայ ժողովուրդի համար: Մեր մայր եկեղեցին, մեր ազգային եկեղեցին ի սկզբանե առաջնորդող ջահը հանդիսացած է մեր ազգին, կրոնական դաստիարակության իմաստով, բարոյական-հասարակական, մշակութային ու նաև հայրենասիրական-քաղաքական իմաստով: Մեր պատմության վերջին մոտ երկու հազար տարիների ընթացքում ինչ որ ստեղծված է մեր ժողովուրդի կողմից իբրև քարժեք՝ լեզու, գրականություն, արվեստներ, այսինքն ազգային մշակույթը

իր բոլոր հրաշապատում ձևերով, նաև մեր ժողովուրդի բարոյական նկարագիրն ու ճշմարտության, արդարության և ազատության զգացմունքները, մեր ժողովուրդի ինքնուրույն ապրելու հերոսական տենչը,—այս բոլորը շաղախված են Քրիստոսի Ավետարանի լույսով:

Հայաստանյայց եկեղեցին իրապես ազգային եկեղեցի է, որովհետև իր ամբողջ սրտով ու հոգով, իր առաքելության բոլոր թելերով կապված է անմբաժան կերպով հայ ժողովուրդի մշտական հոգեկան ապրումների, ձգտումների, երազանքների հետ: Գրեթե միշտ հայ ժողովուրդի հանուն ազատության մղված պայքարներում մեր եկեղեցին առաջնորդողի դեր կատարած է և կողքին կանգնած հայ իշխաններին և ժողովուրդի բոլոր ազատատենչ մարտիկներին, որոնք մարտնչած են դարերի ընթացքում «վասն Ցիսուսի և վասն հայրենեաց», Ավարայրից սկսած մինչև Սարդարապատի հերոսամարտը:

Ահա թե ինչ է նշանակում հայ ժողովուրդի համար, հայոց պատմության համար Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին: Մենք հպարտությամբ կարող ենք աշխարհի առաջ վկայել, որ մեր մայր եկեղեցին, Քրիստոսի պատգամի համաձայն, հոգու լույսը վառ պահեց մեր ազգի ողջ կյանքի և պատմության ընթացքում:

Մեր եկեղեցին այսօր էլ իր պատմական առաքելությունը շարունակում է և պետք է շարունակի թե՛ մեր մայր երկրում, մեր վերածնված Մայր Հայաստանում, թե՛ արտասահմանում, որտեղ ապրում են մեր ժողովուրդի զավակների հոծ բազմություններ՝ տարբեր երկիրների մեջ սփռված:

Այսօր էլ, հետևաբար, ուղիղ գծով Հայաստանյայց եկեղեցին գտնվում է իր ճշմարիտ, հարազատ, եկեղեցաշեն, ազգահավաք և ազգապահպան առաքելության ճանապարհի վրա: Այս ճանապարհի վրա երբեմն թե՛ անցյալում և մե՛ր օրերում դժվարություններ են ստեղծվել ինչ-ինչ արտաքին կամ ներքին պատճառների հետևանքով: Այսպես է, որ վերջին այս քսան և ավելի տարիների ընթացքում մեր եկեղեցին նման դժվարությանց առջև կանգնեց հատկապես 1956 թվականից այս կողմ: Որոշ անհասկացողություններ առաջ եկան հատկապես Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Անթիլիասում հաստատված Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի միջև: Սակայն մենք բոլորս այստեղ թե արտասահմանում, մենք կասեինք ողջ հայությունը միշտ լավատես մնաց և հուսաց ու կամեցավ, որ այդ դժվարությունները և անհասկացողությունները վերջ գտնեն և վերահաստատվի միությունը, ամբողջական եղբայրական միությունը Հայաստանյայց եկեղեցվո նվիրապետական կառույցի մեջ:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը իբրև ընդհանրական Հայրապետություն և գլուխ Հայաստանյայց եկեղեցվո միշտ մնաց աղոթող և գործող այդ բարի, շինարար նպատակի կենսագործման ի խնդիր: Եվ անվասիկ, սիրելի հավատացյալներ, Մենք երջանիկ ենք ձեզի այսօր հայտնի դարձնելու, թե Մեր հրավերով, նույն բարի մտադրություններով և զգացումներով առաջնորդված Մայր Աթոռ ժամանեց պատվիրակությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության սրանից մի տասը օրեր առաջ: Այստեղ, մեզ մոտ, Մայր Աթոռում, տեղի ունեցան խորհրդակցություններ, բանակցություններ մեր երկու Աթոռների պատվիրակությունների միջև: Նրանք իրենց աշխատանքը վերջացրին արդեն բարի արդյունքներով: Երկու պատվիրակությունները եղբայրական փոխըմբռնման և սիրո մթնոլորտի մեջ հաստատեցին մի քանի հիմնական սկզբունքներ, որոնց վրա պիտի հաստատվի և իրագործվի

մեր եկեղեցվո միությունը և համերաշխ գործակցությունը Մայր Աթոռիս և Կիլիկյան Աթոռի միջև: Մնում է այժմ, որ հետագա նոր հանդիպումներով և միջոցառումներով երկու Աթոռների գահակալների կողմից կյանքի կոչվեն այդ սկզբունքները և վերանա տագնապալի կացությունը մեր եկեղեցու ծոցից, որի համար թե՛ մենք և թե՛ Անթիլիասի մեր եղբայրները հոգեպես տառապում էինք:

Այսպիսով կատարվեց առաջին և հուսադրիչ նախաքայլը: Մենք հավատում ենք, թե պիտի հաջորդեն համապատասխան կարգադրություններ, որպեսզի հասնենք մեր բոլորիս բաղձանքների և սպասումների իրականացման, այսինքն վերականգնումը օրինականության, ներքին միության, խաղաղ գործակցության մեր Աթոռների միջև:

Բացի այդ մենք սպասում ենք, որ միության իրագործումով առավել սերտ և ջերմ հարաբերություններ ստեղծվեն հայրենիքի և սփյուռքի միջև: Այդ կապերը արդեն հաստատված են, ինչպես գիտեք: Արտասահմանի ողջ հայության հայացքը ուղղված է դեպի վերածնված Մայր Հայաստան: Բոլոր հայերը գիտակցում են, որ հայ ժողովուրդը ունի իր մայր երկիրը, իր պետությունը, ամենայն հայոց Մայր Հայաստանը, որը գրավականն է և իրավ պատվանդանը հայ ժողովուրդի կյանքի տևականության, հայ ժողովուրդի կյանքի զարգացման, հայ ժողովուրդի առավել պայծառ ապագայի կենսագործման:

Այս ազգային գիտակցությունը, Մեր կարծիքով, առավել պիտի ամրապընդվի մեր երկու Աթոռների համերաշխ ու շինարար գործակցությամբ: Բայց ոչ միայն այսքան: Կարծում ենք, որ միության կարևորագույն մեկ արդյունքը պետք է լինի նաև այն, որ մեր բոլոր նվիրապետական Աթոռները միասին, ձեռք-ձեռքի տված, մեր բովանդակ եկեղեցին իր բոլոր ուժերը լարած նվիրվի արտասահմանի հայության ինքնության պահպանության և պաշտպանության սուրբ գործին:

Մենք երբեք չենք կարող մոռանալ այն տխուր ճակատագիրը, որ մեզ բաժին ընկավ պատմության ընթացքում հարյուրամյակներ շարունակ: Չենք կարող մոռանալ մանավանդ այն ահավոր ողբերգությունը, որ տեղի ունեցավ 1915—1916 թվականներին Արևմտյան Հայաստանում, ներառյալ Կիլիկյան Հայաստանը, երբ մեր ողջ ժողովուրդը բնաջնջվեց այնտեղ: Միայն հրաշքի համազոր պայմանների մեջ է, որ հայ ժողովուրդը կարողացավ գտնել իր փրկության ճանապարհը՝ վերականգնումովը հայ պետականության և զարգացումովը մեր օրերի հայրենական իրականության, որի ականատեսն ենք բոլորս:

Հստակ գիտակցությունը ունենալով մեր անցյալ ողբերգությունների և նահատակությունների, մենք բոլորս առավել պատասխանատվության զգացմունքով, առավել գիտակցությամբ, առավել հերոսական ճիգերով պետք է աշխատենք փրկել, պահպանել ու զորացնել այն, ինչ որ մեզ մնաց:

Նախ մեր վերածնված հայրենիքը, բայց նաև սփյուռքի հայությունը՝ մոտ երկու միլիոն մեր եղբայրները և քույրերը, որոնք տարբեր-տարբեր երկրներում երբեմն դժվարին պայմանների մեջ են գտնվում, իբրև ազգային փոքրամասնություններ և կրոնական համայնքներ: Մեր եկեղեցվո առաքելության ժամը վաղուց է հնչած այս տեսակետից: Այդ գիտակցությամբ մանավանդ մենք պետք է առաջնորդվենք մեր եկեղեցվո ներքին միությունը վերահաստատելու մեր ճանապարհի վրա:

Իրոք որ երբեմն արտասահմանի պայմաններում մեր եկեղեցին ու ժո-

ղովուրդը դժվար կացությանց են մատնվում այս կամ այն չափով, այս կամ այն ձևով: Այս պահին մենք պետք է հիշենք այստեղ այն ծանր կացությունը, որ ստեղծվեց անցյալ տարի հոկտեմբերին և այս տարի սեպտեմբերին հատկապես Բեյրութում, Լիբանանում, մեր հավատակից հայ եղբայրների և քույրերի համար, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համար, հոգ լիբանանահայության համար:

Դուք այդ բոլորին տեղյակ եք: Մենք, իբրև եկեղեցվո հովվապետ, մենք բոլոր հայաստանցիներս, իբրև հայ ժողովուրդի զավակներ, չենք կարող անտարբեր մնալ, երբ մեր դավանակից եղբայրները և քույրերը տագնապալի կացությանց են ենթարկվում, ինչպես այդ պատահեց Լիբանանում: Մենք այս առիթը օգտագործում ենք, որպեսզի մի անգամ ևս մեր եղբայրական ողջույնը ուղարկենք Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետներին՝ Խորեն Ա կաթողիկոսին ու աթոռակից Գարեգին Բ-ին և բոլոր հայ հավատացյալներին, որ ի Լիբանան: Նաև մեր աղոթքը ջերմագին, որ շուտով վերահաստատվի խաղաղ և շինարար կյանքը Լիբանանի ափերում՝ մահմեդական և քրիստոնյա բոլոր համայնքների միջև՝ համերաշխության և եղբայրական արդար գործակցության պայմաններում, որպեսզի այդ սքանչելի երկիրը՝ Լիբանանը, վերագտնե իր երբեմնի երջանկությունը: Մենք զգում ենք խորապես, որ ամեն հարված, ուր ուղղված կլինի Լիբանանի հայ եկեղեցուն ու համայնքին, դա հարված է նաև մեզ բոլորիս համար, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Հայաստանի բոլոր Մեր հավատացյալ զավակների համար:

Այս մաղթանքներով, այս իղձերով Մենք կուզենայինք հիշել մարգարեական խոսքերը մեր նահատակ բանաստեղծ Դանիել Վարուժանի, որ իր ծանոթ գործերից մեկում իր խոսքը ուղղում է հայ ժողովուրդին.

«Մենք զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք նոր արշալույս»:

Նոր արշալույս մեր ազգի, մեր հայրենիքի, մեր եկեղեցու համար: Նոր արշալույս կերտելու հավատքով, կամեցողությամբ, տեսիլքով հառաջ ընթանանք վառ պահելով հոգին մեր ազգի, որովհետև մեր հոգեկան ուժերով է, որ պիտի մնանք կենդանի, պայծառ և պիտի կարողանանք իբրև ազգություն և եկեղեցի մեր առաքելությունը շարունակել այս արևին տակ, մեր եղբայր ժողովուրդների կողքին:

Այդ արշալույսը, այդ լուսաբացը սկսված է արդեն մեր հայրենի պետության վերածնունդով ու ծաղկումով, որը պետք է շարունակվի և իր լրումին հասնի: Այդ լրումին հասնելու ճանապարհի վրա՝ միությունը և սերտ գործակցությունը անհրաժեշտ է մեր նվիրապետական Աթոռների միջև: Անհրաժեշտ է, որ Հայաստանյայց եկեղեցին հավատարիմ մնա իր դարավոր առաքելության և կատարի իր սրբազան պարտականությունը ամբողջապես Աստուծո, ազգի և պատմության առջև:

Վերջացնելով Մեր խոսքը մաղթում ենք Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական Աթոռին՝ անսասանություն, նրա երկու գահակալներին՝ քաջառողջություն, համբերության ոգի և արիություն, իսկ եղբայրական Լիբանանին և արաբ ազնիվ ազգին՝ խաղաղություն, խաղաղություն և խաղաղություն:

«Շնորհք և սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանսդ: Ամէն»:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՋԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՋԱՒԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆԵԱՆԻՆ, ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՍԻ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԳԱՀԻՐԷ

Փառք կու տանք Աստուծոյ Ամենակալին որ Իր սուրբ հովանիին տակ ապահով ու պայծառ կը պահպանէ մեր սուրբ եկեղեցին՝ իր եկեղեցիներով ու հաւատացեալ ժողովուրդով, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Այս մխիթարական իրականութիւնը կը պարտինք նաև մեր եկեղեցւոյ սպասաւորներուն, որոնք կանգնած կը մնան իրենց նուիրական կոչումին բարձրութեան վրայ՝ իբրև հոգևոր մշակներ և ժողովուրդի առաջնորդներ:

Մեր օրերու այդ նուիրեալներու շարքին՝ մեր ասագ հոգևորականներէն մին է Ձերդ Սրբազնութիւնը, իբրև բարեխնամ առաջնորդը եգիպտահայոց պատմական թեմին, իբրև բարի և քաջ հովիւը ժողովրդեան, իբրև անձանձրոյթ աղօթողը ու գործողը ի շինութիւն մեր զաւակներու հոգևոր կեանքին:

Ընդառաջելով Գահիրէի և Աղեքսանդրիոյ թեմական ժողովներու միատեղ կատարուած միջնորդութեան, իբրև Հայրապետը Ձեր, սրտանց կ'ողջունենք ու կը գնահատենք անբասիր ծառայութեան Ձեր երկարամեայ բեղուն վաստակը և Ձեզ կը շնորհենք ԱՐՔՈՒԹԵԱՆ պատիւ, աղօթքով ջերմագին որ Տէրը Ձեզի պարգևէ կեանքի ու աշխատանքի երկար, շատ երկար տարիներ, որպեսզի նոր ներշնչումներով ու մշտանորոգ եռանդով շա-

րունակէք Ձեր առաքելութիւնը, յառաւել շինութիւն ու պայծառութիւն մեր սուրբ եկեղեցւոյ և ի մխիթարութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին:

«Եւ դուք իբրև զվէմս կենդանիս շինիք տաճար հոգևոր, յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգևոր պատարագս հաճոյս Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի» (Ա Պետրոս Բ 5). ամէն:

Հայրապետական սիրով և օրհնութեամբ՝

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 26 հոկտեմբերի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 986



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ ՓԱՐԻԶԻ «ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ»-Ի ՏՆՕՐԵՆՈՒԹՅԱՆԸ, ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄՆԻՆ, ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ, ՊԱՇՏՕՆԵՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆԸ

«ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ»-Ի ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ, ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄՆԻՆ ԵՒ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ, ՊԱՇՏՕՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԷՆ ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՛Ն ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՓԱՐԻԶ

Մեր ժողովուրդի նորագոյն պատմութեան հորիզոնին վրայ, իր արժանաւոր տեղը ունի «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ը, հիմնուած Կ. Պոլսոյ մէջ 1879 փրկչական թուականին:

Հարիւր տարիներ առաջ Վոսփորի գեղաձիծաղ ափերուն, արևմտահայոց հոգևոր մշակութային զարթոնքի օրերուն էր, երբ ազգային վերածնունդի տեսիլքը ունեցող առաքինազարդ հայուհիներու նախաձեռնութեամբ, օրիորդներ Նուրիկ Սիմոնեան, Թագուհի Պալթազարեան և Արմաւիր Արամեան, կեանքի կոչուեցաւ «Դպրոցասիրաց» աղջկանց վարժարանը՝ նպատակ ունենալով դաստիարակներ պատրաստել գաւառի կրթական հաստատութիւններու համար և այսպիսով հոգևոր լոյս ու գիտութիւն տարածել արևմըտահայոց աշխարհի տարածքի վրայ:

Շուտով «Դպրոցասէր»-ը դարձաւ համազգային նշանակութիւն ունեցող հաստատութիւն և նախախնամական դեր կատարեց համայն հայութեան ազգային վերածնունդի խանդավառ այդ օրերուն:

Բայց աւաղ, 1915-ի հայասպան մրրիկը չխնայեց նաև «Դպրոցասէր»-ին ու հնձեց տարաւ, բնաջինջ ըրաւ հարիւրաւոր վարժարաններ, հազարաւոր կրթական մշակներ, տասնեակ հազարաւոր մատաղ հայ աղջիկներ:

Աստուած սակայն բոլորովին չլքեց մեր ժողովուրդը և կարճ ժամանակ անց հայոց մթագնած երկնակամարի վրայ նոր լոյս ծագեցաւ՝ նոր զարթօնքի, նոր վերածնունդի ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի: Այսպէս է որ «Դպրոցասէր»-ի տեսլապաշտ հիմնադիրներու ոգին կրող, տնօրէնուհի

տիկին Մուրատ Ակիլինէ Պոյաճեանի հերոսական ջանքերով, վարժարանը 1922-ին փոխադրուեցաւ Ֆրանսա և հաստատուեցաւ Փարիզ 1928 թուականին:

Այդ օրէն ահա «Դպրոցասէր»-ը կը շարունակէ իր պատմական առաքելութիւնը, նուիրուած հայ դպրութեան ու ազգային դաստիարակութեան ազնիւ գործին, գնահատուած ու սիրուած բոլորի կողմէ:

«Դպրոցասէր»-ը նոր պայմաններու մէջ, բնականաբար չէր կրնար ունենալ նախկին իր ընդարձակ ցանցը կրթական հաստատութիւններու, սակայն ան յաղթահարելով բազում դժուարութիւններ, յաջողեցաւ լոյս քաղաքին մէջ վառ պահել ջահը իր լուսաբաշխ հիմնադիրներուն, ջահը հայ հաւատքին, հայ հոգիին:

Այսօր, «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ի հարիւր տարիներու կեանքին ու գործունէութեան սեմին Մենք՝ Հայրապետ Հայոց, Մեր հայեացքը դէպի երկինք, կ'աղօթենք Փրկչին մեր Յիսուսի Իշման սուրբ Սեղանի առջև, որ Տէրը Իր պահապան ու օգնական աջը միշտ հաստատ պահէ վաստակաշատ այս կրթական հաստատութեան վրայ, նոր ուժ ու եռանդ պարգևէ Վարժարանի արդի բարեջան տնօրէնուհի վարիչին, Խնամակալ Մարմնի անձնուէր անդամներուն և անխոնջ կրթական մշակներուն, որպէսզի շարունակեն իրենց կրթանուէր աշխատանքը:

Այս հանդիսաւոր առիթով, Մեր խօսքը և կոչը կը կամենանք ուղղել նաև համայն հայութեան որ ի Ֆրանսա և Եւրոպա, որպէսզի բոլորը նեցուկ կանգնին բարոյապէս և նիւթապէս «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ին ի Լը Ռէնսի, որպէսզի ան հետզհետէ առաւել արդիւնաւէտութեամբ ի կատար ածէ իր հոգեշէն ու հայապահպան առաքելութիւնը հայ սփիւռքի ծոցին մէջ:

Օրհնութի՜ւն «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ի անմոռաց հիմնադիրներուն:

Օրհնութի՜ւն «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ի մեծ վաստակին և անոր արդի առաքելութեան:

Օրհնութի՜ւն «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ի Խնամակալ Մարմնին ու բարեկամներուն, ուսուցչական կազմին, պաշտօնէութեան և աշակերտութեան:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13). ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 5 Հոկտեմբերի
1979 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԸ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 983

ՓԱՌՔ ՄԵԾԱԾ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱԿԱՆՆԱՎՈՐ ՆԿԱՐԻՉ ԳԱՌԶՈՒԻՆ (ԳԱՌՆԻԿ ԶՈՒԼՈՒՄՅԱՆ) «Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ՆԿԱՐԻՉ ԳԱՌՆԻԿ ԶՈՒԼՈՒՄԵԱՆ-ԳԱՌԶՈՒԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՓԱՐԻԶ

Աստուած՝ պարգևատուն բարեաց, Իր լոյս շնորհները միշտ առատօրէն բաշխած է մեր հինաւուրց ազգի զաւակներէն շատերուն, պատմութեան ընթացքին։ Այդպէս է որ մեր ժողովուրդը նոյնիսկ իր գոյութեան փոթորկայոյզ ժամանակներուն, իր ծոցէն ծնունդ տուած է հանճարադրոշմ անհատականութիւններու, որոնք իրենց ստեղծարար իրագործումներով հարստացուցած են համամարդկային արժէքներու մեծ գանձարանը։

Դուք, վարպետ, մեր ժողովուրդի ստեղծագործած արժէքներու երկնակամարի վրայ բարձրացուցիք փայլուն աստղ մը ևս թռիչք առած ասպնջական Ֆրանսայէն։

Ձեր ևնզուգական նկարչական արուեստը արգասիքն է հայկական ու ֆրանսական մտածումի և զգայութեանց ստեղծարար ուժերու միատեղ ծաղկումին, նոր, ինքնատիպ գոյներու, լոյսերու և շարժումներու ներդաշնաւորումներով։ Եւ բազում տարիներէ ի վեր Ձեր գործերը յաճախ կը զարդարեն

ցուցահանդէսներու սրահները, գեղարուեստական հիացումի յուզում բաշխելով Ֆրանսայի և շատ այլ երկիրներու մեծ ոստաններու արուեստի երկրպագուներուն:

Ձեր արուեստը, Ձեր բազմերանգ տաղանդը, Ձեր պայծառ անձնաւորութիւնը մեծապէս գնահատուած են նաև հայոց հայրենիքի, Մայր Հայաստանի մէջ, ուր բոլորը հպարտ են ու խանդավառ Ձեզմով, Ձեր վաստակով, Ձեր համբաւով:

Մենք՝ Հայրապետ Հայոց, քաղցրօրէն գնահատելով համաշխարհային ճանաչման հասած Ձեր արուեստը, այլև սիրով ընդառաջելով միջնորդութեանը Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ և Փարիզի հայոց առաջնորդ գերաշնորհ տ. Սերովբէ արքեպիսկոպոսի, այսու Մեր կոնդակով Ձեզի կը շնորհենք «Սուրբ Սահակ—սուրբ Մեսրոպ» շքանշանը, մաղթելով որ զայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ երկար, շատ երկար տարիներ՝ մշտատև քաջառողջութեամբ, անսպառ ստեղծարար ներշնչումներով և ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-9 հոկտեմբերի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 984

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 24-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին, կիրակի օրը, Մայր Աթոռում, ավանդական հանդիսությամբ ու խանդավառ մթնոլորտում, նշվեց Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության 24-րդ տարեդարձը:

24 տարիներ առաջ, 1955 թվականի հոկտեմբերի 2-ին, ս. Գրիգոր Լուսավորչի պատմական Աթոռի վրա բազմեց Հայոց նորընտիր Հայրապետը՝ խորը հավատով, հոգևոր-եկեղեցական, ազգային-հայրենասիրական առաքելության պայծառ գիտակցությամբ:

Աստվածառաք Հայրապետը գահակալության տարիներին Իր Աջը տարածեց բովանդակ հայության վրա ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի և Իր առաքելությունը կատարեց անմնացորդ նվիրումով ու բոլորանվեր սիրով դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը, դեպի հայ եկեղեցին, դեպի հայ ժողովուրդն ու հայրենիքը:

Անցնող 24 տարիների ընթացքում Հայոց Հայրապետը Իր բարձր անձնավորությունը նույնացրեց գրոց հիշատակության արժանի իրագործումներով, ինչպես նաև Մայր Աթոռի և Հայոց վերածնված աշխարհի երազանքների հետ:

Հայոց Հայրապետի ոգեշնչող անձնավորությունից ճառագայթող լույսը ջերմացրեց բովանդակ հայության սիրտը և այն անքակտելի կերպով կապեց Մայր Աթոռի, հայ եկեղեցու և Հայոց Մայր երկրի հետ:

Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, Իր ոտքերն ամրորեն դրած հայրենի հողի վրա, անցյալի մեր տեսլապաշտ ու վաստակաշատ մեծ հայրապետների օրինակով ծաղկեցրեց Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Միաժամանակ Նա Իր մեծ ու բարի սրտով հասավ սփյուռքին՝ հովվապետական Իր բազում այցելությունների առիթով, ամեն տեղ, համայնքից համայնք, թեմերից թեմ, Իր հետ տանելով անձամբ ս. Էջմիածնի պատգամն ու օրհնությունը, ինչպես նաև վերածնված Հայոց աշխարհի կենարար շունչն ու Արարատյան աշխարհի հայրենական քաղցրությունները և ազգային վերածնության ոգեշնչող ավետիսը:

Հայոց Հայրապետի գահակալության անցնող 24 տարիների բեղուն շրջանը ընդգրկեց հոգևոր-եկեղեցական, ազգային-հայրենասիրական, վերակառուցողական-շինարարական, միջեկեղեցական ու խաղաղասիրական բազում բնագավառներ:

Սեպտեմբերի 30, կիրակի: Տոն էր Մայր Աթոռում և բոլոր հայկական եկեղեցիներում ու թեմերում, օրը՝ պայծառ ու արևային, բոլորի տրամադրությունը՝ բարձր ու հանդիսավոր:

Այս ուրախ առիթով, մասնակցելու համար գահակալության հանդիսություններին, Մայր Աթոռ էին ժամանել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, ԱՄՆ-ի արևմտյան թեմի առաջնորդ տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը, Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և հոգևոր առաջնորդ տ. Ներսես եպս. Պոզապալյանը, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի վերատեսուչ տ. Շահե արքեպ. Աճեմյանը և Իրաքի հայոց թեմի առաջնորդական տեղապահ տ. Ավագ վրդ. Ասատուրյանը:

Գահակալական հանդիսություններին մասնակցում էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայր հայրենիքի, ներքին թեմերի առաջնորդ սրբազանները, տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնեության ղեկավար աշխատողներ:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը Վեհարանում, զգեստավորված, եկեղեցական թափորով ու զանգերի ավետավոր հնչյունների ներքո, առաջնորդվեց Մայր տաճար՝ մատուցելու օրվա սուրբ պատարագը:

Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ էին գրավել պաշտոնական անձնավորություններ, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, սփյուռքահայ բազում ուխտավորներ, որոնց թվում՝ ամերիկահայ ուխտավորների, ինչպես նաև Արևմտյան Գերմանիայից ժամանած այցելուների մեծ խմբեր:

Սուրբ սեղանին սպասարկում էին եպիսկոպոսներ, վարդապետներ և սարկավագների դասը:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում էր Մայր տաճարի երգչախումբը՝ վաստակավոր արտիստ Խորեն Մելխանեջյանի շնորհալի ղեկավարությամբ:

Մայր տաճարը լիքն էր աղոթավոր հավատացյալների բազմությամբ: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Վեհափառ Հայրապետը քարոզեց «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ» (Սաղմ. ԺԸ 2) բնաբանով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(30 սեպտեմբերի 1979 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, Ամէն»:

«Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»:

«Երկինքը պատմում է մեզ Աստուծո փառքի մասին»:

Այս իմաստուն խոսքերը արտասանել է Դավիթ արքա սաղմոսերգուն՝ Հին Կտակարանի մեծ հեղինակներից մեկը, սաղմոսների հեղինակը, մեզանից շատ դարեր առաջ, մոտավորապես երեք հազար տարիներ առաջ:

Անհավասիկ այդ հեռավոր ժամանակներին ընտրյալ մարդիկ, աստվածայինով ներշնչված մարդիկ, ինչպիսի՞ մտածումի և զգացումի բարձունքի են հասել, որ հիացում է պատճառում նաև մեզ այսօր:

Ո՞վ մեզանից այսօր էլ, իր հայացքը բարձրացնելիս լինի դեպի երկինք, դեպի արևազարդ երկինքը ցերեկվա ընթացքում, կամ դեպի աստղերով զարդարված երկինքը գիշերվա ընթացքում, չի՞ լցվում հիացմունքով և իր հոգու մեջ չի՞ տալիս մեծ հարցումը, թե ո՞վ է ստեղծել այս հիասքանչ տիեզերքը, արևով, լուսնով, աստղերով բազում, անհամար, նրանց շարժումներով, նրանց՝ մեզ պարգևած լույսով և ջերմությամբ: Բնական կերպով և անհրաժեշտորեն այդ հարցը մեր հոգու մեջ շարժվում է, և մենք սաղմոսերգուի նման չենք ֆյարող չբացականչել՝ «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»:

Սիրելի հավատացյալնե՛ր,

Դավիթ սաղմոսերգուն և իր ժամանակի մարդիկ, երեք հազար տարի մեզանից առաջ, երկինք ասելով հասկանում էին այն պատկերը, որ պարզ աչքով մենք էլ տեսնում ենք այսօր: Նույնիսկ մինչև մեզանից մի քանի հարյուր տարիներ առաջ մարդիկ գաղափար իսկ չունեին, թե ավելի այն կողմ, ավելի հեռուները, անսահմանության մեջ, տարածվում է տիեզերքը: Եվ կարելի է ասել, թե հազիվ տասը-քսան տարի է, որ շոշափելիորեն հայտնաբերվեց, թե երկինքը այն չէ միայն, ինչ որ տեսնում ենք պարզ աչքերով. այդ տիեզերքը ունի անսահման, անծարաձիր խորություն, հազարավոր արեգակներով և արեգակնային համակարգերով:

Ուրեմն, եթե երեք հազար տարիներ առաջ մարդիկ հիացել են աստղազարդ երկնքի պատկերի առաջ, մենք ինչքա՞ն առավել հիացումով պետք է անդրադառնանք հանդեպ տիեզերքի այս հիասքանչ,

կատարյալ և անսահման, անծայրածիր տարածության իրողության:

Եվ հետևաբար ինչքա՞ն առավել համոզումով կարող ենք բացականչել այսօր՝ «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»: Որովհետև իրոք համայն տիեզերքը և մեր աշխարհը իր անասելի կատարելություններով, ներդաշնակություններով, գեղեցկություններով Աստուծո փառքի մասին են պատմում մեզ:

Ահա ամենախոր ակունքը մեր կրոնական հավատքի: Որովհետև այս ամենը հնարավոր չէ, որ լիներ արդյունքը պատահականության, որ լիներ աննպատակ և անիմաստ:

Այս պահին, սիրելի հավատացյալներ, Մեր մտածումը ավելի առաջ է գնում՝ կենտրոնանալու մեր աշխարհի վրա, որ իր բազում բնական գեղեցկություններով, իր բուսական և կենդանական զարմանահրաշ հարստություններով, կատարելություններով նույնպե՛ս Աստուծո փառքի մասին են խոսում: Սակայն այդ բոլորից վեր կա մի ուրիշ իրականություն մեր այս աշխարհի վրա, աստվածային մեկ ուրիշ ստեղծագործություն, որը համայն արարչագործության գագաթնակետն է: Դա ինքը մարդն է: Մարդը՝ իր հոգու ամբողջ տիեզերքով, իր ստեղծած բազում իրագործումներով պատմության ընթացքին: Մարդը անկասկած կարող ենք նկատել Աստուծո արարչագործության գերագույն հրաշալիքը:

Աստվածային ստեղծագործության գագաթնակետը, այո՛, մարդն է՝ իր ճանաչության կարողությամբ, մարդը՝ իր ողջ ոգեկանությամբ, իր մտքի թռիչքներով, իր հոգու հույզերով ու տեսիլքներով, մարդը իր կամքի հզոր դրսևորումներով, իր շինարար, ստեղծարար իրագործումներով:

Ոմանք կարծում են, թե՛ հակասություն կամ հակամարտություն կա գիտության և հավատքի միջև: Մենք չենք հավատում դրան, որովհետև գիտությունը ինքը ուրիշ բան չէ, եթե ոչ մարդկային մտքի թռիչքը, կարողությունը՝ հայտնաբերելու բնության օրենքները և կիրառելու դրանք մարդկային կյանքի բարօրության համար: Իսկ նյութական բնությունը իր բոլոր օրինաչափություններով անբաժան մասն է կազմում աստվածային արարչագործության և հետևաբար մեր օրերի գիտության հայտնաբերումներով՝ առավել պայծառանում է փառքը Աստուծո:

Հարց տանք՝ ինչպե՞ս է արտահայտվում մարդկային ոգեկանությունը նրա կյանքի պատմության ընթացքին: Մարդկային ոգեկանության գերագույն արտահայտությունն է կրոնական զգացմունքի թռիչքը, որով մարդը որոնում է և գիտակցում և գտնում՝ հեղինակը տիեզերական արարչագործության, այսինքն՝ Աստուծո:

Ոգեկանություն ասելով պետք է հասկանանք այն բոլոր ստեղծագործությունները, որոնք պատմության ընթացքում ժողովուրդները, օժտված, ներշնչված մարդիկ, հորինել են և հարստացրել մարդկային մշակույթի գանձարանը՝ գիր, գրականություն, ճարտարապետություն, քանդակագործություն, նկարչություն, երաժշտություն և մյուս բոլոր արվեստները: Նաև մարդուն հատուկ մեկ ուրիշ ոգեկան արժեք, գուցե առավել գերազանց, այդ նրա հոգևոր-բարոյական գիտակցությունն է, այսինքն գիտակցումը բարվույն, արդարության, ազատության, մարդասիրության և խաղաղության: Այս զգացումները մանավանդ հանդիսանում են մարդկային կյանքի և պատմության փառապսակը:

Սիրելի հավատացյալներ, այս բոլորի մասին խորհրդածելով Մեր հայացքը այժմ ուղղում ենք դեպի մարդկության այն հատվածը, որ կոչվում է հայ ժողովուրդ, որ մեր սեփական ազգն է: Մենք արդար հպարտությամբ կարող ենք ասել, որ հայ ժողովուրդը տակավին շատ դարեր առաջ առաջիններից եղավ աշխարհի վրա, որ դարձավ ոգեկան արժեքներ ստեղծող ժողովուրդ՝ իր աստվածճանաչությամբ, իր բարոյական բարձր ըմբռնումներով և իր ստեղծագործություններով կյանքի բոլոր բնագավառների մեջ: Եվ այդ բոլորի սկզբնաղբյուրը հանդիսացավ լույսը Քրիստոսի: Այն պահից, երբ հայ ժողովուրդը իր սիրտը բացեց Քրիստոսի Ավետարանին, բռնկվեց նրա հոգու մեջ կրակը ոգեկանության, ստեղծարար ոգեկանության: Այդպես մեր ազգը մոտ երկու հազար տարիներից ի վեր աշխարհի առաջադեմ ազգերի հետ միասին իր նպաստն է բերում մարդկային ոգեկանության հառաջընթացի ճանապարհի վրա:

Մեր ժողովուրդը անցյալում թեև շատ անգամներ տատապել է ու հանդիպել բազում փորձությունների և հաճախ նահատակվել նույնիսկ, սակայն նա միշտ բարձր է պահել ոգեկանության դրոշը և ամենադաժան ժամանակաշրջաններում իսկ նա մի տեսակ իր վրեժն է լուծել ստեղծագործելով, մագաղաթների ու քարերի վրա թողնելով իր հոգու պատկերը: Այսօր, փառք Աստուծո, անցել են այդ տխուր ժամանակները, և հայ ժողովուրդը, թե՛ Հայաստանում և թե՛ մասամբ արտասահմանի տարածքի վրա, շարունակում է ոչ միայն իր ֆիզիկական գոյությունը, իր տնտեսական գոյավիճակը, այլ նաև շարունակում է ըն-

թանալ ոգեկանության ճանապարհով, և ոգի հառաջատարը, հայ ժողովուրդի ոգեկանության հառաջատարը, հանդիսացել է դարեր շարունակ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին:

Այդ գիտակցությամբ է, որ Մենք այս վերջին քսանչորս տարիների ընթացքում Մեր գահակալության, այստեղ աշխատում ենք, երազում ենք ու ձգտում՝ ընթանալ այն լուսավոր ճանապարհով, որով ընթացել են մեր նախնիք: Եվ Աստուծո օգնությամբ և Մեր գործակիցների օժանդակությամբ, նաև մեր հայրենի պետության բարյացակամության, անավասիկ քսան և չորս տարիներե ի վեր Մենք փորձում ենք կատարել Մեր պարտականությունը:

Այսօր, Մեր գահակալության քսանհինգերորդ տարեդարձի սեմին, հոգեկան մխիթարությամբ պետք է ասենք ու վկայությունը բերենք, որ Մեր աշխատանքը տվեց բավարար արդյունքներ, և կերպարանափոխվեց կարևոր չափով մեր ժողովրդի հոգևոր, բարոյական կյանքի պատկերը այս վերջին քսան և ավելի տարիների ընթացքում և՛ այստեղ՝ Հայաստանի տարածքի վրա, ներքին մեր թեմերում, և՛ թե արտասահմանում:

Մենք աղոթում ենք այս պահին, որպեսզի, ինչպես մեր աղոթքներից մեկում ասվում է, տա Աստված Մեզ ևս մի քիչ ժամանակ, որպեսզի կարողանանք կյանքի կոչել Մեր ապագայի ծրագրերը՝ ի մխիթարություն համայն մեր ժողովրդի և ի բարօրություն և հառաջդիմություն մեր վերածնված մայր հայրենիքի:

Օրհնությո՞ւն աստվածային հայոց հինավուրց մեր ազգին, օրհնությո՞ւն աստվածային մեր վերածնված մայր երկրին, ամենայն հայոց Մայր Հայաստանին, օրհնությո՞ւն աստվածային մեր սուրբ եկեղեցուն, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, մեր նվիրապետական Աթոռներին, մեր համայն հոգեվոր դասուն և համայն հավատացյալ ժողովուրդին այժմ և հավիտյան:

«Շնորհք և սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանսդ: Ամէն:

Քարոզից հետո, Նորին Սրբության նախագահությամբ ատյանում կատարվում է Հարապետական մաղթանք:

Ս. պատարագի ավարտին երկուղած բարեպաշտությամբ սիյուռքահայ ուխտավորներից շատերը սուրբ Հաղորդություն են ստանում Հայոց Հայրապետի ձեռքից:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը ճաշկերույթ է տրվում Հայոց Հայրապետի գահակալության 24-րդ տարեդարձի առթիվ:

Ճաշկերույթին ներկա են լինում տ. Սիոն, տ. Սերովբե, տ. Կոմիտաս, տ. Թորգոմ, տ. Վաչե, տ. Շահե արքեպիսկոպոսները, տ. Արսեն, տ. Ներսես եպիսկոպոսները, տ. Ավագ, տ. Գրիգորիս, տ. Մասիս, տ. Անուշավան (Անթիլիասի միաբան) վարդապետները, տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Ա. Հատիտյանը, Պ. Շահբազյանը, Գ. Քեհյայանը, Երևանի ս. Սարգիս եկեղեցու թեմական եկեղեցական վարչության ատենապետ Վալտեր Արամյանը, Բաքվի եկեղեցական խորհրդի նախագահ Հրանտ Գևորգյանը և ուրիշներ:

Ճաշկերույթին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հրավիրյալների թվում էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տեր և տիկին Արամ Բրազիլյանը՝ Մայամիից, տեր և տիկին Բյուզանդ Փիրանյանը՝ Նյու Յորքից, տեր և տիկին Մելանտոն Ասլանյանը՝ Անվերսից (Բելգիա):

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձը ողջունեցին և Նորին Սուրբ Օծությանը շնորհավորեցին Մայր Աթոռի պայծառության և նրա գահակալի կենաց արևշատության սրտագին բարեմաղթություններով տ. Սիոն, տ. Թորգոմ, տ. Շահե արքեպիսկոպոսները, Վալտեր Արամյանը և տ. Անուշավան վարդապետ Դանիելյանը:

Իր պատասխան խոսքում Հայոց Հայրապետը ջերմ շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին և մանավանդ ողջույնի խոսք արտասանողներին, Իր գահակալության 24-րդ տարեդարձի առթիվ արտահայտված բարեմաղթությունների համար:

Ընդունելության խանդավառությունը ավելացրին տ. Մասիս վարդապետը և տ. Կոմիտաս աբեղան՝ իրենց հայրենասիրական երգերով և դաշնամուրային նվագով:

Ճաշկերույթն ավարտվեց ջերմ մթնոլորտում՝ խմբովին արտասանված Տերունական աղոթքով:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻՆ

Հոկտեմբերի 4-էն 10-ը ժողով կայացաւ Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներու ներկայացուցիչներուն միջև Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի Վեհարանին մէջ։ Ժողովին նպատակը եղաւ բանակցութիւններ վարել վերացնելու համար նուիրապետական երկու Աթոռներու միջև 1956-էն ասդին ստեղծուած տարակարծութիւնները և վերահաստատելու Հայց. առաքելական եկեղեցւոյ ամբողջական միութիւնը.

Մայր Աթոռը ներկայացուցին՝

Գերշ. տ. Սերովբէ արք. Մանուկեան
Գերշ. տ. Կոմիտաս արք. Տէր-Ստեփանեան
Գերշ. տ. Թորգոմ արք. Մանուկեան
Գերշ. տ. Շահէ արք. Աճէմեան
Գերշ. տ. Վաչէ արք. Յովսէփեան

ԱՆՏՐՈՒԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ներկայացուցին՝

Գերշ. տ. Արտաւազդ արք. Թրթռեան

Գերշ. տ. Տաթև եպս. Սարգիսեան

Գերշ. տ. Մեսրոպ եպս. Աշճեան

Տիար Վահէ Սէթեան

Տիար Վարդգէս Տէր-Կարապետեան:

Ժողովի նիստերը փոխնիփոխ վարեցին երկու ատենապետներ՝ գերշ. տ. Սերովբէ արք. Մանուկեան և տ. Արտաւազդ արք. Թրթռեան: Ատենադպրութիւնը կատարեցին՝ գերշ. տ. Թորգոմ արք. Մանուկեան և պրն. Վարդգէս Տէր-Կարապետեան:

Ժողովը ունեցաւ 5 նիստեր, որոնց ընթացքին քննարկուեցան Մայր Աթոռի կողմէ առաջարկուած հինգ կէտերը:

1. Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ընդհանրական հանգամանքը.

2. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կցուած թեմերու իրաւական վիճակը.

3. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրէն թիւ 32 և 33 յօդուածներու վերացումը.

4. Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին և նման կազմակերպութիւններու միակ պատուիրակութեամբ մը ներկայանալու հարցը.

5. Եկեղեցականներու նկատմամբ առնուած պատժական միջոցառումներու ճանաչումը բոլոր թեմերէն ներս:

Եղբայրական ջերմ մթնոլորտի մէջ և Հայց. եկեղեցւոյ միութիւնը իրապէս վերահաստատելու փափաքէն առաջնորդուած ժողովս խմբագրեց բանաձևեր այն հարցերու մասին, որոնց շուրջ դրական արդիւնքներ արձանագրուեցան:

1. Ժողովականները ճամբաներ և լուծումներ փնտրեցին, որոնք կրնան վերացնել թիւր հասկացողութիւնները իրաբանչիւր կաթողիկոսի հանգամանքի և իշխանութիւններուն վերաբերեալ, յայտարարելով Ամենայն Հայոց կաթողիկոսի ընդհանրական Հովուապետի հանգամանքը Հայց. առաքելական եկեղեցւոյ:

2. Ժողովը նոյն ոգիով իր գոհունակութիւնը յայտնեց թիւ 32 և 33 յօդուածներու վերացումի մասին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութենէն, հաւատալով, որ այդ վերացումը ճամբայ կը յարդարէ թեմերու հարցի լուծումին:

3. Վերոյիշեալ թեմերու առնչութեամբ ժողովս կ'ընդունի վերադարձի սկզբունքը 1957 թուականէն առաջ գոյութիւն ունեցող իրաւավիճակին, Վեհափառ Հայրապետներուն թողլով այդ ուղղութեամբ առնուելիք քայլերը:

4. Ժողովը չյաջողեցաւ համաձայնիլ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին միակ պատգամաւորութեամբ ներկայանալու հարցին շուրջ և այս հարցի վերստին քննարկումը թողուց յառաջիկայ ժողովին:

5. Ժողովը միաձայնութեամբ ընդունեց եկեղեցականներու նկատմամբ

առնուած պատժական և կարգազրկման որոշումներու փոխադարձ յարգումին սկզբունքը եկեղեցւոյ բոլոր իշխանութիւններուն կողմէ:

Հայց. եկեղեցւոյ ներքին միութիւնը վերջնականապէս հաստատուելով, ժողովս ցանկալի կը գտնէ, որ Հայց. եկեղեցւոյ բարեկարգութիւնները կատարուին բոլոր նուիրապետական Աթոռներու մասնակցութեամբ:

Ժողովս որոշեց իր աշխատանքներուն արդիւնքը ներկայացնել Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներուն, տնօրինելու համար պարտն ու պատշաճը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ներկայացուցիչները ընդունեցին առաջարկը յաջորդ ժողովը գումարելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հրաւէրով: Յաջորդ ժողովին թուական կը նախատեսուի 1980-ի մարտ ամիսը:

Ժողովականները իրենց կատարած աշխատանքը նկատեցին դրական կարևոր նախաքայլ մը և յոյս յայտնեցին, որ ապագային կայանալիք ժողովներով և փոխանակուելիք նամակներով համաձայնութիւն գոյանայ բոլոր հարցերու շուրջ, յիրագործումն մեր եկեղեցւոյ միութեան և հայ ժողովուրդի միասնականութեան:

ԴԻՒԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ

Ս. Էջմիածին,
12 հոկտեմբեր 1979 թ.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով հոկտեմբերի 3-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ուշ ժամին, Մայր Աթոռ ժամանեց Անթիլիասից պատվիրակությունը Կիլիկյան Աթոռին՝ Մայր Աթոռի պատվիրակության հետ բանակցություններ վարելու և վերացնելու նպատակով 1956 թվականից առ այսօր սփյուռքի հայ եկեղեցու ծոցում հառաջ եկած տարակարծությունները և վերահաստատելու հայ եկեղեցու ամբողջական միությունն ու ներքին խաղաղությունը:

Երևանի օդանավակայանում, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, Անթիլիասի պատվիրակությանը ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին տ. Հուսիկ և տ. Արսեն սրբազանները:

Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատվիրակության կազմում էին տ. Արտավազդ արքեպ. Թրթոյանը՝ պատվիրակության նախագահ, տ. Տաթև եպս. Սարգիսյանը, տ. Մեսրոպ եպս. Աշճյանը, պարոնայք Վահե Սեթյանը և Վարդգես Տեր-Կարապետյանը:

Պատվիրակությունը Մայր Աթոռում իր նեցության օրերին մնաց մայրավանքի նորակառույց վանատուն-հյուրանոցում:

Հոկտեմբերի 4-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Անթիլիասից ժամանած պատվիրակությունը Վեհարանում այցելեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Նրան հանձնելու Կիլիկյան Աթոռի երկու գա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ
(1979, հոկտ. 8)

ՄԻ ՊԱՀ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՑ

հաղալների՝ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի և Ն. Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Բ աթոռակից կաթողիկոսի պաշտոնական նամակն ու հաղորդելու նրանց եղբայրական ողջույնները:

Հայոց Հայրապետը բարի գալուստի խոսքով ողջունեց Կիլիկյան Աթոռի հարգարժան պատվիրակությանը և հաջողություն մաղթեց նրանց առաքելության:

Մի քանի րոպե հետո Հայոց Հայրապետը ընդունեց նաև Մայր Աթոռի պատվիրակության անդամներին, որի կազմում էին տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը՝ նախագահ, տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, տ. Շահե արքեպ. Անեմյանը և տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը:

Հայոց Հայրապետը Տանն Կիլիկիո պատվիրակության անդամներին ներկայացրեց Մայր Աթոռի պատվիրակության անդամներին և հաջողություն մաղթեց երկու պատվիրակությունների աշխատանքներին:

Այնուհետև երկու պատվիրակությունները առանձնացան Վեհարանի երկրորդ հարկում նախատեսված ժողովասրահում, ուր գումարվեցին նիստերը:

Ժողովի դիվանի ատենապետներ ընտրվեցին տ. Սերովբե արքեպ. Մանուկյանն ու տ. Արտավազդ արքեպ. Թրթռյանը, որոնք փոխնիփոխ ղեկավարեցին ժողովները, իսկ ատենադպիրներ՝ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանն ու պրն. Վարդգես Տեր-Կարապետյանը:

Ժողովը հինգ նիստեր գումարեց հոկտեմբերի 4—10 օրերին, որոնց ընթացքում քննարկվեցին Մայր Աթոռի կողմից առաջադրված հետևյալ հինգ կետերը.

1. Ամենայն Հայոց Կաթողիկոսության ընդհանրական հանգամանքը.

2. Կիլիկիո Կաթողիկոսության կցված թեմերու իրավական վիճակը.

3. Կիլիկիո Կաթողիկոսության կանոնագրեն թիվ 32 և 33 հոդվածներու վերացումը.

4. Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին և նման կազմակերպություններու միակ պատվիրակությամբ մը ներկայանալու հարց.

5. Եկեղեցականներու նկատմամբ առնված պատժական միջոցառումներու ճանաչումը բոլոր թեմերեն ներս:

Ժողովի ավարտին, հոկտեմբերի 12-ին, ուրբաթ օրը, պատվիրակությունների կողմից ընդունվեց հատուկ հաղորդագրություն, որը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 17:

Մայր Աթոռում գտնված օրերին Կիլիկյան Աթոռի պատվիրակությունը ներկա եղավ ս. պատարագների և եկեղեցական հանդիսությունների, այցելեց Մայր տաճար ու Հին Վեհարանի պատկերասրահ, Վաղարշապատի պատմական եկեղեցիներն ու վանքերը, ապա ս. Գեղարդ, Սանահին ու Հաղբատ վանքերը, Սարդարապատի թանգարան և Երևանում՝ տեսարժան վայրեր: Պատվիրակությունը Երևանում ներկա եղավ նաև մի քանի թատերական ներկայացումների:

Կիլիկյան Աթոռի պատվիրակության եկեղեցական անդամներ տ. Տաթև և տ. Մեսրոպ սրբազանները ս. պատարագ մատուցեցին Մայր տաճարում և Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ու Բանին կենաց քարոզությամբ մխիթարեցին հավատացյալներին:

Հոկտեմբերի 16-ին, երեքշաբթի օրը, ժամը 14.30-ին, ի պատիվ Մայր Աթոռի և Տանն Կիլիկիո Աթոռի պատվիրակությունների, Վեհարանի սե-

ղանատանը տրվեց հրաժեշտի ճաշկերույթ՝ մասնակցությամբ ավելի քան 25 հրավիրյալների:

Ճաշկերույթի ընթացքում տ. Սիոն և տ. Շահե սրբազանները իրենց ելույթներում նշեցին Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի պատվիրակությունների միջև կայացած հանդիպումների և բանակցությունների հուսադրիչ արդյունքը և իղձ հայտնեցին, որ մոտիկ ապագայում կյանքի կոչվեն ժողովում ընդունված և արձանագրված սկզբունքները՝ ի հաստատումն հայ եկեղեցու ամբողջական միության և ներքին խաղաղության, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Հանուն Կիլիկյան Աթոռի պատվիրակության տ. Արտավազդ արքեպիսկոպոսը, խոսք առնելով, հանուն իր պատվիրակության, շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին՝ իրենց ընծայված եղբայրական հյուրասիրության, ուշադրության և իրենց վայելած բարիքների համար, և սրտագին բարեմաղթություններ կատարեց Ամենայն Հայոց Հայրապետի արևշատության, Մայր Աթոռի պայծառության, հայոց մայր հայրենիքի բարգավաճման և հայ ժողովրդի բարօրության համար: «Մեր Աթոռը,—շեշտեց ճառախոս սրբազանը,—ինքնավախճան հաստատություն մը չէ: Անիկա կա ու կմնա ու կգործե հավերժական մի և անքաժան հայ եկեղեցվո համար»:

Ճաշկերույթի վերջում խոսք առնելով, Հայոց Հայրապետը շեշտեց, որ այդ օրվա սեղանը «սիրո սեղան է՝ տրված երկու պատվիրակություններու պատվին՝ անոնց կատարած աստվածահաճո և ազգաշեն գործի համար: Մեր ցանկությունն է, որ մեր նվիրապետական երկու Աթոռներու միջև զարգանան եղբայրական հարաբերություններ՝ օրինականության, միության և շինարար գործակցության պայմանների մեջ»:

Ապա Հայոց Հայրապետը խնդրեց Կիլիկյան Աթոռի պատվիրակությանը, եղբայրական սիրո Իր ողջույնները հաղորդել Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսին և Տ. Տ. Գարեգին Բ աթոռակից կաթողիկոսին և Իր սրտից բխած բարեմաղթությունները նրանց առողջության և Կիլիկյան Աթոռի պայծառության համար: Աստված իր սուրբ Աջը,—ասաց Հայոց Հայրապետը,—անպակաս ընե մեր նվիրապետական Աթոռներուն, անոնց գահակալներուն և մեր ամբողջ եկեղեցիի և ժողովուրդի վրայեն:

Պատվիրակությունների պատվին տրված ճաշկերույթը ավարտվեց ջերմ մթնոլորտում:

Հոկտեմբերի 17-ին, չորեքշաբթի օրը, Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի պատվիրակությունը հրաժեշտ տվեց Մայր Աթոռին և Հայոց Հայրապետին և լավագույն տպավորություններով վերադարձավ Անթիլիաս:

Հանուն Հայոց Հայրապետի Մայր Աթոռի հյուրերին Երևանի օդանավակայանում ճանապարհեցին տ. Հուսիկ և տ. Արսեն սրբազանները:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի, Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու թեմական խորհրդի հրավերով սեպտեմբերի 15-ին, շաբաթ օրը, Հայոց Հայրապետը հովվապետական այցելությամբ մեկնեց Բաքու:

Այս առիթով Հայոց Հայրապետին ուղեկցում էին վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը, տ. Անանիա վրդ. Արաբաջյանը, Վաչագան Ավետիքյան և Խաչիկ Խարազյան սարկավագները:

Բաքվի օդանավակայանում Հայոց Հայրապետին հանդիսավորապես դիմավորեցին թեմական առաջնորդ սրբազանը, ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Վարդան աբեղա Դիլանյանը, թեմական և եկեղեցական խորհրդի անդամները, քույր եկեղեցիների ներկայացուցիչները և հավատացյալների բազմությունը:

Օդանավակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեցին նաև Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր տիար Աբդուլլա Ախադովը և տեղակալ Սիմեոն Խլեպովոյը:

Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվեց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով:

Առաջնորդ տ. Հուսիկ արքեպիսկոպոսը, հանուն թեմական խորհրդի և Բաքվի հայ հավատացյալ ժողովրդի, ողջունեց Հայոց Հայրապետի օրհնաբեր ժամանումը Բաքու և խնդրեց Նորին Սրբությանը տալու Իր օրհնությունը ներկա հավատացյալներին:

Եկեղեցական արարողությունից հետո Հայոց Հայրապետը առաջնորդվեց Բաքվի «Մոսկվա» հյուրանոց, ուր Նրան հատկացվել էր մասնավոր հարկաբաժին:

Սեպտեմբերի 16-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը Բաքվի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցեց հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզեց՝ բաշխելով Իր հայրապետական օրհնությունները:

Ս. պատարագին ներկա էին բազմահազար հայ հավատացյալներ:

Ս. պատարագի ավարտից հետո, ժամը 17-ին, Նորին Սրբությունը ռուս պրավոսլավ եկեղեցու հրավերով այցելություն է տալիս Բաքվի ս. Ծննդյան ռուսաց եկեղեցուն, ուր աղ ու հացով դիմավորվում է քահանայից դասի և

հազարավոր ռուս և հայ հավատացյալների կողմից: Ռուսաց եկեղեցում ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրվում է հոգևոր համերգ:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, «Մոսկվա» հյուրանոցի ճաշասրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Ադրբեջանի հայոց թեմը տվեց պաշտոնական ճաշկերույթ, որին հրավիրվել էին քույր եկեղեցիների, ինչպես նաև Բաքվի կրոնական այլ դավանանքի ներկայացուցիչներ:

Ընդունելությանը հրավիրվել էին նաև կրոնական գործերի լիազոր տիար Աբդուլլա Ախադովը և տեղակալ տիար Սիմեոն Խլեպովոյը:

Սեպտեմբերի 17-ին, ժամը 12-ին, Հայոց Հայրապետը այցելություն տվեց Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ տիար Ռ. Ա. Հուսեյնովին: Հայոց Հայրապետի և նախագահի մեծահարգ տեղակալի միջև տեղի ունեցավ բարեկամական ջերմ զրույց:

Նույն օրը, ժամը 15-ին, Հայոց Հայրապետը այցելություն տվեց կրոնական գործերի լիազոր տիար Աբդուլլա Ախադովին: Հայոց Հայրապետի և հարգելի պրն. լիազորի միջև ջերմ մթնոլորտում տեղի ունեցավ հետաքրքիր զրույց:

Սեպտեմբերի 17-ին, ժամը 13-ին, Հայոց Հայրապետը այցելություն տվեց Ադրբեջանի Շեյխ Ուլ Իսլամ Հաջի Միր Քեզեն Ֆիր Իբրահիմովին: Երկու կրոնապետների միջև տեղի ունեցավ շահեկան զրույց բարեկամական մթնոլորտում:

Սեպտեմբերի 18-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, հրաժեշտ առնելով, Մայր Աթոռ վերադարձավ լավագույն տպավորություններով:

Հայոց Հայրապետի հովվապետական սույն այցելությունը Բաքվի հայոց թեմին հանդիսացավ հոգևոր միսիթարության և ուրախության սրբազան առիթ Բաքվի հայության համար, ինչպես նաև՝ մի նոր ներդրում ադրբեջանցի և հայ եղբայրական ժողովուրդների բարեկամության ամրապնդման ճանապարհին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
24 սեպտեմբեր 1979 թ.

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ. ՄԻ ՊԱՀ ՊԱՏԱՐԱԳԻՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄԻ ԳԼԽԱՎՈՐ ԱԹՈՌԱՆԻՍՏ — ՄՋԿԻԹԻ ԱՌԱՋ



ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄԻՆ

ԺԱՄԱՆՈՒՄ ԲԱՔՈՒ

Ադրբեջանի հայոց առաջնորդ տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի, Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու թեմական խորհրդի հրավերով, սեպտեմբերի 15-ին, շաբաթ օրը, Հայոց Հայրապետը հովվապետական այցելությամբ մեկնեց Բաքու:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, տ. Անանիա վրդ. Արաբաջյանը, Վաչագան Ավետիքյան և Խաչիկ Խարազյան սարկավագները:

Վեհափառ Հայրապետին Երևանի օդանավակայան ճանապարհելու էին եկել Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբանները՝ գլխավորությամբ տ. Սիոն արքեպ, Մանուկյանի, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիայի Աթոռի միաբան տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանի և տ. Արիս եպս. Ծիրվանյանի:

Նորին Սուրբ Օծությանը բարի ճանապարհ մաղթելու էր եկել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը, տեղակալ տիար Անդրանիկ Հաստրաթյանի հետ:

Տեղական ժամանակով ժամը 10-ին օդային հսկան ուղղություն է վերցնում դեպի եղբայրական Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու:

Մեկ ժամ անց Բաքվի օդանավակայանում Հայոց Հայրապետը դիմավորվում է թեմական առաջնորդ տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի, ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Վարդան աբեղա Դիլանյանի, նույն եկեղեցու գործադիր մարմնի նախագահ տիար Հրանտ Պետրոսյանի, թեմական ու ծխական խորհրդի անդամների և հայ հավատացյալների խուռն բազմության կողմից:

Բաքվի օդանավակայանում են նաև ռուս պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչները՝ գլխավորությամբ Ստավրոպոլի և Բաքվի ռուսաց թեմի առաջնորդ տ. Անտոնի եպիսկոպոսի ներկայացուցիչ տ. Վիկտոր քահանայի:

Նորին Սուրբ Օծությանը բարի գալուստ մաղթելու էին եկել նաև Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր տիար Աբդուլլա Ախսդովը և տեղական Սիմեոն Խլեբովոյը:

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Օդանավակայանից մեքենաների շարասյունը ուղղվում է Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր Հայոց Հայրապետը մուտք է գործում «Հրաշափառ»-ով:

Վերջերս սույն եկեղեցին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, թեմական առաջնորդի և եկեղեցական գործադիր մարմնի ջանքերով լիովին ենթարկվեց վերանորոգության: Եկեղեցու ներքին պատերն ու հատակը մարմարապատվել են՝ ստանալով բարեկարգ տեսք, որը արժանացավ Հայոց Հայրապետի մասնավոր ուշադրությանն ու գնահատանքին:

Եկեղեցում տ. Հուսիկ արքեպիսկոպոսը թեմական խորհրդի և Ադրբեջանի հայ հավատացյալ ժողովրդի անունից ողջունում է Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնաբեր ժամանումը եղբայրական Ադրբեջանի մայրաքաղաք հետևյալ ճառով.

«Վեհափառ Տեր,

Թույլ տվեք հանուն Ադրբեջանի հայոց թեմական և եկեղեցական խորհուրդների, հոգևոր դասի և հայ հավատացյալ ժողովրդի սրտանց բարի գալուստ ասել Ձերդ Սրբությանը, մեր թեմին բերած Ձեր շնորհաբեր այցելության համար:

Ադրբեջանի հայոց թեմը, չորրորդ անգամ լինելով, ողջունում է Վեհափառությանդ Ադրբեջանի եղբայրական հողում, որտեղ ապրում են հարյուր հազարավոր Ձեր հավատավոր զավակները:

Իբրև թեմական առաջնորդ Ադրբեջանի հայոց թեմի, չափազանց երջանիկ եմ զգում ինձ, որ Վեհափառությանդ երեք օրհնաբեր այցելությունները տեղի են ունեցել իմ առաջնորդության տարիներին:

Վեհափառ Տեր,

Որդիական խոնարհությամբ պիտի խնդրեի, որպեսզի տայիք եկեղեցում ներկա հավատացյալներին Ձեր հայրապետական օրհնությունները, որոնք երկար ամիսներ կարոտով և անձկագին սպասում էին այս բախտավոր պահին: Ձերդ Սրբության այս այցելությամբ Ձեր հոտի քրիստոնեական հավատքը առավել պիտի զորանա և գոտեպնդվի, առավել պիտի ամրանա ու սերտանա նրա սերը դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը, նրա հավատարմությունը և նվիրվածությունը դեպի աստվածարյալ Հայրապետդ:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, օրհնեցեք մեզ»:

Վեհափառ Հայրապետը սիրով ընդառաջում է առաջնորդ սրբազանի ցանկությանը և Իր օրհնության հետ միասին տալիս հայրապետական Իր պատգամը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԲԱՔՎԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(15 սեպտեմբերի 1979 թ.)

Գալիս ենք եղբայրական Հայաստանից, հայ ժողովրդի հավատքի կենտրոն ս. Էջմիածնից, Մայր Աթոռից, բերում ենք ձեզ հայրական սիրո ողջույն ու Աստուծո օրհնությունը:

Մենք շատ երջանիկ ենք, որ չորրորդ անգամ լինելով, իբրև Հայոց Հայրապետ, այցելում ենք Բաքու քաղաքը, այցելում ենք Ադրբեջանի մեր եկեղեցիները, հանդիպում մեր ժողովրդին, մեր եկեղեցու զավակներին, որպեսզի նրանք իբրև հայ ազգի հարազատ զավակներ վերանորոգեն իրենց կրոնական զգացմունքները և մնան միշտ հավատարիմ իրենց առաքելական Մայր եկեղեցուն, Հայաստանյայց եկեղեցուն:

Մենք բերում ենք նաև ողջույն և օրհնություն այս բարի երկրին, այս եղբայրական երկրին՝ Ադրբեջանին, և նրա համայն բնակչությանը՝ մաղթանքով բարի, որ Աստված միշտ խաղաղության, միշտ ապահովության, միշտ հառաջդիմության մեջ պահի-պահպանի եղբայրական ադրբեջանյան այս հայրենիքը, որտեղ ադրբեջանցի ազնիվ ժողովրդի կողքին ապրում են նաև մեր ազգի զավակները՝ հաշտ, համերաշխ ու խաղաղ:

Այս առիթով մենք կամենում ենք մեր ջերմ գոհունակությունը և շնորհակալությունը հայտնել այն շատ սիրալիր ընդունելության համար, որ կատարեցին Մեր ժամանումի առիթով ադրբեջանյան պետության բարձրաստիճան ներկայացուցիչները, որոնք ինչպես նախորդ անգամներին՝ գրկաբաց ընդունեցին Մեզ իբրև Հայաստանից եկած եղբայրների:

Բերում ենք նաև ողջույն և օրհնություն ռուս պրավոսլավ քույր եկեղեցու ներկայացուցիչներին, որոնք այսօր և՛ օդակայանում, և՛ առավասիկ այստեղ Մեր կողքին են կանգնած՝ միասին աղոթելու: Մենք ռուս ժողովրդի հետ եղբայր ժողովուրդներ ենք և՝ ռուս պրավոսլավ եկեղեցու հետ քույր եկեղեցիներ՝ սքանչելի եղբայրական հարաբերություններով մեր միջև:

Բերում ենք նաև ողջույն և օրհնություն ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առաջնորդ Սրբազանին, մեր սիրեցյալ գործակցին, հոգևոր հովվին ու նաև այս եկեղեցու վարչության, որ այս վերջին տարիներին շնորհակալ գործ կատարեց, շինարար աշխատանք կատարեց և ավելի գեղեցկացրեց այս աղոթքի Տունը, այս սուրբ եկեղեցին: Շնորհավորում ենք բոլորին և մաղթում, որ Աստված նրանց ուժ, եռանդ պարգևի, որպեսզի նրանք նույն եկեղեցաշեն ոգով շարունակեն իրենց գործունեությունը:

Սիրելի հավատացյալներ, սիրելի ժողովուրդ, դուք այսքան մեծ թվով հավաքվել եք այս երեկո այստեղ: Սիրով դիտում ենք ձեր քաղցր դեմքերը և գոհ ենք, որ վերստին հանդիպեցինք ձեզ հետ տասը տարիներ հետո...

Վստահ ենք, որ լավագույն հիշողություններով պիտի վերադառնանք Հայաստան, ս. Էջմիածին և երբեք պիտի չմոռանանք ձեզ, սիրելի հոգևոր զավակներ Մեր: Միշտ պետք է մնանք աղոթող ձեր բոլորի քաջառողջության, արևշատության և ձեր բոլոր բարի, ազնիվ գործերի հաջողության համար: Ուրախ ենք նաև, որ Մեր այցելության առիթով, մեկ անգամ ևս ավելի պիտի ջերմանան եղբայրական զգացմունքները, որ կան արդեն իսկ այս երկրում հայերի, ադրբեջանցիների, ռուսների և մյուս ազգային փոքրամասնությունների միջև: Մենք իբրև հայ եկեղեցու ղեկավար, պարտք ենք համարում ամեն անգամ ուր որ գնանք, խոսել ժողովուրդների բարեկամության և աշխարհի խաղաղության մասին:

Մենք հոգեպես մխիթարված ենք, որ մեր երկիրը, սովետական երկիրը աշխարհի վրա բարձր է պահում ժողովուրդների եղբայրության դրոշը: Մենք իբրև քրիստոնյաներ երջանիկ ենք, որ մեր պետությունն էլ սիրո և խաղաղության առաջապահ ամենամեծ ուժն է այսօր ամբողջ աշխարհի վրա: Մենք որպես քրիստոնյաներ սրտանց աղոթում ենք, աշխատում, գոր-

ծում և պայքարում հանուն խաղաղության, հանուն ժողովուրդների եղբայրության:

Հավարտ Վեհափառ Հայրապետի քարոզի եկեղեցու երգչախումբը կատարում է «Ամեն հայի սրտից բխած» հուզիչ մաղթանքը:

Եկեղեցական արարողության ավարտից հետո Նորին Սուրբ Օծությունը և Իր շքախմբի անդամները առաջնորդվում են մայրաքաղաքի «Մոսկվա» առաջնակարգ հյուրանոց, ուր Հայոց Հայրապետին հատկացվել էր առանձին մի հարկաբաժին:

ԱՅՑ ԲԱՔՎԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Քիչ հանգիստ առնելուց հետո, Նորին Սուրբ Օծությունը, ընկերակցությամբ տ. Հուսիկ արքեպիսկոպոսի, տ. Գևորգ եպիսկոպոսի, տ. Անանիա և տ. Վարդան վարդապետների ու հայ և այլազգի հավատացյալների, այցելում է Բաքվի 26 կոմիսարների հուշարձան՝ Իր հարգանքի տուրքը մատուցելու Անդրկովկասում հեղափոխության հաղթանակի համար զոհված մարտիկների անմահ հիշատակին:

Այս հուզիչ ատիթով Վեհափառ Հայրապետը, ի ներկայության Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր Աբդուլլա Ախադովի, հետևյալ մակագրությամբ մի ծաղկեպսակ է դնում Բաքվի կոմունարների հուշարձանին.

«Բաքվի 26 կոմունարներին՝ Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսից»:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ

Սեպտեմբերի 16-ին, կիրակի օրը (Վերափոխման 4-րդ կիրակի), առավոտյան ժամը 11-ին, Նորին Սուրբ Օծությունը շքախմբով առաջնորդվում է ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ մատուցելու օրվա հանդիսավոր ս. պատարագը և Բանին կենաց քարոզությամբ միխիթարելու հավատացյալներին:

Եկեղեցին լի էր հայ, ռուս և այլազգի հավատացյալներով: Այստեղ են նաև ռուս պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչները: Բոլորը երկյուղածությամբ հետևում են սրբազան արարողությանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Յաւել ի մեզ, Տէ՛ր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան» աղոթքի բնաբանով.

Սիրելի ժողովուրդ, այս աղոթքը մեր ամենաքաղցր, ամենաբովանդակալից մաղթանքներից մեկն է՝ «Տե՛ր Աստված, ավելացրու, շատացրու մեր հավատքը, մեր հույսը, մեր սերը և մեր առաքինի գործերը»:

Հավատքը մարդկային կյանքի, մեր կյանքի հիմնական ուժն է: Մեր նախնիք դարեր շարունակ միշտ հավատացել են Աստուծո գոյության, Աստուծո զորության, Աստուծո ողորմության:

Մենք այսօր ապրում ենք առաջադեմ ժամանակներ, գիտության և տեխնիկայի ժամանակներ: Այս բոլորը մենք հարգում ենք և ընդունում իբրև մարդկության հարկավոր արժեքներ, ճշմարտություններ և մեծ իրագործումներ: Սակայն այս բոլորից վեր, և այս բոլորով հանդերձ, մենք մնում ենք անշարժ մեր նախնյաց ուխտի վրա, այսինքն մնում ենք հավատարիմ Աստուծո: Իբրև մարդկային էակներ, ինչքան էլ զարգացած լինենք, ինչքան էլ գիտություն ամբարած լինենք, տեսնելով այս հիասքանչ աշխարհը, ուր

մենք ապրում ենք, այս երկրագունդը իր բազում հրաշալիքներով և ամբողջ տիեզերքը անհուն ու ներդաշնակ, հանգում ենք այն եզրակացության, որ չէին կարող այս բոլորը պատահականության արդյունք լինել: Մեր մարդկային միտքը չի կարող ըմբռնել, որ դրանք աննպատակ և պատահական իրողություններ են: Մենք չենք կարող ըմբռնել, որ այս բոլորը գերագույն մի հեղինակ, մի ստեղծարար ուժ չունենան: Մեր նախնյաց այս հավատքի վեմի վրա կանգնած, մենք հավատում ենք Աստուծո գոյության, Աստուծո ստարչագործության և Աստուծո փրկարար նախախնամության: Ահա, սիրելի ժողովուրդ, մեր աղոթքի առաջին մտածումը:

Աղոթքի երկրորդ մտածումը, երկրորդ պատգամն է, որ մենք ամուր պահենք մեր սրտերի մեջ հույսը հավիտենական կյանքի: Մեր, քրիստոնեական հավատքի, ամենահուզիչ, ամենամխիթարիչ պատգամներից մեկն է, որ մենք հավատանք հավիտենական կյանքին: Մենք գիտենք, թե երկրային մեր կյանքը, այս կյանքը, որ ապրում ենք, անցողական է, գիտենք, թե մենք բոլորս մահկանացուներ ենք, ապրում ենք, պիտի ապրենք, բայց մեկ օր էլ մեր աչքերը պիտի փակենք և անցնենք դեպի հավիտենականություն, դեպի կյանքի մյուս ափը, որ մեզ խոստացված է Աստծուց, մեր Տեր Հիսուս Քրիստոսից: Մեր Տերը Հիսուս Քրիստոս Իր սուրբ Ավետարանով բացել է մեր առաջ ճանապարհը մեր հոգիների փրկության, մեր անմահության, մեր հավիտենականության, հավիտենական լույսի, խաղաղության և արդարության աշխարհի մեջ: Ահա մեր քրիստոնեական մեծ հույսը:

Աղոթքում նշված է նաև սիրո գաղափարը՝ «Յաւել ի մեզ, Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս և զսէր»:

Հիրավի Քրիստոսի Ավետարանը սիրո և խաղաղության գիրք է: Սեր և խաղաղություն մարդկանց միջև. ահա քրիստոնեական վարդապետության հիմնական գաղափարներից մեկը: Սեր ասելով պիտի հասկանանք մարդասիրություն, սեր դեպի մեր նմանները, սեր դեպի մեր հարազատները, նաև սեր՝ ոչ միայն դեպի մեր հարազատները, այլ նաև դեպի տարբեր ազգի, տարբեր կրոնների պատկանողները: Ահա քրիստոնեական տիեզերական սիրո ոգին: Տիեզերական սիրո գաղափարի վրա խարսխված է նաև մեր օրերի խաղաղության գաղափարը: Եվ մեր եկեղեցին ու քրիստոնեական բոլոր եկեղեցիները, ինչպես նաև մահմեդական հավատքի մեր եղբայրները, բոլորն էլ մեր օրերին ջանում, աղոթում և պայքարում են հանուն մարդկային սիրո, եղբայրության ամրապնդման և հանուն աշխարհի խաղաղության:

Մենք աղոթում ենք, որ աշխարհի խաղաղությունը և եղբայրությունը ազգերի մնա անսասան, ու մենք փառք տանք Աստուծո, որ այսօր վայելում ենք մենք Հայաստանում, դուք՝ Ադրբեջանում, բարիքները խաղաղ ու համերաշխ կյանքի:

Մայր Աթոռ ս. Էջմիածնից և Մեր հայրական սիրո ողջույնը բոլորիդ անխտիր...

Իր քարոզի վերջում Նորին Սուրբ Օծությունը գոհունակությամբ հիշում է Ադրբեջանի թեմական առաջնորդ տ. Հուսիկ արքեպիսկոպոսի անձնվեր և հոգևոր ծառայությունը, որպես «ժրաջան և կարգապահ» հոգևորականի:

Ապա Վեհափառ Հայրապետը, որպես Իր գնահատանքի ապացույց, առաջնորդ սրբազան հորը նվիրում է Տիրամոր սրբանկարը:

Որպես հայրապետական մասնավոր գնահատանքի նշան, Բաքվի հայոց եկեղեցում երկար տարիներ իր տքնաջան աշխատանքի համար, եկե-

ղեցու հոգևոր հովիվ տ. Վարդան աբեղա Դիլանյանը բացառաբար ստանում է վարդապետական մի լանջախաչ:

Այս առթիվ Հայոց Հայրապետը Բաքվի ս. Գրիգոր Լուսավորիչ հայոց եկեղեցուն նվիրում է երկու ոսկեզօծ գեղեցիկ աշտանակներ:

*
* *

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, ընդունելով ռուս պրավոսլավ եկեղեցու հրավերը, Նորին Սրբությունը Իր շքախմբով այցելում է Բաքվի ս. Երրորդություն ռուսական եկեղեցի: Եկեղեցու մուտքի առջև, հազարավոր ռուս և հայ հավատացյալների ներկայությամբ, ռուս հոգևորականաց դասը՝ գլխավորությամբ եկեղեցու հովիվ տ. Վիկտոր քահանայի, աղ ու հացով դիմավորում է Հայոց Հայրապետին:

Տեղի է ունենում կարճ եկեղեցական արարողություն, որի ավարտից հետո տ. Վիկտոր քահանան հանում Ռուսաց Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի և տեղի ռուս հավատացյալների, ողջունում է Վեհափառ Հայրապետի ներկայությունը ռուսական ս. Երրորդություն եկեղեցում ու խընդրում Նրա հայրապետական օրհնությունները ներկա հավատացյալ ժողովրդին:

Այս առթիվ, որպես հիշատակ, ռուս հավատացյալ ժողովրդի անունից Հայոց կաթողիկոսին է հանձնվում գեղեցիկ մի ուղեգորգ:

Իր պատասխան խոսքում Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը նախ և առաջ շեշտում է դարավոր այն բարեկամությունը, որ 11-րդ դարից սկսյալ գոյություն ուներ հայերի և ռուսների միջև: Ապա Նորին Սրբությունը ի մասնավորի կանգ է առնում Իր և ռուս եկեղեցու հովվապետների՝ Ալեքսի և Պիմեն Պատրիարքների միջև եղող անկեղծ, եղբայրական բարեկամության վրա: Շեշտելով Ադրբեջանի հողի վրա ապրող հայ և ռուս ժողովուրդների համատեղ, խաղաղ կյանքը, նրանց եղբայրական ու բարեկամական հարաբերությունները, Վեհափառ Հայրապետը մաղթում է, որ այդ բարեկամությունը ոչ միայն չխամրի, այլև տարիների, դարերի ընթացքում է՛լ ավելի սերտ և ամուր դառնա:

Որպես պատասխան նվեր Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը ռուս եկեղեցուն է նվիրում հայկական ձեռագրերից քաղված մի արքանկար, որն ընդունվում է մեծ երկյուղածությամբ և երախտագիտությամբ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Երեկոյան ժամը 20-ին, «Մոսկվա» հյուրանոցի շքեղ ճաշասրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Ադրբեջանի հայոց թեմի կողմից տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին հրավիրվել էին բազմաթիվ հայ հավատացյալներ, թեմական և ծիսական խորհուրդների անդամներ, քույր եկեղեցիների և կրոնական այլ դավանանքի ներկայացուցիչներ:

Ընդունելությանը հրավիրվել էին նաև Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր տիար Աբդուլլա Ախադովը և տեղակալ տիար Սիմեոն Խլեբովոյը:

Պաշտոնական ճաշկերույթը բացվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Ճաշկերույթի բացումը կատարում է տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և ողջունում Հայոց Հայրապետի օրհնաբեր գալուստը Ադրբեջանի հայոց տիրախնամ թեմ: Ծեշտելու համար Վեհափառ Հայրապետի այս՝ թվով չորրորդ գալուստի կարևորությունը Բաքու, սրբազան հայրը մեկ առ մեկ թվում է բոլոր այն կրոնական համայնքների ներկայացուցիչների անունները, ովքեր իրենց ներկայությամբ պատվել են Նորին Սրբության գալուստը:

Այնուհետև տ. Հուսիկ արքեպիսկոպոսը խոսում է Վեհափառ Հայրապետի անձնավորության մասին, ընդգծելով այն, որ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը այսօր հայտնի է աշխարհին որպես մեծանուն մի անձնավորություն, ոչ միայն շնորհիվ Իր հոգևորական բարձր աստիճանի, այլև Իր հայրենասիրական, խաղաղության համար մղվող Իր գործունեության: Սրբազան հայրը հիշում է այս առթիվ ՍՍՀՄ կառավարության այն բարձր պարգևը՝ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանը, որին Նորին Սրբությունը արժանացավ անցյալ տարի՝ Իր յոթանասունամյակի կապակցությամբ:

Սրբազան հոր ելույթից հետո խոսք են առնում Բաքվի կրոնական հարանվանությանց և դավանությունների ներկայացուցիչները, այդ թվում Անդրկովկասի մահմեդականների հոգևոր առաջնորդ Շեյխ Ուլ Իսլամ Հաջի Միր Քեզեն Ֆիր Իբրահիմովը, ռուս պրավոսլավ եկեղեցու անունից՝ տ. Վիկտոր քահանան, մկրտչական եկեղեցու պրեսբիտեր Նիկոլայ Կրոպիչը, հրեական համայնքի ռաբի Խանկա Բենիամինովը, մալական համայնքի հովիվ Իվան Նովոսելովը, ադվենտիստական համայնքի վերապատվելի Իվան Ժիտնիկովը և ուրիշներ:

Իրենց ելույթներում բոլոր ճառախոսներն էլ միահամուռ կերպով ընդգծեցին այն մեծ համակրությունը, որ այսօր ի սիրտս աշխարհի վայելում է խաղաղասեր, խաղաղության, եղբայրության և ժողովուրդների միջև ջերմ բարեկամության մեծ պաշտպան ազգիս Վեհափառ կաթողիկոսը:

Ապա խոսք է առնում Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր Աբդուլլա Ախադովը, որը Հայոց Հայրապետին ողջունում է հետևյալ ճառով.

«Նորին Սուրբ Օծությունը հանդիսանում է ժամանակակից հոգևոր մեծագույն առաջնորդներից մեկը: Ուստի այսօր այս սեղանի շուրջ ամեն մի խոսք նվիրված է Նորին Սրբությանը: Եվ ես քաջ իմանալով այն մասին, որ Նորին Սրբությունը շատ է սիրում մարդկանց միջև եղող բարեկամությունը, ցանկանում եմ խնդրել ձեզ, որպեսզի բաժակ բարձրացնենք հանուն մարդկանց միջև բարեկամության:

Մեր երկրում ժողովուրդների միջև բարեկամությունը շատ բարձր է գնահատվում: Այդ բարեկամությունը հանդիսանում է մեր հասարակության հիմնական սյուներից մեկը, որը մեզ համար անչափ թանկ է: Այդ բարեկամությունը լավագույնս է դրսևորում իրեն նաև մեր միջև եղող կրոնական հարաբերություններում: Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց կաթողիկոսի գալուստը Բաքու բարեկամության մի լավ ապացույց է: Այստեղ, այս սեղանի շուրջ այսօր հավաքվել են մալական, մկրտչական, հրեական, մահմեդական, ռուս պրավոսլավ և հայ համայնքների ներկայացուցիչները: Դա պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ մեր երկրում հաղթականորեն քայլող բարեկամությունը իր բարերար ազդեցությունն է թողել նաև կրոնական կյանքի վրա:

Մեր հանրապետություններում բոլոր կրոնական համայնքները բարեկամ են միմյանց: Եվ այդ բարեկամությունը սրտովն է մեր թանկագին Հյուրի՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի:

Ես առաջարկում եմ բաժակ բարձրացնել այդ մեծ մարդկային զգացմունքի համար: Այդ զգացումը զարդարում է մեր կյանքը:

Երկար տարիների կյանք Ձեզ, Ձերդ Սրբություն, և հանդիսակի այցելություններ Ադրբեջան»:

Վերջում, պատասխան և շնորհակալական խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

Մենք գոհություն պետք է տանք Աստուծո, որ գտնվում ենք ձեր մեջ, այս ջերմ մթնոլորտում: Հիշում ենք սաղմոսերգուի խոսքը. «Զի՞ բարի, կամ զի՞ վայելուչ զի բնակեն եղբարք ի մասին»: Այսպիսի մթնոլորտ է ստեղծված այժմ այստեղ: Շնորհակալություն բոլորին, ովքեր իրենց ներկայությամբ պատվեցին Մեզ: Շնորհակալություն նախ այն իմաստուն խոսքերի համար, որ արտասանեց քիչ առաջ Ադրբեջանի Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի լիազոր մեծահարգ տիար Աբդուլլա Ախադովը: Շնորհակալություն մեր սիրեցյալ եղբոր՝ Շեյխ Ուլ Իսլամի շատ քաղցր խոսքերի համար, ինչպես նաև իր հրավերի համար, որ վաղը այցելենք իր կենտրոնատեղին: Սիրով պիտի գանք ձեզ մոտ վաղը: Շնորհակալություն Մեր բոլոր հոգևոր եղբայրների խոսքերի համար, որ լսեցինք այստեղ: Թող Աստված ամրացնի, զորացնի և ծաղկեցնի մեր եղբայրությունը:

Այս սեղանը սիրո և եղբայրության սեղան է: Եվ երբ խոսում ենք սիրո և եղբայրության մասին, Մեր մտածումը ավելի ընդարձակվում և տարածվում է մեր ամբողջ երկրի, սովետական աշխարհի վրա:

Այդ զգացումը Մենք առավել ունեցանք երեկ, երբ մեծահարգ Ախադովի ընկերակցությամբ այցելեցինք 26 կոմունարների հուշարձան: Նրանք զոհվեցին ոչ միայն հեղափոխական մեծ գաղափարի համար, այլ նաև եղբայրության գաղափարի համար: Եվ իսկապես, այնտեղ զոհվածների մեջ կան և՛ ադրբեջանցիներ, և՛ ռուսներ, և՛ վրացիներ, և՛ հայեր:

26 կոմունարների այս հուշարձանը մարմնավորում է սովետական եղբայրության, համերաշխության գաղափարը, որը մեզ համար շատ թանկ է, հատկապես մեզ՝ փոքր ժողովուրդներիս համար:

26 կոմունարների մահվան շրջանի, ինչպես նաև երկրորդ համաշխարհային պատերազմի իրադարձությունները, մեկ անգամ ևս զորեղ կերպով մեր գիտակցության մեջ ամրապնդում են, մեր՝ կովկասյան և ընդհանրապես սովետական ժողովուրդների բարեկամության պատգամը: Ահա թե ինչու համար Մենք կրկին անգամ ընդգծում ենք մտածումը, որ սովետական ժողովուրդների եղբայրությունը հատկապես թանկագին է կովկասյան փոքր ժողովուրդների համար: Մեր երջանկությունը միայն այս ճանապարհով է, որ կարող է զարգանալ: Եվ եթե մեզանից ոմանք երբեմն մոռանան այս ճշմարտությունները, նրանք պետք է այցելեն Բաքու և խոնարհվեն 26 կոմունարների հիշատակի առաջ: Մենք իբրև հոգևորականներ մեր պարտքն ենք համարում աղոթել, որպեսզի միշտ հզոր, անբաժան և ամբողջական

ԲԱՔՎԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԾԱՂԿԵՊՍԱԿ Է ԶԵՏԵՂՈՒՄ ԲԱՔՎԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

պահպանվի սովետական ժողովուրդների եղբայրությունը՝ ռուս ժողովրդի գլխավորությամբ:

Աղոթել աշխարհի խաղաղության և բոլոր ժողովուրդների բարեկամության համար՝ դա Մեր և բոլորիս սրբազան պարտքն է:

Մաղթում ենք ձեզ բոլորիդ Աստուծո օրհնությունը, ուժ և եռանդ, որպեսզի ամեն մեկդ շարունակի իր կյանքում և իր աշխատանքի մեջ արձանագրել նորանոր հաջողություններ:

Կեցցե սովետական ժողովուրդների բարեկամությունը:

Կեցցե Ադրբեջանը:

Ճաշկերույթի ընթացքին գեղարվեստական ճոխ ծրագրով հանդես է գալիս Բաքվի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քառաձայն երգչախումբը՝ խմբավար Լևոն Բաբայանի գլխավորությամբ:

Պաշտոնական ճաշկերույթը ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ
(Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի)

Այսօր, կեսօրվա ժամը 12-ին, Նորին Սուրբ Օծությունը, ուղեկցությամբ տ. Հուսիկ արքեպիսկոպոսի, տ. Գևորգ եպիսկոպոսի և թարգման տ. Անանիա վարդապետի և ընկերակցությամբ Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր Աբդուլլա Ախադովի, պաշտոնական այցելություն է տալիս Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ մեծահարգ տիար Քեմալ Ասադի Հուսեինովին:

Հայոց Հայրապետի և մեծարգո նախագահի տեղակալի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, որի ընթացքում Հայոց Հայրապետը գոհունակությամբ խոսում է Ադրբեջանում ապրող հայ և տեղացի ժողովուրդների բարեկամության մասին, ինչպես նաև Իր՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի հոգևոր առաքելության մասին՝ հոգը տանելու եղբայրական Ադրբեջանում ապրող Իր հոտի հոգևոր կարիքների: Ապա Նորին Սուրբ Օծությունը արտահայտում է Իր բարի ցանկությունները և մաղթանքները՝ ուղղված ադրբեջանցի ժողովրդին և մեծարգո նախագահի տեղակալին անձնապես:

Իր պատասխան խոսքում մեծահարգ Ք. Ա. Հուսեինովը Հայոց Հայրապետին ծանոթացնում է եղբայրական Ադրբեջանի հանրապետության վերջին տարիների ընթացքում ձեռք բերած մշակութային, տնտեսական նվաճումների հետ: Ապա գնահատանքի խոսքով և ուրախությամբ արտահայտում է իր գոհունակությունը, որ Հայոց Հայրապետը այցի է եկել Ադրբեջան եղբայրական Հայաստանից:

Ընդունելությունն անցնում է ջերմ, բարեկամական մթնոլորտում:

ԿՐԿԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեկ ժամ անց, կեսօրվա ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը պատասխան այցելություն է տալիս Անդրկովկասի մահմեդականների հոգևոր առաջնորդ Շեյխ Ուլ Հաջի Միր Քեզեն Ֆիր Իբրահիմովին, ուր ընդունվում է մեծ ջերմությամբ և խանդավառությամբ:

Շեյխ Ուլ Հաջի Իբրահիմովը Նորին Սրբությանը ծանոթացնում է այն բարենորոգությունների հետ, որ վերջերս կատարվել են իր կենտրոնատե-

ղիում, որոնց շինարարական աշխատանքներում իր եղբայրական օգնությունն է ցույց տվել նաև Բաքվի հայոց եկեղեցին: Այս առիթով Վեհափառ Հայրապետը արտահայտում է Իր անսահման գոհունակությունը:

Ապա երկու կրոնապետերի միջև տեղի է ունենում բարեկամական զրույց, որի վերջում կատարվում է նվերների փոխանակություն:

Երեկոյան ժամը 20-ին «Մոսկվա» հյուրանոցի ճաշասրահում Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը ընտանեկան նեղ շրջանակում հուզիչ հանդիպում է ունենում Ադրբեջանի հայոց թեմական և ծխական խորհուրդների, Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախմբի անդամների հետ, որոնք Նորին Սրբության օծյալ ձեռքից, որպես գնահատանքի նշան, աջահամբույրով ստանում են զանազան նվերներ: Ապա Վեհափառ Հայրապետը տալիս է Իր հայրական պատգամները՝ որ նրանք անշահորեն և նվիրված կերպով ծառայեն հայոց եկեղեցուն՝ նրա բարգավաճման, ծաղկման և փառքի համար:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԼԻԱԶՈՐ ՏԻԱՐ ԱԲԴՈՒԼԼԱ ԱԽԱԴՈՎԻՆ

Հաջորդ օրը, սեպտեմբերի 18-ին, երեքշաբթի, կեսօրվա ժամը 15-ին, Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը Իր վերջին պաշտոնական այցելությունն է տալիս Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր տիար Աբդուլլա Ախադովին՝ իր պաշտոնատեղիում: Նորին Սրբությունը Իր շնորհակալություններն է հայտնում հարգելի լիազորին Ադրբեջանում գտնվելու օրերին Իրեն ցույց տրված ջերմ ընդունելությունների համար՝ մաղթելով քաջառողջություն մեծարգո Ախադովին և իր աշխատակիցներին:

Իր պատասխան խոսքում տիար Ախադովը հայտնում է իր պատրաստակամությունը՝ բոլոր հարցերում օգնություն և օժանդակություն ցուցաբերելու Ադրբեջանի հայ եկեղեցական համայնքներին, առաջնորդ սրբազան հորը և հոգևոր հովվին: Իր խոսքի վերջում տիար Աբդուլլա Ախադովը Հայոց Հայրապետին խնդրում է, որպես հարգանքի նշան, ընդունել Լինչի «Հայաստան» հնատիպ գրքի երկհատորյակը ռուսերեն լեզվով, որը Վեհափառ Հայրապետի կողմից ընդունվում է մեծ գոհունակությամբ:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սեպտեմբերի 19-ին, չորեքշաբթի օրը, Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, հրաժեշտ առնելով Բաքվից, անմոռաց տպավորություններով վերադարձավ Մայր Աթոռ:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հովվապետական սույն այցելությունը Ադրբեջանի հայ համայնքին մի նոր ներդրում հանդիսացավ Ադրբեջանի հանրապետության մեջ բնակվող հայ և այլազգի ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում, ինչպես նաև՝ հոգևոր մեծ միխթարություն Ադրբեջանի հայ հավատացյալների համար:

«Յիշեա զմեզ, Տէր, ընդ հաճոյս ժողովրդեան քոյ, եւ այց արա մեզ ի փրկութեան քում» (Սաղմոս ՃԵ 4):

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ



ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ, ՔԱՐՈԶ ԵՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ, Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔՈՒՄ

Վեհափառ Հայրապետի գահակալության 24-րդ տարեդարձի ուրախ առիթով, հոկտեմբերի 7-ին, ս. Հռիփսիմե տաճարում և վանքում կատարվեցին հանդիսություններ:

Այս տարի ս. Հռիփսիմյանց կույսերի սրբազան մասունքների նորագույն հայտնաբերումը, ինչպես արդար կերպով հաստատում է Հայոց Հայրապետը, «հանդիսանում է հայրենի սրբազան հողի վրա ոչ միայն ս. Հռիփսիմյանց կույսերի նահատակության պայծառ ապացույցը, այլ նաև նյութական վկայությունը հայոց քրիստոնեական հավատքի վավերականության»:

Ուստի մեկ անգամ ևս Հռիփսիմյանց կույսերի նահատակության պանծացման և նրանց երբեք չխամրող հիշատակի ոգեկոչման առթիվ Հայոց Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ սույն թվականի հոկտեմբերի 7-ին, կիրակի օրը, ժամը 11-ին, ս. Հռիփսիմե վանքի տաճարում մատուցվում է հանդիսավոր ս. պատարագ:

Օրվա պատարագիչն էր ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և տեղի ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուչ տ. Շահե արքեպիսկոպոս Անճեմյանը:

Ժամը 12-ին Հայոց հայրապետը եկեղեցական թափորով մուտք է գործում տաճար: Եկեղեցին լի էր աղոթասեր ժողովրդի հոծ բազմությամբ:

Եկեղեցու երկու դասերում տեղ էին գրավել տ. Սիոն, տ. Սերովբե, տ. Թորգոմ, տ. Վաչե արքեպիսկոպոսները և տ. Արսեն, տ. Գևորգ, տ. Արիս եպիսկոպոսներն ու Ավագ վարդապետ Ասատուրյանը:

Սուրբ պատարագին ներկա էին նաև Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակության անդամները, այդ թվում տ. Արտավազդ արքեպ. Թրթռյանը, տ. Տաթև եպս. Սարգիսյանը, տ. Մեսրոպ եպս. Աշճյանը և պարոնայք Վահե Սեթյանն ու Վարդգես Տեր-Կարապետյանը:

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում էր ս. Հռիփսիմե տաճարի նորակազմ քառաձայն երգչախումբը՝ ղեկավարությամբ Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանի:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Շահե արքեպիսկոպոսը հավուր պատշաճի խոսում է հետևյալ քարոզը.

Տ. ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՔԱՐՈԶԸ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՏԱՃԱՐՈՒՄ
(7 հոկտեմբերի 1979 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն»:

«Որք զանձինս իւրեանց տաճար մաքրեցին, Հոգւոյդ Քում սրբոյ»:

«Անոնք իրենց անձերը մաքուր տաճարներ ըրին Քու սուրբ Հոգիիդ»:

Այսպես, այս բառերով կխոսի շարականագիրը, հայ հոգևոր երգի ներշնչյալ հեղինակը, այն կույսերու մասին, որոնց նահատակությունը հետևեցավ հռիփսիմե կույսի նահատակության:

Այսօր կեցած ս. Հռիփսիմեի անունը կրող հրաշալի այս տաճարին մեջ, կեցած մեր եկեղեցվո Մեծ Վեհապետին և Ամենայն Հայոց կաթողիկոսին դիմաց, կուզենք անգամ մը ևս ոգեկոչել այն մեծ նահատակությունը, որ իբրև առաջին լույս, իջավ դեպի Հայաստան աշխարհ, բանալու համար լույսի ճամփան, որով Գրիգոր Լուսավորիչ պիտի քրիստոնեացներ ամբողջ ազգ մը:

Հռիփսիմեն մեր հիշողության մեջ գեղեցիկ այն կինն է, որ փախած Հռոմի ճոխութենեն և անոր պալատներու հրապույրեն, փախած ոսկիեն ու արծաթեն, ու մարդուն նվիրած բոլոր հարստություններեն, եկած էր Հայոց աշխարհ, Վաղարշապատ մայրաքաղաքին մոտ, ճիշտ այստեղ, ուր կեցած ենք այսօր, իր ընկերուհիներին հետ, իր կյանքը նվիրելու համար միայն ու միայն աղոթքի և սրբակեցության: Սակայն մինչև այստեղ հալածեց զինք Հռոմեական թագավորին սերը և ուզեց գրավել զայն Աստուծո սերեն, տանելու համար մարդկային սիրո գգվանքներուն:

Ու կըսե մեր պատմությունը, թե սուրբ կույսը երկարորեն դիմադրեց և բնավ չուզեց երկնային գանձերը փոխել երկրային գանձերով, այլ նախընտրեց նահատակությունը, չարչարանքը և սուրին մահը ու իր այդ դիմադրության մեջ անգամ մը ևս սրբացավ և ինքզինքը ըրավ տաճար Աստուծո հոգիին:

Այսօրվան մարդոց շատերուն համար և մեծամասնության համար, թերևս անհասկընալի թվի, թե ինչպես կան մեծ հոգիներ, որոնք իրենց մարմինը կհաջողին պարպել մարդկային բոլոր ցանկություններեն և իրենց հոգին ընել գանձարանը երկնային արժանիքներու, այն աստիճան արհամարհելով մարդկային բոլոր հրապույրները և հարստությունները, որ իրենց սրբությունը պահելու համար կրնան նահատակվիլ:

Մեզի շատերուս համար անծանոթներ են այլևս այն մեծ սուրբերը, այցված երկնային լույսերե, որոնք չեն տեսներ այլևս իրենց աչքերով ուրիշ բան, քան Աստուծո փառքը և Անոր նվիրվելու ամբողջական սերը:

Մեզի շատերուս համար մոռացության տրված է այլևս, թե այդ սուրբերուն և այդ նահատակներուն անձուններուն վրա է, որ հիմնված է մեր եկեղեցին: Որովհետև մեր եկեղեցին մեր հայու հոգիին համար քարեղեն շինվածք ըլլալե առաջ, մեր նահատակներու և հերոսներու տապանները ամփոփող քարե կայլակներ են կթված մեր երկրի ալքերեն և արմատ նետած մեր հողին մեջ, իբրև հիմքը մեր հավատքին և փաստը Աստուծո հանդեպ մեր անսակարկ սիրույն:

Սիրելի հավատացյալներ, այսօր սուրբ պատարագը կմատուցանենք Հռիփսիմեի այս տաճարին մեջ, որովհետև անգամ մը ևս, մեր եկեղեցվո պատմության մեջ, կբացվի լուսավոր էջ մը, որովհետև այստեղ, անգամ մը ևս կհայտնվին անձունները այն սուրբերուն, Հռիփսիմյանց կույսերուն, որոնք իբրև սերմ նետված էին մեր երկրի խորքերում՝ ծաղկելու համար իբրև հավատք, ծաղկելու համար իբրև եկեղեցի, ծաղկելու համար իբրև սեր աստվածային:

Այստեղ, ի հայրապետության Վազգեն Ա կաթողիկոսի, Տերը անգամ մը ևս իր մատը ուղղեց դեպի Արարատյան դաշտ՝ ցույց տալու համար, թե հոն կհանգչին անձունները և մասունքները անոնց, որոնք եղան առաջին տաճարները սուրբ Հոգիին Հայաստան աշխարհին մեջ: Եվ Աստված մեր հայրերուն անգամ մը ևս կուզե հիշեցնել մեզի, թե մենք ժողովուրդ մըն ենք, որ գիտե նահատակվիլ այն գաղափարներուն և այն հավատքին համար, որ միակ երաշխիքն է մեր գոյության:

Հայուն ապրելու տենչը և այդ ապրումին համար մեռնելու իր կամեցողությունը կզատեն զինք ոչ միայն իր ինքնությամբը, այլ զայն պահելու և զայն իրագործելու իր կամքով և խորհուրդով:

Մեր նահատակները, սիրելի հավատացյալներ, չեն մեռած՝ մեռած ըլլալու համար, այլ միայն իրագործելու գաղափարը մեր եկեղեցիին: Ինչ որ հայ եկեղեցին ցարդ կատարած է և կկատարե, պահանջքն է իր հոգիին, վասնզի Ավետարանը մագաղաթ և գիր ըլլալե առաջ մեր կուրծքերուն տակ հայ սիրտ է: Մեր տաճարները քարեղեն կառույցներ ալ ըլլալե առաջ մեր սուրբերու և հերոսներու վկայարաններ են: Առանց մեր եկեղեցվո այդ զգայության հազիվ թե հայ ենք մենք:

Մեծ երազի մը իրագործումն է հայ եկեղեցին: Լուսավորչի առաքելական հոգիին հաղթանակը, Խորվիրապի արհավիրքներեն չվախցող, տարիներով պայծառ այդ տեսիլքին հաղթանակը, որ գիտցավ երկրորդ անգամ Աստվածորդին իջեցնել մեր աշխարհ, միասին հորինելու համար մեր հոգեկան և մարմնավոր շենքը:



ՄԻ ՊԱՀ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՈՒԽՏԻ ԵՎ ԱՂՈԹՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ
(1979, հոկտ. 7)

ՄԻ ՊԱՀ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՈՒԽՏԻ ԵՎ ԱՂՈԹՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ
(1979, հոկտ. 7)

Հայ եկեղեցին հայուն տրված մեծագույն ժառանգությունն է, որ իր մեջ գիտցավ ամփոփել նահատակներու աճյուններեն ծնող լույսերը իբրև գիր և գրականություն, իբրև ճարտարապետություն և կոթող, բայց մանավանդ իբրև հայ հոգիի դիմադրության երկար և դարավոր պատմություն:

Հայ եկեղեցին երաշխավորությունն է տրված մեզի, որ մենք կշարունակենք ըլլալ ժողովուրդը Աստուծո, և Աստված չէ լքած առաջին քրիստոնյա հայ ժողովուրդը և ազգը:

Այսօր կըսենք այս բաները, որովհետև Հռիփսիմյանց աճյուններու հայտնությունը կզուգադիպի քսանչորրորդ տարեդարձին, մեր Հայոց և մեր եկեղեցիի սիրեցյալ Հայրապետի գահակալության: Այն Հայրապետին, որ գյուղացիին և բանվորին, գիտնականին և մտավորականներուն հետ Իր օրը խառնեց գիշերվան, հայրենիքի վերականգնումին հետ՝ իրականացնելու համար վերելքը հայ եկեղեցիին: Ան դրոշակակիրը եղավ հայրենիքի կանչին, որպեսզի մեր ժողովուրդին սիրտը կապված պահե հայ հողին և աչքերը սևեռած պահե հայու մեծ տեսիլքներուն:

Հայր ամենեցուն: Ան Իր սրտի անվերջանալի սահմաններուն մեջ առավ ամբողջ հայությունը, հայրենիքի և արտասահմանի, առանց խտրության՝ Իր սիրո ջերմությամբ շաղախելու զանոնք և անոնց մեջ ամրապընդելու զգացումը մեր ժողովուրդի միասնականության: Տառապեցավ Ան, և չհասկըցվեցավ Իր կոչը՝ տեսնելու հայերն ամբողջ եղբայրացած, ոչ միայն փորձանքի և դժվարության օրերուն, այլ մանավանդ հաջողության և ազգային կյանքը վերականգնելու իրենց ճամփուն վրա:

Քսանչորս տարիներ Ան ապրեցավ հայրենիքի փառավոր առաջխաղացքը ապահովված խաղաղությամբ և անդորրությամբ, որուն մեջ կապրի այսօրվան Հայաստանը, և գիտցավ առաջնորդել Իր հոտը հավատքի ամրության և ինքնության՝ իր իսկ ինքնության հավատարմությամբ:

Եվ այսօր, երբ հայուն հողը կբանա իր ծոցը աշխարհի լույսին՝ վեր բերելու համար քրիստոնեության արշալույսին նահատակված Հռիփսիմյանց կույսերու ոսկորները, չենք կրնար փառք չտալ հայու այն Աստուծուն, որ անգամ մը ևս կըսե մեզի, թե պետք է որ ինչպես անցյալին, այնպես ալ ներկային մեր առաջնորդներուն մեջ տեսնենք տաճարները այն սուրբ Հոգիին, որ առաջնորդեց մեր եկեղեցին և գիտցավ մեր նահատակությունները վերածել մեծ հաղթանակներու:

Այսօր նահատակվող կույսերու ոսկորներուն հայտնությունը թող ըլլա կոչ մը բոլորիս՝ միանալու և բոլորվելու մեր Հայրապետին շուրջ, Անոր ծաղկյալ մականին ներքև՝ միասին երթալու և միասին իրագործելու այն բոլոր տեսիլքները, որ այսօրվան մեր կյանքին նպատակներն են:

Միայն ու միայն Մայր Աթոռ ս. Էջմիածնի և անոր գահակալով անձնավորված մեր միության և մեր ուժերուն միացումին մեջ պետք է տեսնենք Ամենայն Հայոց Հայրապետության մեծ առաքելությունը և կոչումը:

Նայինք մեր Հայրապետին և մաղթենք ի սրտե, որ երկար ու երկար տարիներ շնորհե Զինք մեզի հայուն Աստվածը՝ իբրև հովվապետ բարի, իբրև կաթողիկոս Ամենայն Հայոց, իբրև խորհրդանիշ և իբրև առաջնորդող մեր այն բոլոր իղձերուն և երազներուն, որոնց տագնապով կտոչորի մեր հոգեկանությունը միշտ: Եվ որ, սակայն, առանց մեր ուժին, առանց մեր կամքին, առանց մեր նեցուկին դժվար թե կարենա իրագործել իրեն համար այդքան սիրելի հայ ժողովուրդի միությունը:

Այդ զգացումներով և այդ մեծ երազով ի սրտե կբերենք մեր սիրեցյալ Հայրապետին որդիական մեր հարգանքը, անսակարկ մեր սերը և մեր աղոթքը առ Աստված, որ միշտ կանգուն և բարգավաճ մնա մեր հայրենիքը, որ միշտ խաղաղ և անվտանգ շարունակե ան իր կյանքը, որ միշտ իր հրապույրին քաշե մեր հայրենասեր ժողովուրդը, և այնտեղ միշտ շարունակեն ղողանջել Մայր տաճարի զանգերը ու անոր արձագանքեն՝ մեր վերականգնած և վերանորոգած մյուս եկեղեցիին զանգակները՝ ի փառս Աստուծու, ի պայծառություն մեր ժողովուրդին, ի շինություն մեր ազգին և ի վերակենդանություն մեր նահատակներուն, որոնց ոսկորներուն ձայնովը կօրհնենք զանուն Ամենասուրբ Երրորդության այժմ և հավիտյանս: Ամեն:

Հավարտ ս. պատարագի եկեղեցական թափորը՝ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, նահատակ կույսերին ձոնված «Անձինք նուիրեալք» շարականի երգեցողությամբ, ուղղվում է դեպի տաճարի արևվելյան կողմում ամփոփված Հռիփսիմյանց կույսերի տապանները և այն շրջապատելով՝ սկսում է «Գոհաբանական աղոթք»-ի արարողությունը:

«Ցառակաց», «Ցեսայեայ մարգարէէ» և «Պօղոսի առաքելոյն ի Հռոմայեցւոց թղթոյն» ընթերցվածներից հետո կարդացվում են Մատթեոսի Ավետարանից մի քանի հատվածներ:

Այնուհետև խմբովին երգվում է «Ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ ասացեալ

վասն Հռիփսիմեանցն...» «Աստուած մեծ, հզօր և փառաւորեալ» քարոզը, որին հաջորդում է «Գոհանամք զՔէն» աղոթքը: «Յիշատակ Քրիստոսի» ս. Հռիփսիմյանց հիշատակին նվիրված Մանկունք շարականի երգեցողությունից հետո կարդացվում է «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքը: Սարկավագի «Սուրբ ճգնաւորքն աղաչեսցուք» քարոզին հետևում է «Պատկիչ սրբոց» աղոթքը:

«Գոհաբանական աղոթք»-ի արարողությունը ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական «Հայր մեր»-ով:





ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում ավիրական և գեղեցիկ ավանդույթ է դարձել, որ ամեն տարի, աշնանամուտին, հոգևոր ճեմարանի ուսումնական նոր տարեշրջանը իր դռները բաց է անում Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվող բացման հանդեսով:

Սույն թվականի սեպտեմբերի 14-ին, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում 35-րդ տարեշրջանի՝ 1979—1980 ուսումնական տարվա բացման հանդիսությունը:

Հանդիսության նախագահական սեղանին, Հայոց Հայրապետի կողքին, տեղ էին գրավել Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի միաբանության անդամ տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը, տ. Արիս եպս. Շիրվանյանը և հոգևոր ճեմարանի նորընտիր տեսուչ, Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

Հանդիսությանը հրավիրված էին նաև Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և այլ հյուրեր:

Հանդիսությունը սկսվում է Վեհափառ Հայրապետի «Հայր մեր»-ով, որից հետո հանդիսականները հոտնկայս ունկնդրում են Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի դասախոս տ. Անանիա վրդ. Արաբաջյանը Ավետարանից ընթերցում է «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9):

Ավետարանի ընթերցումից հետո հոգևոր ճեմարանի Գ լսարանի ուսանող Հայկ Չիլինգարյանը Նարեկից կարդում է ս. Հոգուն ուղղված աղոթք-աղերսը (Բան ԼԴ):

Հանդիսության բացման խոսքից առաջ հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը, ղեկավարությամբ ճեմարանի երաժշտության դասախոս տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանի, կատարում է «Ճեմարանի քայլերգ», «Աշակերտք Քրիստոսի», «Որք զարդարեցին», «Էջ Միածինն ի Հօրէ» և «Հայրապետական մաղթանք» խմբերգերը:

Ապա հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը հանդիսությունը բաց է անում տեսչի իր առաջնեկ հետևյալ զեկույցով.

«Աստուծո ողորմությամբ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը բացում է այսօր իր դռները՝ սկսելու համար 1979—80 ուսումնական տարին:

Մայր Աթոռ ս. Էջմիածնին առընթեր հնուց ի վեր միշտ գործել է հոգևոր մի դպրոց՝ պատրաստելու համար հայ եկեղեցու հոգևոր անդաստանի նվիրյալ մշակներ:

Հոգևոր ճեմարանը շարունակում է կատարել իր այդ սրբազան առաքելությունը նաև մեր օրերում՝ թևակոխելով իր նոր պատմության վերջին շրջանի 35-րդ տարին:

Ուսումնական այս տարին սկսում ենք նոր խանդավառությամբ և եռանդով: Նորին Սրբության բարեհաճ տնօրինությամբ և թելադրանքով տեղի ունեցան հոգևոր

ճեմարանի ուսումնադաստիարակչական ծրագրերի մի շարք փոփոխություններ:

Հոգևոր ճեմարանը, պատմական իր դերին հավատարիմ, պիտի շարունակի նույն ոգով կատարել իր առաքելությունը: Այն է՝ պատրաստել իր կոչման և հոգևոր ծառայության նվիրված գիտակից հոգևորականներ, որոնք գիտություն ամբարելուց բացի ունենան նկարագրի կայունություն, նվիրագործության ոգի, հայրենասիրություն և հավատարմություն մեր ազգային-եկեղեցական ավանդույթներին:

Եթե պատմության դժվարին շրջաններում ս. Էջմիածնի հոգևոր դպրոցը պատվով է կատարել իր պարտականությունները, ապա այսօր, հայրենական վերածննդի այս խոստումնալից օրերին, ավելիով պետք է կատարի իր այդ պարտականությունները:

Հոգևոր ճեմարանի այդ իրագործումի բարձր պատիվը այսօր մեզ է վիճակված:

Հարգարժան դասախոսներ, դուք այս սուրբ հաստատության բազմավաստակ մըշակներն եք և տարիներ շարունակ սիրով և նվիրումով եք աշխատել նրա վերելքի համար: Հետ այսու ևս ձեզանից սպասվում է, որ դուք ներդնեք ձեր կարելին և անկարելին նույն ազնիվ նպատակի համար: Ձեր աշխատանքի արդյունքը կլինի ձեր վարձատրությունը:

Սիրելի ուսանողներ, հոգևոր ճեմարանում ձեզ տրվելու է ամեն ինչ և փոխարենը ձեզանից պահանջվելու է միայն մի բան, նախ կարգապահություն և ապա սովորել, սովորել, սովորել:

Վեհափառ Տեր,

Շնորհակալություն հայտնելով Ձերդ Սրբությանը, նախ իմ անունից այն մեծ վստահության համար, որ ցուցաբերեցիք իմ նկատմամբ՝ ինձ հանձնելով հոգևոր ճեմարանի տեսչի դժվարին և պատասխանատու պաշտոնը, և ապա դասախոսության կոչված մյուս հոգևոր եղբայրներիս անունից, խոստանում ենք, որ Աստուծո օգնականությամբ և Ձեր օրհնությամբ կաշխատենք արդարացնել մեզ շնորհված հայրապետական այդ բարձր վստահությունը:

Ձերդ Սրբություն, օրհնեցեք ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը, ուսումնական այս նոր տարվա սեմին, որպեսզի հունձքը լինի բարի և առատ»:

Այնուհետև տեսուչ հայր սուրբը որդիական ակնածանքով հրավիրում է Վեհափառ Հայրապետին Լուսավորչի գահից օրհնելու հոգևոր ճեմարանի նվիրական հարկից ներս կատարվելիք ուսումնադաստիարակչական աշխատանքները:

Վեհափառ Հայրապետը սիրով տալիս է օրհնության Իր հետևյալ խոսքը.

«Այս տարի ևս, ուսումնական տարեշրջանի սկզբնավորության, Մենք սիրով ենք եկել այստեղ, բերելու հայրապետական օրհնություն մեր հոգևոր ճեմարանին, տեսչության, դասախոսական կազմին, պաշտոնեության և ուսանողներին:

Ահավասիկ 24-րդ անգամն է, որ Մենք նման հանդիսության ներկա ենք լինում և ամեն անգամ հաճույքով ենք գալիս, նույնիսկ հուզումով և միշտ նորանոր ներշնչումներով և սպասումներով: Իրոք, ինչպես հաճախ ասված է և Մենք էլ միշտ ընդգծում ենք, մի անգամ ևս շեշտենք, որ մեր եկեղեցու կենդանությունը, մեր եկեղեցու ապագան կախում ունի մեծ չափով այն նոր սերունդներից, որոնք դաստիարակվում են հոգևոր ճեմարանում և մյուս մեր կրոնական դպրոցներում՝ Երուսաղեմում և Անթիլիասում:

Մոտավոր անցյալում, մինչև առաջին համաշխարհային պատերազմ, մեր եկեղեցին այդ տեսակետից բավական բարձր մակարդակի հասած էր, և այստեղ Էջմիածնում՝ Գևորգյան ճեմարանի շրջանում, և Արմաշի վանքում և այլ հոգևոր վանական դպրանոցներում, որոնք փայլուն անձնավորություններ պատրաստեցին մեր եկեղեցու համար:

Ավա՜ղ, սակայն, հատկապես Մեծ եղեռնը և այլ վերիվայրումներ պատճառ եղան, որ այդ հոգևոր կրթության ընթացքը կանգ առնի բավական երկար տարիներ շարունակ:

Բոլոր բնագավառներում նոր սերունդներ դաստիարակելու, պատրաստելու հարցը առաջնահերթ կարևորություն ունի: Բայց գուցե առավել չափով հոգևոր ասպարեզի մեջ, եկեղեցու կյանքում:

Մենք հիշում ենք մի իմաստուն ասացվածք, Հեռավոր Արևելքի ժողովուրդների փորձից: Համաձայն այդ ասացվածքի վկայվում է. «Եթե ուզում ես մեկ տարով ապահովվել՝ մշակիր բրինձ, եթե ուզում ես տասը տարով ապահովվել՝ ծառ տնկիր, եթե ուզում ես հարյուր տարով ապահովվել՝ մարդ պատրաստիր»:

Մենք ուզում ենք, որ մեր եկեղեցին ապահովենք ոչ թե մի տարով, ոչ թե տասը տարով, այլ առնվազն հարյուր տարով: Եվ հետևաբար առաջնահերթ կարևորություն ունի Մեզ համար մարդ պատրաստելու գործը, այսինքն մեր եկեղեցու համար ապագա հոգևոր մշակներ պատրաստելու աշխատանքը: Եվ Մենք մանավանդ ուզում ենք Մեր հոգևոր նոր սերունդները դաստիարակել երեք ուղղությամբ: Նախ՝ գիտություն պետք է ջամբենք նրանց, այսինքն գիտելիքներ, այն ամենը, որ ավանդ-

վում է համաձայն մեր ուսումնական ծրագիրների: Երկրորդ՝ Մեր նպատակն է երիտասարդներին օժտել հոգևոր բարոյական նկարագրով և երրորդ՝ հայրենասիրական ոգով: Այս երեքն էլ հավասարապես կարևոր են և միասին կազմում են մի ներդաշնակ ամբողջություն:

Հույս ունենք, որ նաև հառաջիկա տարի հոգևոր ճեմարանը այս ուղղությամբ պիտի շարունակի գործել, հետզհետե առավել բարի արդյունքներով: Եվ ինչպես նշեց հոգեշնորհ տեսուչ հայր սուրբը, այս տարի Մենք որոշ նոր միջոցառումների դիմեցինք, որոշ բարեփոխումների ձեռնարկեցինք և կարծում ենք, որ այդ բոլորը պիտի նպաստեն մեր ընդհանուր գործի հառաջընթացքին:

Առաջին հերթին պատասխանատու աշխատանքի կոչեցինք մեր երիտասարդ նոր ուժերին, ոմանք արտասահմանից նոր վերադարձած և բավականին պատրաստված: Այսպես՝ ճեմարանի տեսչական պաշտոնը վստահեցինք տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանին, իսկ իբրև ուսմասվար՝ տ. Եզնիկ քահանա Պետրոսյանին: Նաև մի շարք երիտասարդ միաբաններ Մայր Աթոռիս ստանձնեցին կրոնագիտական և եկեղեցական երաժշտության դասեր, որոնք ճեմարանի հարկի ներքև պիտի աշխատեն երկար տարիների փորձ ունեցող վաստակաշատ մեր դասախոսների կողքին:

Մենք միշտ հավատք ունեցել ենք դեպի երիտասարդությունը: Երբեմն կարծվում է, որ մարդիկ եթե ծերանան կամ սկսեն ծերանալ, երիտասարդների նկատմամբ իրենց հավատքը սկսում է: Հաճախ ծերերը քննադատում են երիտասարդներին: Շատ հաճախ էլ երիտասարդները ծերերին են քննադատում: Իհարկե, երբեմն սխալվում են թե՛ ծերերը և թե՛ երիտասարդները: Բոլոր դեպքերում, սակայն, այնուամենայնիվ պետք է հավատք ընծայել երիտասարդության, նույնիսկ եթե երբեմն հուսախաբություններ ենք ունենում: Դա ընդհանուր կանոնը չի խախտում: Եվ շատ կարևոր է, որ ինչպես ամեն ասպարեզներում, նաև մեր եկեղեցական կյանքում աշխատող ուժերը թարմանան, նորերը գան, որովհետև այդպես է, որ մենք պիտի կարողանանք հետզհետե սրբագրել մեր թերություններն ու տկարությունները և նոր հեռանկարներ բաց անել, նոր եռանդով, նոր ոգեշնչումներով, նոր լավատեսությամբ, շինարար նոր իրագործումներով:

Այս բոլորը երիտասարդությանը բնորոշ հատկանիշներ են, և Մենք աղոթում ենք, որ նոր պաշտոնների կոչված երիտասարդները այդպիսի ոգեշնչումով, այդպիսի ավյունով, այդպիսի լավատեսությամբ, այդպիսի անձնազոհությամբ նվիրվեն իրենց գործին, որը սուրբ գործ է, պատվաբեր գործ, հիշատակության արժանի գործ է: Եվ որևէ գաղափարական մարդու համար գերագույն երջանկություն է՝ իր աշխատանքի բարի արդյունքները տեսնել ու վայելել:

Մաղթում ենք, որ մեր դասախոսական կազմը, և՛ տարեցները, և՛ երիտասարդները, վերանորոգված ուժերով, նոր խանդավառությամբ ու լավատեսությամբ աշխատանքի անցնեն, և Մենք տարվա վերջին ուրախությունը ունենանք արձանագրելու փայլուն հաջողություններ:

Իսկ ուսանողներին ուղղելով Մեր խոսքը, պիտի ցանկայինք, որ նրանք լինեն նախ և առաջ աշխատասեր, բարեխղճությամբ սովորեն իրենց ավանդված դասերը, չծուլանան երբեք. երկրորդ՝ անձանձրույթ կերպով հետևեն եկեղեցական երաժշտության դասերին և եկեղեցուց ներս բոլոր հոգևոր արարողություններին: Երրորդ՝ ինչ որ քիչ առաջ էլ հիշեցինք, դա բարոյական նկարագրի հարցն է, որ Մեզ համար վճռական նշանակություն ունի: Մի հոգևորական, որ բարոյական նկարագիր չունի, նա կլինի կեղծ հոգևորական ու կձախողի իր ասպարեզի մեջ:

Բարոյական նկարագրի կերտումի համար մենք բոլորս պետք է աշխատենք հետևողական կերպով:

Իսկ դուք, սիրելի ուսանողներ, այս բոլորը լավ պետք է հասկանաք և ձեր հոգին բանաք դաստիարակչական մեր բոլոր միջոցառումներին առաջ, անկեղծությամբ, որպեսզի դուք էլ օգնեք մեզ, որպեսզի վերանան, սրբագրվեն ձեր թերությունները, և դուք դառնաք կատարյալ նկարագրով երիտասարդներ:

Եվ վերջապես Մենք ցանկանում ենք նաև, որ դուք լինեք հայրենասեր, ինչ որ Մեր հիմնական առաքելության անբաժանելի մասը կկազմի:

Վստահ ենք, որ դուք ապրեն իբրև հայաստանցի երիտասարդներ, նաև արտասահմանից եկողները՝ ձեր բովանդակ հոգով կապված եք մեր ազգի բոլոր ապրումների հետ, մեր ազգի բոլոր սպասումների հետ, մեր ազգի բոլոր երազների հետ:

Ահավասիկ, այս տրամադրություններով, այս ոգով, այս լավատեսությամբ բաց ենք անում դռները հոգևոր ճեմարանի և աղոթում, որ Տերը մեզի մնա միշտ օգնական և պահապան և հաջողությամբ պսակի մեր աշխատանքները, մեր ձեռաց գործերը:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ, այժմ և միշտ: Ամէն»:

Հոգևոր ճեմարանի վերաբացման հանդիսությունը ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

* *
*

Այս տարի հոգևոր ճեմարանից ներս կատարվեցին տեսչական կազմի փոփոխություններ: Հանգստյան կոչվեց ճեմարանի նախկին տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը, որը շուրջ 20 տարիներ անձնվիրաբար և ձեռնհասորեն ճեմարանի հարկի տակ կատարեց կարևոր աշխատանք, որպես տեսչի պաշտոնակատար և վերջին տարիներին՝ որպես տեսուչ:

Այս տարի Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Գերագույն հոգևոր խորհրդի որոշումով ճեմարանի տեսուչ նշանակվեց Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը, իսկ ուսմասվար՝ տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը, որը նոր էր վերադարձել Աթենքից՝ համալսարանական կրթություն ստացած:

Հարկ եղավ այս տարի վերանայել ճեմարանի ուսումնադաստիարակչական ամբողջ ծրագիրը: Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ այդ ծրագիրը վերանայվեց այս առթիվ կազմված մասնավոր ուսումնական հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկվել էին տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը (տեսուչ), տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը (ուսմասվար), տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը (նախկին տեսուչ), տիար Արթուն Հատիտյանը և տիար Պարգև Շահբազյանը, որպես ավագ և վաստակավոր դասախոսներ:

Հանձնաժողովը բարեխղճորեն քննության առավ իրեն հանձնարարված հոգևոր ճեմարանի ուսումնադաստիարակչական նոր ծրագիրը, որի մեջ հավելվել էին նաև նոր առարկաներ՝ ըստ տեսչի և ուսմասվարի առաջարկության:

Ուսումնական այս նոր ծրագիրը հանձնաժողովի կողմից ներկայացվեց Վեհափառ Հայրապետին և հետ քննության արժանացավ Նորին Սուրբ Օծության հավանության:

Սեպտեմբերի 8-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը Վեհարանում բարեհաճեց ընդունել հոգևոր ճեմարանի տեսչական նոր կազմին և այս տարվա դասախոսներին:

Նորին Սրբությունը շնորհավորեց հոգևոր ճեմարանի տեսչական նոր կազմը, դասախոսներին, կատարեց մանկավարժական օգտակար թելադրություններ և հաջողություն մաղթեց նրանց:

Հանդիպման ժամանակ ավագ դասախոս Արթուն Հատիտյանը, հանուն դասախոսական կազմի, երախտագիտություն հայտնեց Հայոց Հայրապետին՝ ճեմարանի նկատմամբ Նրա միշտ ցուցաբերած հայրական հոգատարության համար և շնորհավորելով նոր տեսչին և ուսմասվարին՝ խոստացավ զորավիգ լինել նրանց հոգևոր ճեմարանից ներս ուսումնական աշխատանքների Է՛լ ավելի արդյունավորության համար:

Այս բոլոր միջոցառումներից հետո, սեպտեմբերի 15-ին, շաբաթ օրը, հոգևոր ճեմարանի հարկից ներս, կրկին հնչեց ավանդական առաջին զանգը՝ ազդարարելով 1979—1980 ուսումնական տարվա սկիզբը, և ճեմարանի հարկի տակ սկսվեցին դասախոսությունները:

ՎԱՀԱԳՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՎԵՏԻՔՅԱՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ, ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնում է Կիսլովոդսկ, մոտ մեկ ամիս տեղի «Կրասնըե կամնի» առողջարանում հանգստանալու համար:

Այդ առիթով Նորին Սրբությանը ուղեկցում է Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը:

* * *

Նույն օրը Իտալիայից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Միլանի հայոց հոգևոր հովիվ տ. Սարգիս քհն. Սարգիսյանը:

* * *

Օգոստոսի 3-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռ է այցելում հյուրաբար Սովետական Հայաստանում գտնվող Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ մեծահարգ Ստանկո Տոդորովը՝ տիկնոջ հետ:

Հարգարժան հյուրին Վեհարանում, հանուն Վեհափառ Հայրապետի, ընդունում են Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Մեծահարգ նախագահի և Մայր Աթոռի բարձրաստիճան հոգևորականների միջև տեղի է ունենում ջերմ զրույց: Այնուհետև, այցելելով Մայր տաճար, դիտելով մայրավանքի շրջափակը, հուշակոթողները և թանգարանը, հարգելի հյուրը լավագույն տպավորություններով հեռանում է Մայր Աթոռից:

* * *

Օգոստոսի 5-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Վարդավառի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Լոնդոնից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած տ. Հայկազուն աբղ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո» (Մարկ. Բ 5) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 9-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռի միաբանները մեկօրյա շրջապտույտի են մեկնում դեպի Ամբերդ:

*
* *

Օգոստոսի 12-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Վրաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է «Օրհնութիւն խաղողոյ»:

*
* *

Օգոստոսի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն հանգուցելոց»:

*
* *

Օգոստոսի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ, մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ, Նավապետ բարի լեր անձին իմոյ ապաւէն» (ապաշխարության շարական) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 24-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Կիսլովոդսկում շուրջ մեկ ամիս հանգստանալուց հետո, Մայր Աթոռ է վերադառնում Ամենայն Հայոց Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 25-ին, շաբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետին են այցելում Ֆրանսիայի Հայ բարեգործական ընդհանուր միության Մարսելի մասնաճյուղի երիտասարդների 20 հոգուց բաղկացած խումբը՝ ղեկավարությամբ Բարեգործականի երիտասարդաց խմբի ատենապետ Ժիրայր Քեթանենյանի:

Հայ երիտասարդներին Վեհարանում հայրաբար ընդունում է Վեհափառ Հայրապետը, բաշխում Իր հայրական օրհնությունները, մաղթելով, որ նրանք ուր էլ որ լինեն, իրենց սրտերում միշտ վառ պահեն պաշտամունքը հայ եկեղեցու և սերն ու կապը հայրենիքի:

Այնուհետև, ժամը 14.30-ին, միաբանական սեղանատանը ֆրանսահայ երիտասարդ ուխտավորների պատվին տրվում է ողջերթի ճաշկերույթ:

*
* *

Օգոստոսի 26-ին, կիրակի.—Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ ասաց Աստուած, արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան» (Ծննդ. Ա 26) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Ֆրանսիայից և Հունաստանից մայր հայրենիք ժամանած հայ ուխտավորներ՝ շուրջ 100 հոգի:

Հայ ուխտավորները նախ Մայր տաճարում ներկա են գտնվում ս. պատարագի արարողությանը, այնուհետև ս. պատարագից հետո Վեհարանում ընդունվում են Վեհափառ Հայրապետի կողմից և ստանում Նրա հայրական օրհնությունները:

*
* *

Օգոստոսի 29-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում մոտ մեկ ամիս Կիրովականի «Հայկական Արտեկ» պիոներական ճամբարում հանգստացող սփյուռքահայ պատանիների խումբը՝ շուրջ 60 հոգի, որոնք մայր հայրենիք են եկել Ֆրանսիայից, Անգլիայից, Կանադայից, Հունաստանից, Ավստրիայից, Սիրիայից, Իրաքից և Քուվեյթից:

Պատանի հայորդիներին Վեհարանում հայրական գուրգուրանքով ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ բաշխելով նրանց հայրական Իր օրհնությունները:

Վերջում սփյուռքահայ պատանի ուխտավորները Վեհափառ Հայրապետից աջահամբույրով հուշանվերներ են ստանում:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Օգոստոսի 30-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում սփյուռքահայ ուսուցիչների մի խումբ՝ եկած 14 գաղթօջախներից, որոնք մայր հայրենիք են ժամանել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպած ամենամյա դասընթացներին մասնակցելու համար:

Սփյուռքահայ ուսուցիչներին Վեհարանում սիրալիր ընդունում է Ամենայն Հայոց Հայրապետը և նրանց բաշխում Իր հայրական օրհնություններն ու հորդորները և գնահատում նրանց շնորհակալ ծառայությունը սփյուռքի մատաղ սերնդի հայեցի դաստիարակման ազնիվ գործունեության համար:

*
* *

Սեպտեմբերի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք» (Սաղմ. ՃԻԱ 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 3-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Սիրիայի Հալեպ և Դամասկոս քաղաքներից մայր հայրենիք ժամանած ուխտավորների 30 հոգուց բաղկացած մի խումբ:

*
* *

Սեպտեմբերի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Բեյրութից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո միաբանության անդամ տ. Ղևոնդ արքեպ. Ճեպեյանը, որպես հյուրը Մայր Աթոռի:

*
* *

Սեպտեմբերի 7-ին, ուրբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում 45 հոգուց բաղկացած լիբանանահայերի մի խումբ:

Հայ ուխտավորներին Վեհարանում հայրաբար ընդունում է Հայոց Հայրապետը և նրանց բաշխում հայրական Իր օրհնությունները:

*
* *

Սեպտեմբերի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Փառք քեզ Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի Տէր փառք քեզ» մաղթանք-բնաբանով քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Լիբանանից, Եգիպտոսից, Պարսկաստանից, Ֆրանսիայից և Ամերիկայից մայր հայրենիք ժամանած շուրջ 200 հայ ուխտավորներ, որոնք Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո Վեհարանում ընդունվում են Հայոց Հայրապետի կողմից:

*
* *

Սեպտեմբերի 11-ին, երեքշաբթի.—Այսօր, ժամը 14-ին, Վեհարանում Նորին Սրբությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Հովսեփի Պարսամյանին է ներկայացնում ներքին թեմերի թեմական առաջնորդներին, Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության և մայրավանքի ղեկավար պաշտոնեության անդամներին:

Վեհափառ Հայրապետը այս առթիվ մի ունգամ ևս ողջունում և հաջողություն է մաղթում նորընտիր հարգելի պրն. նախագահին՝ նրա հայրենանվեր գործերի ճանապարհին:

Հանդիպմանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը այս առթիվ տրվում է ճաշկերույթ, որի ընթացքում ողջույնի և շնորհավորության

ջերմ խոսքեր են ասում Վեհափառ Հայրապետը, տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Անթիլիասի Կիլիկյան Աթոռի միաբան տ. Ղևոնդ արքեպ. Ծեպեյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի նախագահ դոկտ., պրոֆ. Վարազդատ Հարությունյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր պրն. Արթուն Հատիտյանը:

Վերջում շնորհակալական պատասխան խոսքով հանդես է գալիս տիար Ռուբեն Պարսամյանը:

*
* *

Սեպտեմբերի 14-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռ այցելեցին Վիեննայից մայր հայրենիք ժամանած մի խումբ ուխտավորներ:

Հայ ուխտավորները Վեհարանում ընդունվեցին Հայոց Հայրապետի կողմից և աջահամբույրով ստացան Նրա հայրական օրհնությունները:

Ուխտավորներին ուղեկցում էր Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

*
* *

Սեպտեմբերի 16-ին, կիրակի.—Խաչվերաց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Կանադայից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Արիս եպս. Շիրվանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ» (Ա Կորնթ. Ա 18) բնաբանով:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է «Թափոր խաչվերացի»:

*
* *

Սեպտեմբերի 17-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն հանգուցեալ ննջեցելոց»:

*
* *

Սեպտեմբերի 19-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Անգլիայի հայրապետական պատվիրակ և հոգևոր առաջնորդ տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

*
* *

Սեպտեմբերի 22-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում 30 հոգուց բաղկացած ֆրանսահայերի մի խումբ, որը Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում աջահամբույրով ստանում է Հայոց Հայրապետի օրհնությունը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Իրաքից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Իրաքի հայոց թեմի առաջնորդական տեղապահ տ. Ավագ վրդ. Աստուրյանը:

*
* *

Սեպտեմբերի 23-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Ներսես եպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ, որ հնչէ կամ իբրև զձընձղայս, որ ղողանջեն (Ա Կորնթ. ԺԳ 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Սեպտեմբերի 24-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Նիստին հրավիրված էր նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

*
* *

Սեպտեմբերի 25-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում տեղի է ունենում դա-

սախոսություն, որի համար հրավիրված էր ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող, բեյրութահայ գրող և հասարակական գործիչ Արամ Սեփեթջյանը:

Դասախոսության թեման էր «Լիբանանահայ գաղութի դերը սփյուռքի հայ կյանքում և սփյուռքահայ գրականությունը՝ վերջին 60 տարիների ընթացքում»:

Վերջում հարգարժան դասախոսը պատասխանում է ուսանողների տված հարցերին:

* * *

Հոկտեմբերի 5-ին, ուրբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանում տեղի է ունենում դասախոսություն, որի ընթացքում ֆրանսիացի հայագետ Ժան Պիեռ Մահեն խոսում է «Հայագիտությունը Ֆրանսիայում» թեմայի շուրջ:

Վերջում հարգարժան դասախոսը պատասխանում է ուսանողների տված հարցերին:

* * *

Հոկտեմբերի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երանի՜ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» (Մատթ. Ե 7) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ Հաճնի հերոսամարտում զոհված հայ մարտիկների հիշատակին:

* * *

Հոկտեմբերի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, ժամը 15.30-ին, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի վերատեսուչ տ. Շահե արքեպ. Աճեմյանը հոգևոր ճեմարանում հանդիպում է ունենում ուսանողների հետ, նրանց խոսում Երուսաղեմի հայոց վանքի և դպրոցի մասին, իսկ վերջում մտերմիկ հարցազրույց է ունենում ուսանողների հետ:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Նիստին ներկա էին նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և տ. Շահե արքեպ. Աճեմյանը:

* * *

Հոկտեմբերի 18-ին, շաբաթ.—Տօն սրբոց Թարգմանչաց վարդապետացն մեծաց.

Այսօր Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տաճն Կիլիկիո Աթոռի միաբան տ. Մեսրոպ եպս. Աշճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Նմանեալ Մովսիսի տէր վարդապետ, բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ, որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ» (Թարգմանչաց շարական) բնաբանով:

* * *

Հոկտեմբերի 14-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տաճն Կիլիկիո Աթոռի միաբան տ. Տաթև եպս. Սարգիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը (Վեհափառ Հայրապետի քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

* * *

Նույն օրը Ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

* * *

Հոկտեմբերի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հավուր պատշաճի:

* * *

Հոկտեմբերի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 28-ին, կիրակի.—Գիւտ խաչի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաքաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Խաչ քո երկրի մեզ ապաւէն» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 30-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները մեկօրյա շրջապտույտի են մեկնում ս. Գեղարդ վանք և Գառնի պատմական վայրերը:

*
* *

Հոկտեմբերի 31-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՊԱՐՍԱՄՅԱՆԸ ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ՝ ԾՐՋԱՊԱՏՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ ԵՎ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՎ

ՓԻԹԵՇԹ ՔԱՂԱՔԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ



ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

31. ԱՄՈՎՍ

Թեև Ամովսի գիրքը յոթերորդ տեղը կը-գրավե մարգարեական գիրքերու շարքին մեջ, սակայն ժամանակագրական տեսակետե առաջինն է անոնց մեջ: Որով Ամովսին կպատկանի անկապտելի փառքը ռահվիրան հանդիսանալու գրող մարգարեներու, որոնք իրենց գիրքերուն մեջ Աստուծո բնության և կամքի մասին ընդարձակ և խոր տեղեկություններ տված են և բարոյական օրենքներու և սկզբունքներու պարտադրականությունը շեշտած են:

Ամովս ինքզինքը և իր մարգարեական կոչումը սա կարճ և պարզ բառերով կներկայացնե իր գիրքին մեջ. «Ես ոչ մարգարե էի և ոչ որդի մարգարեի. այլ ՀՈՎԻՎ էի և թուփ քաղող. և առավ զիս Տերը հոտեն և ըսավ ինձի. Գնա և մարգարեացիր իմ Իսրայել ժողովուրդիս վրա» (Է 14—15): Գրքին սկիզբը կհաստատվի որ մարգարեացած է «Հրեաստանի-Երուսաղեմի-Ողիա թագավորին և Իսրայելի-Սամարիո-Հերոբոամ-Երկրորդի որով», այսինքն Ք. Ք. 760—750 թվականներուն: Թեև Երուսաղեմի թագավորին սահմաններեն կուգա, բայց կմարգարեանա Սամարիո թագավորին սահմաններում մեջ, հատկապես Բեթելի մեջ, որ հյուսիսային թագավորության կրոնական կենդրոնն էր:

Իր ժամանակին կտիրե համեմատաբար խաղաղ շրջան մը և նյութական բարգավաճություն, որուն անխուսափելի հետևանքը կըլլա բարքերու ապականություն և կրոնական այլասերում: Մարդիկ կմոռնան ճշմարիտ Աստվածը և կուռքերու կերկըրպագեն. հարստությունը կկենդրոնանա մեծամեծներուն ձեռքը, որոնք կհարստահարեն և գերիի պես կաշխատացնեն աղքատները:

Ամովս հարստահարությանց և կուապաշտության դեմ է որ կբարձրացնե իր ձայնը և պայքար կհայտարարե: Բեթելի քուրմը մարգարեին քարոզությունը օրվան թագավորին ընատառման կհանձնե (Է 10—13). բայց կերևի թե չկրցան լռեցնել մարգարեն, որ կշարունակե իր ընկերային արդարության պատգամները, և իր սպառնալիքները անուղղաներու՝ հանուն Աստուծո:

Գրքին ոճը պարզ և ընկարագեղ է: Օրինակ, իր մարգարեանալու պարտականության ստիպողականությունը կնմանցնե առյուծի մռնչյունին. «Եթե առյուծը մռնչե, ո՞վ չի սարսիր, եթե Տերը խոսի՝ ով չի մարգարեանար»: Իսրայելի մնացորդացին հազիվ հազ ճողոպրիլը թշնամիին ձեռքեն կնմանցնե հովիվի մը, որ հազիվ երկու ոտք կամ ականջ մը կազատե առյուծի բերանեն, որ խլած է իր ոչխարներեն մեկը» (Գ 12): Վերջապես Աստուծո խոսքին նվաղությունը կնմանցնե սովի (Ը 11—12):

Հավիտենական Աստուծո մեծությունն է, որ ամենեն ավելի շեշտ կտանա Ամովսի գրության մեջ: Ամեն ինչ կտեսանե, ըլլա բնության կամ պատմության մեջ, Աստուծո

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Է—ԺԱ-ից, 1978 թվականի № № Ա—Գ-ից և 1979 թվականի № № Բ-ից և Դ—Է-ից:

մեծության լույսին տակ: Աստուծո մեծության դիմաց մարդ փոշիի կվերածվի. հակառակ ասոր սակայն, Աստված կուզե հաղորդակցություն ստեղծել այս պզտիկ արարածին հետ: Իր զորութենեն և իմաստութենեն բաժին կուզե հանել անոր, պայմանով որ անոնք գործածվին համաձայն իր կամքին և ոչ թե վատնվին կամ չարաչար գործածվին եսասիրական նպատակներու: Ամենեն վեր և ամենեն ավելի Աստված կուզե որ արդարության օրենքը տիրապետող ըլլա ընկերության մեջ: Անտեսել այս օրենքը կնշանակե գործածել Աստուծո տված կարողությունները եսակեդրոն նպատակներու և ագահության համար, ինչ որ ամենամեծ սրբապղծություն է: Անոր համար է, որ երբ մարգարեն կշեշտե Աստուծո արդարությունը, զայն կներկայացնե միաժամանակ իբրև քանդող ույժ մը, որ չխնայեր բոլոր անոնց, ըլլան անոնք անհատներ կամ ազգեր, որոնք դեմ կգործեն այդ օրենքին: Ու Աստուծո արդարության այդ կործանարար զորությունը ի հայտ կուգա որքան երկրաշարժներու, մարախներու և այլ բնական քանդիչ երևույթներու մեջ, նույնքան և ավելի կայսրություններու բանակներու կոտորող և հարթող արշավանքներուն մեջ: Անոնք գործիքները և գործադրիչներն են իր արդար դատաստանին, «Տիրոջ օրվան», որմե փախուստ չկա ոչ մեկ ազգի կամ արարածի համար, ըլլա երկրի վրա և ըլլա երկինքի մեջ: Եվ մեկ և նույն այդ «Տիրոջ օրը» ոմանց համար անկումի՝ ոմանց համար ալ բարձրացումի օր պիտի ըլլա: Մինչև իսկ ինքը, մարգարեն, գործիքն է աստվածային այդ արդարության, մահ սպառնալով մեղավորներուն, և երջանկություն՝ արդարներուն:

Հույնք՝ հունիս 15. լատինք՝ մարտ 31:

32. ԱԲԴԻՈՒ

Ոչինչ գիտենք իր մասին բացի անունեն. հայրանունն անգամ չէ հիշված: Իր գիրքը միակ գլուխն մը բաղկացած՝ կարճագույնն է ամբողջ Հին Կտակարանին: Կրովանդակե ուժգին պատգամ մը ընդդեմ Եդովմի: Իրարու ցեղակից այս երկու ժողովուրդները, Եդովմացիք և Իսրայելացիք, ամբողջ իրենց պատմության ընթացքին իրարու թշնամի եղած են, մինչև որ Եդովմացիք խառնված և ձուլված են Իսրայելի և արաբներու մեջ: Մարգարեությունը գրված կնկատվի նախ քան Քրիստոս Ե դարուն, Իսրայելի գերութենեն հետո, երբ Եդովմացիք մեծ նեղություններ տվին նորադարձ հրեաներու:

Հույնք և լատինք՝ նոյեմբեր 19:

33. ՀՈՎՆԱՆ

Գրքին սկիզբը հիշված անունով և հայրանունով մարգարե մը կհիշվի արդարև Դ թագ. ԺԴ 25-ին մեջ: Իսրայելի Հերոբովամ Բ թագավորը երկրին սահմանները ընդարձակեց «Համաձայն Իսրայելի Տեր Աստուծո պատգամին, զոր խոսեցավ իր ծառային Ամաթեի որդի Գեթքոբերացի Հովնան մարգարեին»: Հարց կծագի թե այս մարգարե՞ն է գիրքը գրողը, թե ուրիշ մըն է, որ այս մարգարեին պատմությունը մեզի կներկայացնե: Ոչ մեկ նշան կա որ գրողը Հովնան մարգարեն եղած ըլլալ. այլապես՝ ինք ըլլալով ժամանակակից Ամովսի—Ութերորդ դարու առաջին կեսը ն. Ք.—անոր հետ առաջին գրող մարգարեներեն մեկը պիտի լիներ: Առ հասարակ այնպես կընկատվի որ այս գիրքը գրված է Իսրայելի գերութենեն հետո, Ե դարուն ն. Ք.:

Տարբեր է այս գիրքը մարգարեական մյուս գիրքերեն անով, որ փոխանակ պատգամներ պարունակելու՝ կպատմե արկածները մարգարեի մը, որուն կհանձնվի ամենեն հաճո պարտականությունը. այսինքն ապաշխարանք քարոզել Իսրայելի ամենեն ատելի ժողովուրդի մայրաքաղաքին՝ Նինվեի մեջ:

Հետևաբար զարմանալի չէ, որ Հովնան նախ կփորձե փախչիլ այս պարտականութենեն. բայց ի վերջո կհամակերպի աստվածային հրամանին, այն հույսով որ ամենայն հավանականությամբ Նինվե պիտի չապաշխարեր, և հետևաբար պիտի կործաներ: Բայց առաջին զարմացողը և զայրացողը ինք կըլլա, երբ Նինվեացիներ կանսան իր քարոզության, որ հինգ բառերե կբաղկանար. «Երեք օրեն Նինվե պիտի կործանի»: Կզղջան, կապաշխարեն և դարձի կուգան: Ու աստված կխնայե քաղաքին:

Գիրքին նպատակն է շեշտել թե Աստված այնքան Տեր և հոգածու է հեթանոս ազգերուն՝ որքան Իսրայելին: Կպատժե մեղքը ուր որ ալ ըլլա, Իսրայելի կամ հեթանոսներու մեջ: Կխնայե ապաշխարողին, ուր որ ալ պատահի, Իսրայելի մեջ կամ հեթանոսներու մոտ:

Այս առումով այս առակի ձևով գրված գիրքը —և առակի նպատակ հետապնդող գիրքը —ամենեն մոտիկն է Նոր Կտակարանի ուսուցման, որ կհաստատե թե Աստված «իր արեգակը կծագեցնե չարերու և բարիներու վրա. անձրև կբերե արդարներու և մեղավորներու վրա» (Մատթ. Ե 45):

Մենք, բացի հիշելե Հովնանը «Երկոտասան մարգարեից» հետ, կհիշատակենք զայն և ապաշխարանքի իր քարոզությունը

Առաջավորաց Պահքի ուրբաթ օրը: Հույնք և լատինք՝ սեպտ. 21-ին:

34. ՄԻՔԻԵ

Ժամանակակից է Ամովս, Ովսե և Եսայի մարգարեներուն, որոնց հետ միասին կը-կազմեն այն քառյակը, որ ստեղծեց ոսկեդարը Հին Կտակարանի գրող մարգարեներու, ութերորդ դարուն նախքան Քրիստոս: Հետաքրքրական է նշել, որ այս չորսը կներկայացնեն գրեթե բոլոր խավերը ժամանակակից ընկերության: Ամովս լեռնական հովիվ մըն է հարավեն. կներկայացնե խաշնարած գյուղացիությունը: Ովսե հողագործ մըն է հյուսիսի բերրի դաշտերեն: Եսայի արիստոկրատ մըն է աճած արքունիքի մեջ և մշակված միտք մը՝ երկրի մայրաքաղաքին մեջ: Իսկ Միքիե երկրի արևմտյան սահմանամերձ գյուղեն արհեստավոր մըն է. կներկայացնե աշխատավոր դասակարգը:

Թե ինչպես և ինչ պայմաններու ներքև տեղի ունեցավ իր կոչումը բացահայտ չէ. բայց իր գիրքին հետևյալ ակնարկությունը կրնանք նկատել իբրև սկիզբը և դրդապատճառը իր կոչումին.

«Բայց ես լեցվեցա Տիրոջ Հոգիին զորությամբ պատմելու համար Հակոբի տան՝ իր ամբարշտությունը և Իսրայելին՝ իր մեղքերը» (Գ 8): Ապա կհաջորդե իր պատգամներուն խտացումը.

«Լսեցեք ասիկա, Հակոբի տան առաջնորդներ, և Իսրայելի տան իշխաններ, որ կանարգեք արդարությունը և կծռեք զայն իր ուղիղ ընթացքեն, կշինեք Սիոնը արյունով և Երուսաղեմը՝ անիրավությամբ: Անոր առաջնորդները կաշառքով կդատեն. անոր քահանաները վարձքով կկատարեն իրենց պաշտոնը. անոր մարգարեները դրամով կուտան իրենց գուշակությունը: Այս բոլորով հանդերձ տակավին Տիրոջ կապաստանեին ու կըսեին. Չէ՞ որ Տերը մեզի հետ է, ուստի չարիք պիտի չգա մեր վրա: Հետևաբար ձեր պատճառով Սիոն հերկված հող պիտի ըլլա. Երուսաղեմը՝ ավերակույտ մը. և տաճարի բլուրը՝ մայրիի անտառ» (Գ 9—12):

Այն մեղքերը, որոնք հատկապես հիշված ու դատապարտված են Միքիայի կողմե հետևյալներն են.

Կռապաշտությունը. «Պիտի քանդեմ անոր բոլոր կուռքերը, զոր հավաքեց Սամարիան իր պոռնկության իբրև կապենք-վարձք»:

Չար ծրագիրներ. «Վայ անոնց, որոնք գիշերները չարիք կծրագրեն, և ցերեկին կգործադրեն զանոնք»:

Ագահություն. «Ցանկացան արտերու և բռնի գրավեցին. իրենց աչքը խաբած տունին տիրացան. կկողոպտեն մարդու տունը և կտիրանան անոր ժառանգության»:

Կախարդություն. «Պիտի վերցնեմ մեջտեղեն բոլոր կախարդները, և այլևս հարցուկներ պիտի չգտնվին քու մեջդ»:

Խարդախություն. «Կրնա՞մ անտեսել խարդախված ձեր չափերը, կամ կրնա՞մ հաշվի չառնել ձեր սուտ կշիռները, և թեթև ծանրոցներու պարկերը»:

Ընդհանուր այլասերում. «Երկյուղած մարդը կորավ երկրեն. և ուղիղ մարդ չըմնաց, ամեն մարդ իր ընկերոջ չարիք կըմտածե: Մի վստահիր դրացիիդ, մի հավատար մոտիկ բարեկամիդ. անկողինակիցեդ զգույշ եղիր, արտիդ գաղտնիքը մի հայտներ անոր: Որդիներ իրենց հոր դեմ կելլեն. աղջիկներ իրենց մոր դեմ կապըստամբին. հարսներ՝ իրենց կեսուրներուն դեմ»:

Կարծես մեր ժամանակները կնկարագրե մարգարեն երկու հազար յոթ հարյուր հիսուն տարիներ առաջ:

Սակայն մարգարեն միայն մեղքեր դատապարտելով չի գոհանար. ապագայի հույսի դուռներն ալ կբանա.

«Ազգեր պիտի ըսեն. եկեք Տիրոջ լեռը ելլենք, թող ցույց տա Ան մեզի իր ճամբաները, որպեսզի քալենք իր շավիղեն... Պիտի գա ժամանակ երբ ազգեր պիտի կոտրեն իրենց սուրերը խոփ շինելու համար, և իրենց գեղարդները՝ մանգաղ շինելու համար. ազգ ազգի վրա սուր պիտի չբարձրացնե. այլևս պատերազմ ընելու դաս պիտի չառնեն. ամեն մարդ հանգիստ պիտի ապրի իր որթատունկի և թզենիի շուքին ներքև ու ոչ ոք պիտի զարհուրեցնե զայն...» (Դ 2—4):

Եվ տակավին ամբողջ Դ գլուխը լեցուն է հուսադրիչ և երջանիկ պատգամներով:

Միքիե այն մարգարեն է, որ նախագուշակած է ոչ միայն Մեսիայի գալուստը այլ նաև անոր ծննդյան տեղը. «Եվ դուն Բեթլեհեմ, տուն Եփրաթա, թեև կրտսեր ես Հուդայի քաղաքներուն մեջ, բայց քեզմե պիտի ելլե Իսրայելի իշխան մը, որուն ծագումը կերթա մինչև հավիտենականության հին օրերը» (Ե 2 բդ. Մատթ. Բ 5—6):

Կրնանք ըսել թե Միքիայի գիրքը խտացումը և միջինն է իր ժամանակակից երեք մարգարեական գիրքերուն. ան իր բարձրագույն գագաթին կհասնի երբ կսահմանե ճշմարիտ կրոնքը հետևյալ բառերով.

«Պատմվեցավ քեզի, ով մարդ, թե ի՞նչ է բարին, և թե՝ ինչ կուզե Տերը քեզմե. արդարություն գործել. սիրել ողորմությու-

ին, և պատրաստակամ ըլլալ խոնարհությամբ քալելու քու Աստուծոյդ հետ» (Զ 8):
Հույնք՝ օգոստ. 14. լատինք՝ հնվր. 15:

35. ՆԱՎՈՒՄ

Իր մասին ալ գրեթե ոչինչ գիտենք: Իր գրքույկը, որ կբաղկանա երեք փոքր գլուխներե, պատգամ մըն է ընդդեմ Նինվեի: Մակերեսային ընթերցումե մը հետո՝ Նավումի գիրքը կրնա նկատվիլ ոչ մեծարժեք գործ մը, և Աստվածաշունչը ոչինչ պիտի կորսնցներ եթե պարունակած չըլլար զայն: Ոչ Աստուծո մասին մեծ ուսուցում կա, ոչ ապագայի հույսով ոգևորություն, ոչ ալ Մեսիայի մասին նախատեսություն: Ատելություն և վրեժ կբուրե ծայրե ծայր: Թե՛ բարոյական գետնի վրա և թե՛ աստվածաբանորեն թերի գիրք մը կրնա նկատվիլ, քանի որ Աստուծո բնության կամ մարդերու իրարու հետ հարաբերության մասին հատուկ ուսուցում չունի. այսուհանդերձ գիրքը զուրկ չէ արժեքե և պատգամե՝ թե իր ժամանակակից մարդոց, թե ներկա ժամանակներու և թե գալիք սերունդներուն համար:

Նախ համամարդկային գրականության մեջ դասական դատապարտություն մըն է այս գիրքը զինու զորության, միջազգայնացած բառով մը «միլիթարիզմ»-ի: Քրիստոսի կողմե ըսված «Որ սուր առցե՝ սուրով անկցի» սկզբունքին ընդլայնումը և իրագործումն է Նավումի մարգարեական գիրքը:

Անցյալի բոլոր կայսրություններեն գրեթե ամենեն անագորույնը եղած է Ասորականը, ինչպես կհաստատվի նաև իր արձանագրություններեն: Սակայն պատմությունը միշտ հաստատած է, որ բռնակալությունը ինքնակործան քաղաքականություն մըն է: Բոլոր բռնակալները՝ եթե ինկած ալ չըլլան անմիջապես՝ միշտ դատապարտելի նկատված են, ըլլա իրենց ժամանակակիցներեն, ըլլա պատմութենեն: Ույժի բռնակալության վրա հաստատված դրություններ անխուսափելիորեն պիտի այլասերին շվայտությամբ, արբեցությամբ և հարստահարությամբ և ի վերջո պիտի տկարանան ու կործանին: Այս ճշմարտությունը կհաստատե Նավում մեզմե երկու հազար հինգ հարյուր տարիներ առաջ, Նինվեի կործանումը նախատեսելով և բանաստեղծորեն նկարագրելով:

Երկրորդ, մարգարեն բացահայտորեն կհայտարարե, որ Աստուծո գործնական մատը կա Նինվեի կործանումին մեջ:

«Քեզի դեմ եմ, կըսե Ամենակալ Տերը. Եվ ծուխով պիտի այրեմ քու բազմությունդ,
Սուրը պիտի ուտե առյուծներդ
Եվ որդ պիտի վերցնեմ երկրի վրայեն.
Քու գործերդ այլևս պիտի չհիշվին» (Բ 13):

«Քանզի որո՞ւ վրա զգալի չեղավ քու չարությունդ» (Գ 19):

Ուրեմն Նինվեի գործած անիրավությունները, Աստուծո հրամանով, գրգռեցին Նավումի արդար զայրույթը, որ կգրե բանաստեղծական այս կտորը իբրև դասական նմուշը բռնակալներու վերապահված ճակատագրին:

Հույնք և լատինք՝ դեկտ. 1:

36. ՀԱՄԲԱԿՈՒՄ

Այս մարգարեին գրությունն ալ նախորդին պես երեք գլուխներե բաղկացած գրքույկ մըն է, հավանաբար գրված յոթերորդ դարու վերջերը ն. Ք.:

Գիրքը կբացվի տրտմագին հարցումով, մարգարեին, թե ինչո՞ւ չարը տիրապետող է երկրի վրա: Հարցումին կհաջորդե երկխոսություն մը Աստուծո և մարգարեի միջև չարիքի հարցի մասին. (Ա և Բ գլուխներ): Չարիք գործողները, եթե երևութապես բարգավաճին անգամ, ի վերջո իրենց պատիժը պիտի գտնեն: Քանդիչ և հարթիչ բանակները կայսրությանց, Աստուծո պատժական մրտրակներն են, որոնք կիյնան չարագործ, կուսապաշտ, անարդար և այլասերած ազգերու վրա: Սակայն «Արդարը պիտի ապրի իր հավատքով». (Բ 4): Այս է կեդրոնական գաղափարը գիրքին, որ թեև չարիքի հարցը չի լուծեր, սակայն կհայթայթե լավագույն միջոցը չարիքեն վերապրելու: Ամուր կենալ. չերկմտիլ. կառչիլ հավատքին, ըլլալ հավատարիմ մինչև վերջը, հոգ չէ թե մարդ բարիքի կամ չարիքի մեջեն կանցնի, իրական նշաններն են «արդար» մարդուն:

«Արդարը իր հավատքով պիտի փրկվի», (Բ 4) գրքին կեդրոնական այս հավատումը կարևոր դեր կատարած է Քրիստոնեական մտածումին մեջ. հիշված է այն իբրև կեդրոնական գաղափարներեն մեկը Պողոս առաքյալի. (Հռոմ. Ա 17, Գղտ. Գ 11, Եբր. ԺԱ 38): Բողոքական շարժումին իբրև լոզունգ ծառայած է այս խուսքը:

Այս փոքրիկ գրքույկը եզրակացության կբերվի հոյակապ աղոթքով մը, ավելի շիտակ գոհաբանական սաղմոսով մը, ուր մարգարեն կհայտնե իր գոհությունը և ուրախությունը, հավատքը և վստահությունը Աստուծո վրա (Գլուխ Գ):

Հույնք՝ դեկտ. 2. լատինք՝ հնվր. 15;

37. ՍՈՓՈՆԻԱ

Արքայական ցեղէ կսերի Սոփոնիա, ըլլալով թոռան թոռը Եզեկիա բարեպաշտ թագավորին: Ապրած է Հրեաստանի Հովսիա բարեկարգիչ թագավորի օրով (638—608 ն. Ք.), Երուսաղեմի մեջ: Մարգարեացած է ն. Ք. 625-ական թվականներուն, և հավանաբար մասնակցած է Հովսիա թագավորի բարեկարգական ձեռնարկներուն, Ողդա մարգարեուհիի և Երեմիայի հետ ն. Ք. 621 թվականին:

Սոփոնիայի գիրքն ալ կբաղկանա երեք գլուխներե, որոնցմով կհայտարարե «Տիրոջ օր»-վան մոտենալը: Ջրհեղեղի մաքրագործումը հիշեցնող սպառնալիքով կըսկսի իր պատգամներուն շարքը:

«Ի սպառ պիտի փճացնեմ ամեն ինչ, կըսե Տերը. պիտի կորսնցնեմ մարդը և անասունը, երկինքի թռչունները և ծովի ձուկերը. ու այդ բոլորին հետ պիտի վերցնեմ աշխարհե գայթակղությունները, զանոնք գործողներով միասին»:

Ու մոայլ գույներով կպատկերացնե «Տիրոջ օրը» իբրև՝ «Օր բարկության, օր նեղության և վտանգի, օր թշվառության և ապականության, օր խավարի և մեգի, օր ամպի և մառախուղի, օր փողի և մարտական աղաղակի... որովհետև Տիրոջ դեմ մեղք գործեցին, և Անոր անունը սնոտիքներու վրա դրին. (այսինքն ճշմարիտ Աստուծո միայն վերապահյալ անունով կոչեցին կուռքերը), որոնք ոչ մեկ օգնություն կրցան տալ իրենց...: Տիրոջ բարկության օրը՝ ոչ անոնց արծաթը և ոչ ալ ոսկին պիտի փրկե զանոնք. որովհետև տագնապալի վախճան մը պիտի գա երկրի բոլոր բնակիչներուն վրա» (Ա գլուխ):

Սակայն այս մոայլ պատկերին մեջ հանկարծ լույս կծագի և գիրքը վերջավորության կբերվի ավելի հուսալից մթնոլորտի մը մեջ, երբ մարգարեն կնախատեսե «մնացորդացի» փրկությունը:

«Պիտի ազատեմ քեզ քու ամբարտավանութենեդ և այլևս մեծաբանություն պիտի չընես իմ սուրբ լերանս վրա. քեզ պիտի վերածեմ հեզ, խոնարհ և երկյուղած ժողովուրդի մը: Իսրայելի մնացորդացը այլևս անիրավություն պիտի չընե, սնոտի բաներ պիտի չխոսի, և ոչ ալ անոր բերնին մեջ նենգավոր լեզու պիտի ըլլա. պիտի ապրին խաղաղ և ոչ ոք պիտի զարհուրեցնե զանոնք»:

«Խրախուսվե Իսրայել, ուրախ եղիր և զվարճացիր ամբողջ սրտով, դուստր Երուսաղեմի, Տերը փրկած է քեզ քու թշնամիներեդ: Տերը այլևս քու մեջդ է, իբրև քու թագավորդ, ով Իսրայել. այլևս երբեք չարիք պիտի չտեսնես դուն» (Գ 14—15):

Հույնք և լատինք՝ դեկտ. 3:

38. ԱՆԳԵ

Կկարծվի որ ծնած է Իսրայելի յոթանասնամյա (586—516) գերության ընթացքին Բաբելոնի մեջ, և Երուսաղեմ վերադարձած ն. Ք. 530-ական թվականներուն, գերեդարձներու առաջին կարավանին հետ, գլխավորությամբ Զորաբաբելի, որ երկրին կառավարիչ նշանակված էր Պարսից թագավորեն, որուն գերիշխանության ներքև կգտնվեր Հրեաստան: Իր մարգարեական գործունեությունը կապված է տաճարի վերաշինության արբազան գործին հետ:

Գերադարձները թեև տաճարի շինության սկսած էին, բայց գործը ընդհատված էր հատկապես Սամարացիներու միջամտությամբը: Ընդհատումե հետո վերադարձողները այնքան զբաղած էին իրենց սեփական տուներու կառուցման գործով, որ գրեթե մոռցած էին Աստուծո Տան շինությունը: Անգե հրապարակ կիջնե և կծու կերպով կդատապարտե նոր Երուսաղեմացիներու այս անհոգությունը: Երկրին մեջ տիրոջ սովը և երաշտը կվերագրե Աստուծո բարկության, իրենց այս անտարբերության համար:

Իր մարգարեական գործունեությունը տեված է հազիվ չորս ամիսներ, պարսից Դարեհ թագավորի երկրորդ տարին, 520 ն. Ք.: Իր գրությունը Հին Կտակարանի երկրորդ կարճագույն գիրքն է, բաղկացած երկու գլուխներե, որոնք ինքնին պատգամներ ըլլալե ավելի մարգարեին պատգամներուն տեղեկագիրը կամ համադրությունն է, ուղղված Զորաբաբելի և օրվան քահանայապետ Հեսուի: Թեև, կըսե մարգարեն, Նոր տաճարը ավելի անշուք պիտի ըլլա բաղդատմամբ հինին, բայց «այս Տան փառքը ավելի մեծ պիտի ըլլա քան առաջինինը, որովհետև այս տան մեջ ձեզի խաղաղություն պիտի տամ»: Հավանաբար ակնարկելով Մեսիայի գալստյան: Արդարև այն տաճարը որուն ընծայվեցավ Հիսուս, այն տաճարը զոր երկիցս մաքրագործեց, և որուն մեջ բազմիցս քարոզեց՝ Զորաբաբելի շինել տված տաճարն էր, կարևոր նորոգություն կրած՝ Հերովդեսի կողմե:

Հույնք՝ դեկտ. 16. լատինք՝ հլս. 4:

39. ԶԱՔԱՐԻԱ

Զաքարիա ժամանակակից է Անգեի, ինչպես կհաստատեն երկուքին հիշած թվականները և Եզրի գիրքը.

«Անգեաս և Ադդովյան Զաքարիա կմարգարեանային (այսինքն կխրախուսեին հանուն Աստուծո) Հրեաստանի և Երու-

սաղեմի Հրեից վրա: Այն ատեն Սաղաթիելի որդի Զորաբաբել և Հովսեդեկի որդի Հեսու սկսան շինել Աստուծո տունը Երուսաղեմի մեջ. և Աստուծո մարգարեները անոնց հետ էին և զորավիգ էին անոնց» (Եզր. Ե 1—2):

Անգեի պես ինք ալ տեսավ կրոնական անտարբերությունը իր ժողովուրդին, և զանոնք շարժման մեջ դնող խրախուսիչ հորդորներ տվավ, որոնք մեծապես նպաստեցին տաճարի վերաշինության:

Երկուքեն ավելի երեցը Անգեն է. իսկ Զաքարիա՝ ավելի երիտասարդ (Զաք. Բ 4): Հավանաբար Զաքարիան ալ ծնած է Բաբելոն և վերադարձող կարավաններեն մեկին հետ Երուսաղեմ եկած էր: Իր մարգարեությունը տևած է երկու տարի 519—517 ն. Ք.:

Զաքարիայի գիրքը բաղկացած է 14 գլուխներե, և մեծագույնն է փոքր մարգարեներու գրքերուն: Նախերգանք հորդորական մը վերջ (Ա 1—6) առաջին վեց գլուխներուն մեջ կներկայացվին ութ խորհրդավոր տեսիլքներ, որոնց բացատրությունները ալ կտրվին:

Հաջորդ 7—8 գլուխները պատասխան են Բեթելեն եկած պատգամավորության մը, որոնք պահեցողության մասին հարցում ըրած էին մարգարեին, որ ըստ հետևյալի կպատասխանե անոնց հանուն Աստուծո.

«Երբ պահք կպահեիք ինձի՞ համար կընեիք. չէ՞ որ ձեզի համար կընեիք: Արդ այպես կըսե Ամենակալ Տերը. արդար դատաստան ըրեք. ողորմություն և գթություն ցույց տվեք հանդեպ ձեր նմաններուն. այրին, որբը, պանդուխտը և աղքատը մի հարստահարեք: Ոխ մի պահեք իրարու հանդեպ ձեր սիրտերուն մեջ» (Է 9—10):

Սակայն Զաքարիայի տեսողության շրջանակը շատ ավելի լայն է: Ան թափանցեց նաև գալիք դարերու միգամածին և անոր մեջեն տեսավ Մեսիայի գալուստը, և ավելի պայծառ ապագայի մը հեռանկարը: Ըստ այսմ 9—14 գլուխները կպարունակեն զանազան պատգամներ, զորս քիչ մը դժվար է հասկնալ, բայց որոնց բոլորին նպատակն է հաստատել, թե Աստուծո թագավորությունը ի վերջո պիտի հաղթանակե: Այս բաժնին մեջ կան բազմաթիվ նախագուշակություններ Քրիստոսի զանազան տնտեսությանց մասին. օրինակ իր հաղթական մուտքին Երուսաղեմ:

«Ուրախ եղիր դուստր Սիոնի, ցնծա դուստր Երուսաղեմի, ահա քու թագավորդ կուգա քեզի, արդար և փրկիչ, հեզ ու խոնարհ, հեծած էշի և նոր ավանակի վրա... Պիտի խորտակե աղեղը պատերազմին և խաղաղություն պիտի խոսի բոլոր ազգերու. ու անոր իշխանությունը ծովե ծով պիտի տարածվի և գետերեն մինչև աշխարհի ծայրերը» (Թ 9—10):

Կնախատեսե Հիսուսի խաչելությունը և գեղարդով խոցվիլը (ԺԲ 10) և երեսուն արծաթի ծախվիլը (ԺԱ 12) և իր աշակերտներեն լքվիլը (ԺԳ 7):

Մարգարեն կուտա նաև գաղտնիքը հոգևոր ձեռնարկներու հաջողության.

«Ոչ զորությամբ և ոչ ուժգնությամբ այլ իմ հոգիովս, կըսե Տեր Ամենակալ» (Դ 6):

Ըստ Ավետարանի տվյալներու Զաքարիա սպանված է տաճարի մեջ: (Մատթ. ԻԳ 35):

Հույնք՝ սեպտ. 5. լատինք՝ սեպտ. 6:

(Շարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 108—119)

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

ՇԻՊՊՈԼԵԹԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Աստվածաշունչի Դատավորաց գրքի ԺԲ գլխու 1—6 համարներուն մեջ առեղծված մը կա, զոր Աստվածաշունչի հայերեն թարգմանությամբ կարելի չէ լուծել, որովհետև հունարեն **Յոթանասնից** թարգմանության խողովակով՝ սխալ բառ մը դրված է եբրայեցերեն **Շիպպոլեթ** բառին տեղ: Առեղծվածի բանալին, նույն ինքն Շիպպոլեթ բառն է, որ **հասկ հասկ** թարգմանված է հայերեն Աստվածաշունչին մեջ՝ Յոթանասնիցի միջոցավ: Մինչդեռ անիկա **անց-բառ** մըն է (passwore), որ երկու իմաստ ունի, Ա. **ցորենի հասկ,** Բ. **Գետի անցք:** Ահա այդ համարը. «Եւ կալաւ Գաղաադ զկիրճս Յորդանանու զԵփրեմի, և եղև իբրև ասացին ապրեալքն Եփրեմայ, թէ թող անցցուք, ասեն ցնոսա, տուք մեզ **նշան ինչ,** և ասացէք **հասկ հասկ,** և ոչ յաջողեցան խօսիլ այնպէս, և կալան և կոտորեցին զնոսա յանցսն Յորդանանու, և անկան ի ժամանակին յայնմիկ յԵփրեմէ քառասուն և երկու հազար» (ԺԲ 5—6):

Այս նախադասության մեջ «Մեզի նշան մը տվեք (անց-բառը արտասանեցեք), և ըսեք **հասկ հասկ,** և անոնք չհաջողեցան խոսիլ այնպես» բառերը իմաստ չունին, որովհետև **Շիպպոլեթ** և **Սիպպոլեթ** բառերը **հասկ հասկ** թարգմանված են հունարենի միջոցավ, և չեն տար առեղծվածին գաղտնիքը:

Անգլերեն վերջին և լավագույն թարգմանությունը, որ հրատարակվեցավ Ամերիկայի մեջ, 1952-ին, ի Նյու Յորք (Revised standard version), հետևյալ կերպով կը-թարգմանե այդ հատվածը. «Եվ գաղատացիները բռնեցին Հորդանանի անցքերը ընդդեմ եփրեմյաններուն: Եվ երբ եփրեմյան փախստականներեն մեկը ըսեր. «Թող որ անցնիմ»,—Գաղաադի մարդիկ կըսեին անոր. «Եփրեմյան ես դուն», ու երբ ան կըսեր «ոչ», անոնք կըսեին անոր, այն ատեն ըսե **«Շիպպոլեթ»,** և ան կըսեր **Սիպպոլեթ,** որովհետև ան չէր կրնար ճիշտ արտասանել, այն ատեն անոնք կբռնեին զայն և «կսպաննեին Հորդանանի անցքերուն մեջ, և հոն ինկան այն ժամանակ, 42,000 եփրեմյաններեն»:

Արդ, ի՞նչ է պատմությունը.—Ահա իրականությունը. Եփրեմի մարդիկ զենքի կանչվեցան, ու եկան Զափոն (Սեփինա) և ըսին Հեփթայեին թե ինչու Ամմոնացիներուն վրա պատերազմի գացիր առանց մեզի, ատոր համար տունդ կրակով պիտի այրենք:

Հեփթայե պատասխանեց անոնց, թե Ամմոնացիներու հետ մեծ վեճ ունեինք, անոնք մեզ կնեղեին, և բողոք ըրի ձեզի, ու դուք զիս չազատեցիք անոնց ձեռքեն, ուստի, ես ալ անոնց վրա հարձակեցա և Տերը զանոնք իմ ձեռքս մատնեց: Արդ ինչո՞ւ եկած եք այսօր, իմ վրաս կռվելու համար: Այն ատեն Հեփթայե հավաքեց Գաղաադի բոլոր ժողովուրդը և պատերազմեցավ Եփրեմի դեմ: Եվ Գաղաադացիները բռնեցին Հորդանան գետի անցքերը Եփրեմի մարդոց դեմ, ու երբ Եփրեմի մարդոցմե մեկը փախչեր՝ ճամփա չէին տար, մինչև որ Եբրայերեն **Շիպպոլեթ** բառը չարտասաներ:

Եվ որովհետև Եփրեմի ցեղի մարդիկը իրենց բարբառին մեջ **Շ** հնչյունը չունեին— և **Ս** կհնչեին, արտասանելով **Սիպպոլեթ**, փոխանակ Շիպպոլեթի, թշնամի ըլլալը կըհասկցվեր ու սուրե կանցընեին:

Եբրայերենի **Շ** գիրով սկսվող անուններեն շատեր հունարեն Յոթանասնից թարգմանության մեջ **Ս** գիրով տառադարձված են, վասնզի, հունարեն այբուբենին մեջ **Շ** գիրը կպակսի:

Յոթանասնից թարգմանության մեջ, **Շիպպոլեթ** բառը **հասկ** թարգմանված է, ինչ որ սխալ է, վերոհիշյալ պատմության մեջ, ու պետք է թարգմանվեր **անցք**, ու անկե ալ անցեր է հայերեն թարգմանության մեջ՝ **հասկ հասկ** ըլլալով, մինչդեռ Շիպպոլեթ պետք էր ըլլար և իմաստը **անցք**: Հունական թարգմանության պատճառով, **Շ**-ի և **Ս**-ի որոշիչ դերը խանգարված ըլլալով՝ բուն իրողությունը անհասկնալի դարձած է նաև մերինին մեջ ու իր իմաստը կորսընցուցեր է:

Մինչև ցայսօր, Սյուքեմի (Նապլուսի) բնիկներ, հին **սամարացիները**, արևին **սեմս** կըսեին, փոխանակ **շեմշ** ըսելու: Թեև տարօրինակ է, որ Իսրայելի երկու դրացի ցեղերը՝ Եփրեմի և Հեփթայեի, այն ժամանակ տարբեր արտասանություն ունենային, ինչպես դիտել կուտան ս. Գրոց քննադատներեն ոմանք (Prof. N. O. E. Oesterley, the Arligdon Bible Commentary).

Շ և **Ս** գիրերը հայերենի մեջ ալ (առաջինը չշող, երկրորդը սուլող) փոխանակված կգտնենք, զոր օրինակ. աստիճան=աշտիճան, աստուն=աշտուն (հաց):

Շտապել=**ստիպել**, **շեշտ**=**սաստ**,
շարժել=**սարսել**, **շոհնչ**=**սոհնչ**,
սարփուշ (պրսկ.)=**շարփուշ** (գլխու ծածկոց),
շրտնում=**սարտնում**, **փշուր**=ռմկ. **փսոր**:

Եբրայեցի հատուկ անուններու **Շ** գիրը, որ ասորական ալ է, միշտ **Ս**-ով փոխանակված կգտնենք Աստվածաշունչի հունարեն Յոթանասնից թարգմանության մեջ, որովհետև հույնը **Շ** գիրը չունի, ըստ այսմ և մեր թարգմանիչները **Ս**-ով կգրեն այդ անունները: Իսկ ասորերենե եղած մեր հին թարգմանություններուն մեջ, միևնույն անունները **Շ** գիրով կտեսնինք, իրենց տարբեր ձևերովը.

Օրինակներ՝

ըստ հունականին	**ըստ ասորականին**
Սիմեոն	**Շմավոն**
Սամարացի	**Շամրտացի**
Սիղվանոս	**Շիղա**
Հեսու	Հեշու կամ Իշով
Սավուղ	**Շավուղ**
Եղիսե	Եղիշե կամ Եղիշա

(Այբուբենք հայերեն բանասիրության, էջ 48. Եղիշե արքեպ. Դուրյան)

Շիպպոլեթ բառը այլաբանական իմաստ մը ունի այժմ, տեսակ մը սիմպոլիկ նշանակություն մը: Այսօր, **ռամկավարություն, ժողովրդավարություն, ազատություն** և **արդարություն** բառերը **Շիպպոլեթ** եղած են շատերուն համար: Մարդիկ զանոնք կարտասանեն, անոնց անունով կերդնուն ու կպայքարեն, սակայն տարբեր գաղափար և ըմբռնում ունին այդ բառերու ճշգրիտ իմաստի մասին:

Ս. Ա. Մ.



ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ 52-ՐԴ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1979 թվականի մայիսի 4 և 5 օրերին Ռիտլի քաղաքի (Կալիֆոռնիա) ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցում գումարվել է Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի 52-րդ թեմական պատգամավորական ժողովը՝ նախագահությամբ թեմական առաջնորդ տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի:

Թեմական պատգամավորական ժողովի օրակարգի վրա եղել են հետևյալ հարցերը. թեմական խորհուրդ, շրջանային ժողովներ, առաջնորդարանի ձեռնարկներ, թղթակցություն Մայր Աթոռի հետ, հոգևորականություն պատրաստվող ուսանողներ, թեմական կալվածների, նոր գնումների և շինությունների ծավալում, թեմական կազմակերպություններ, կիրակնօրյա դպրոց, հայ լեզվի ամենօրյա դպրոց, առաջնորդարանի հանձնաժողովներ, Մայր եկեղեցու հրատարակություն (1979 թվականի հունվարից սկսած հրատարակվում է թեմի պաշտոնաթերթ «Մայր եկեղեցին» ամսագիրը), այցելություններ Կալիֆոռնիայի թեմին: Օրակարգի վրա դրված հարցերի շուրջ ժողովը ընդունել է համապատասխան որոշումներ:

Այսօր Կալիֆոռնիայի հայոց թեմում կան 16 եկեղեցիներ կամ եկեղեցական ծխեր՝ իրենց հոգևոր հովիվներով և այցելու եկեղեցականներով:

Թեմական պատգամավորական ժողովը իր աշխատանքները ավարտելուց հետո ժողովի իր ատենագրության մեջ արձանագրել է որպես «Եզրափակում» հետևյալը.

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետը անցնող 23 տարիներու ընթացքին որպես Հովվապետ առաջնորդեց Հայց. եկեղեցին: Իր խղճամիտ ու նվիրյալ առաջնորդության ներքն Մայր Աթոռ ս. Էջմիածինը ամբողջությամբ նորոգվելով պայծառացավ: Ներկայիս ավելի քան 50 երիտասարդներ կուսանին հոգևոր ճեմարանին մեջ, և բազմաթիվ կրոնական գիրքեր հրատարակվեցան Վեհափառի օրով:

Վեհափառ Հայրապետի ծննդյան յոթանասունամյակի առթիվ կհայտնենք թեմական ժողովի սերն ու հավատարմությունը ու նաև համայն ժողովուրդին: Թող ամենակալն Աստված պարգևե Հայոց Հայրապետին առողջություն հովվելու Իր հոտը ու նաև իրականացնելու աստվածահաճո Իր ծրագիրները:

Ի դիմաց թեմական խորհուրդի՝

ՎԱՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Առաջնորդ և նախագահ թեմական խորհուրդի

ՀԱԿՈԲ ՂԱԶԱՆՇՅԱՆ
Ատենապետ

ՀՈԳԾ. Տ. ՄՈՒՇԵՂ ՎՐԴ. ԹԱՇՇՅԱՆ
Ատենադպիր

ՓԻԹԵՇԹԻ (ՌՈՒՄԻՆԻԱ) ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

Առաջնորդ սրբազանը հավատացյալների հետ

Բուխարեստի հայոց եկեղեցու թեմական խորհուրդը Վեհափառ Հայրապետին հաղորդագրած իր սեպտեմբեր 5 թվակիր պաշտոնական գրությամբ հայտնում է, որ Նորին Սրբության օրհնությամբ շարունակում է իր «ազգօգուտ աշխատանքը՝ վերին ղեկավարությամբ թեմիս բարեջան առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանի»:

Թեմական խորհրդի տեղեկագրով նշվում է, որ «հայերեն լեզվի դասընթացքը, նախաձեռնված 1978 տարվա վերջավորության, շարունակվեցավ լավագույն կազմակերպությամբ: Բազմացած է նաև սովորողներու թիվը»:

Հունիս ամսվա ընթացքում կազմակերպվել է նախկին «Տուտյան» մշակութային տան սրահի մեջ՝ նախագահությամբ թեմական առաջնորդի, գեղարվեստական երեկո՝ նվիրված հայ բանաստեղծության: Այս առթիվ ելույթ են ունենում «Նոր կյանք» թերթի խմբագիր Սարգիս Սելյանն ու Բուխարեստի «Ճյուղեշթ» թատրոնի դերասանուհի Լուիզա Տերտերյանը, «Բ. Նոթարա» թատրոնի դերասանուհիներ Լիա Շահիկյանն ու Թոնի Զաքարյանը, որոնք «հայ և ռումաներեն լեզվով արտասանություններ ըրին» մի շարք հայ դասական բանաստեղծների գործերից:

Նույն ամսվա մեջ արվեստի պատմաբան, բելգրութահայ օրիորդ Սիլվա Աճեմյանը Բուխարեստի համալսարանի պատմության և փիլիսոփայության ֆակուլտետի սրահում դասախոսություն է կարդացել «Հայկական միջնադարյան արվեստի ձեռագրեր Ռումանիո հավաքածուներում մեջ» դոկտորական իր աշխատության մասին:

Նույն ամսվա վերջերին Փիթեշթ քաղաքի հայոց սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հիմնադրության 150-ամյակի առթիվ թեմական առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանի ղեկավարությամբ և թեմական խորհրդի նախաձեռնությամբ ուխտագնացություն է կատարվել դեպի այդ եկեղեցին՝ մասնակցությամբ հավատացյալների հոծ բազմության:

Փիթեշթի հայոց եկեղեցու օծումը անցյալում կատարել է Կ. Պոլսից հրավիրված Խորեն եպս. Նարպեյը: Սույն եկեղեցու հիմնական նորոգությունը կատարվել է 1966 թվականին: 1967 թվականին վերանորոգված եկեղեցում պատարագել և քարոզել է տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

Ուխտագնացության մասնակցողները Բուխարեստ վերադարձին այցելել են նաև Քուրթեա դե Արճեշ վանք:

ՄՈՆՐԵԱԼԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԱԲԱԹՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԸ



Մոնրեալի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն առընթեր շաբաթօրյա դպրոցի աշակերտությունը

1979 թվականի սեպտեմբերի 15-ին, շաբաթ օրը, Մոնրեալում խանդավառ մթնոլորտում վերաբացվել է ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Հ. Բ. Ը. Միության Ալեքս Մանուկյան շաբաթօրյա վարժարանը, «Արմեն-Քեպեկ» հոյակերտ վարժարանի մեջ, ի ներկայության տեղի հոգևոր հովիվ տ. Պարետ վրդ. Երեցյանի, ծխական խորհրդի և խնամակալ մարմնի պատվարժան անդամների, տեսչական-ուսուցչական կազմի և ծնողների հոծ բազմության:

Դպրոցի տեսուչն է պրն. Օ. Գալստյան: Ուսուցչական կազմում ընդգրկվել են գաղութի լավագույն մանկավարժները, այդ թվում՝ տիկին Ա. Շաքարյան, օր. Ն. Ծերունյան, տիկին Շ. Գրիգորյան, պրն. Լ. Մինասեյան, տիկին Ա. Չագրճյան և տիկին Տ. Տրդատյան:

Դպրոցի խնամակալ մարմնում իրենց օգտակար և շինարար օժանդակությունը բերում են տ. Պարետ վրդ. Երեցյանը (նախագահ), պրոֆ. Հ. Խաչիկյանը (ատենապետ), տիկին Է. Ագիպրիությանը (փոխատենապետուհի), պրն. Վ. Քերեսթեճյանը (գանձապահ), դոկտ. Հ. Էսեկյուլյանը, օր. Հ. Մանկասարյանը, տիկին Վ. Ազնավուրը և պրն. Հ. Անկալաթյանը (խորհրդականներ):

Ուսուցչական կազմի կողքին աշխատում է «կամավոր և սիրահոժար» կերպով նաև «արվեստագետ ուսուցիչներու» խումբը, օր. Նորա Ցագուպյան՝ պարուսույց, պրն. Գրիգոր Մինասեյան՝ պարուսույց, տիկին Փերուզ Թենթյունյան՝ դաշնակ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Վեհափառ Հայրապետի, շնորհավորում է Մոնրեալի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շաբաթօրյա հայ դպրոցի խնամակալ մարմնի, ուսուցչական կազմի «հարգամեծար և պատվարժան» անդամներին և մաղթում բոլորին քաջառողջություն և բեղմնավոր գործունեություն, 1979—1980 ուսումնական տարվա առիթով:

Սույն տեղեկությունները խմբագրությանն հաղորդել է Մոնրեալից մեր թղթակից Օնիկ Գալստյանը:



ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Սույն թվականի օգոստոսի 13—18 օրերին Վաշինգտոնի հռոմեական կաթոլիկ Մայր տաճարում տեղի է ունեցել Միջազգային ծիսագիտական ընկերակցության (Societas Liturgica) հերթական՝ 7-րդ համագումարը, որի գլխավոր թեման է եղել «Հովվական ասպարեզը»: Համագումարին մասնակցել են Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներից, Ճապոնիայից, Արևմտյան Եվրոպայի և Լատինական Ամերիկայի բազմաթիվ երկրներից ժամանած քրիստոնեական զանազան դավանությունների պատկանող եկեղեցիների շուրջ 170 ներկայացուցիչներ:

Համագումարի աշխատանքներին իր մասնակցությունն է բերել նաև տ. Բաբկեն եպիսկոպոս Վարժապետյանը, որը համագումարում հանդես է եկել «Առաքելական հաջորդությունը և ձեռնադրության խորհուրդը Հայաստանյայց առաքելական եկեղեցում» նյութերի շուրջ ընդարձակ մի զեկուցումով:

Միջազգային ծիսագիտական ընկերակցությունը հիմնադրվել է 1976 թվականին հոլանդացի գիտնական, պատոր, դոկտ. Վիրբ Վոսի կողմից, որը նույն թվականին մի խումբ աստվածաբան գիտնականների հետ նախաձեռնել և կազմակերպել է ընկերակցության առաջին համագումարը Հոլանդիայի Դրիբերգեն քաղաքում: Այնուհետև երկու տարին մեկ անգամ, կանոնավոր կերպով տեղի են ունեցել ընկերակցության հետագա համագումարները Անգլիայում, Իսպանիայում, Իռլանդիայում, Ֆրանսիայում և Շվեդիայում:

Ծիսագիտական ընկերակցության նպատակն է՝ առաջացնել քրիստոնեական պաշտամունքի մասին էկումենիկ դիալոգ՝ հիմնված գիտական լուրջ ուսումնասիրության վրա:

Սույն ընկերակցությունը, որը գործում է «Վերանորոգում և միություն» ընդհանուր նշանաբանով, իր հերթական համաժողովների ընթացքում գիտական բարեխիղճ մոտեցումով ցարդ ուսումնասիրել և համապատասխան թղթեր է հրապարակել ս. պատարագի և այլ խորհուրդների ծագման, կազմավորման, նրանց զարգացման, իմաստի և լեզվի մասին՝ միաժամանակ տալով իր պատգամը քրիստոնյա աշխարհին և արդի մարդկությանը:

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏԸ ԱՄՆ-ՈՒՄ

Հնդկական մալաբար եկեղեցու կաթողիկոս տ. Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Առաջինը սույն թվականի օգոստոսի 1—3-ը պաշտոնական այցով եղել է Վաշինգտոնում, ուր նրա պատվին տեղի են ունեցել եկեղեցական արարողություններ և ընդունելություններ: Հանդիսություններին ներկա է եղել նաև տ. Բաբկեն եպիսկոպոս Վարժապետյանը, որը, հանուն հայ եկեղեցու և ամերիկահայ համայնքի, ողջույնի ջերմ խոսքեր և բարեմաղթություններ է արել հնդկական եկեղեցու հոգևոր պետին՝ այդ առթիվ նրան տալով պատշաճ մի հուշանվեր:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ ԲՈՍՏՈՆՈՒՄ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Եկեղեցի և հասարակություն» բաժանմունքի նախաձեռնությամբ սույն թվականի հուլիսի 12—24-ը Բոստոնում, Մասաչուսեթի տեխնոլոգիական ինստիտուտում, տեղի է ունեցել համաշխարհային կոնֆերանս՝ «Հավատք, գիտություն և ապագա» թեմայով:

Իր երեսնամյա գոյության ընթացքում ԵՀԽ-ն առաջին անգամ լինելով կազմակերպում է նման մի կոնֆերանս, որն իր թեմայով և առաջադրած հարցերի կարևորությամբ մասամբ հիշեցնում է 1966 թվականին Ժնևում նույն բաժանմունքի նախաձեռնությամբ գումարված կոնֆերանսը, այն տարբերությամբ սակայն, որ մինչ Ժնևի ժողովին մասնակցում էին բացառապես աստվածաբաններ և եկեղեցականներ, Բոստոնի սույն կոնֆերանսը համախմբել էր գիտության տարբեր բնագավառներում աշխատող անվանի գիտնականներ, աստվածաբաններ, եկեղեցական պատասխանատու գործիչներ, փիլիսոփաներ, տնտեսագետներ, քաղաքագետներ, գիտության տարբեր ճյուղերի ուսանողներ, բազմաթիվ տեխնոլոգներ, ինչպես նաև էթիկայի մասնագետներ, թվով շուրջ 500 հոգի, եկած աշխարհի բոլոր ցամաքամասերից՝ մղտքեր փոխանակելու և քննարկելու համար տնտեսական, քաղաքական, գիտական, սոցիալական, էթիկական բնույթի բազմաթիվ հրատապ և անմիջական լուծում պահանջող հարցեր, որոնք դրված են այսօր մարդկության առաջ թե՛ արդյունաբերական տեսակետից զարգացած և թե՛ թույլ զարգացած ու հետամնաց երկրներում:

Կոնֆերանսի առաջին օրերին շուրջ 40 հոետորներ հանդես են եկել գլխավոր թեմայի տարբեր երեսները շոշափող առանձին զեկուցումներով, ինչպես՝ «Գիտությունը, տեխնիկան և եկեղեցիները» (զեկուցող՝ ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթը), «Գիտությունը և հավատքը ոխերիմ թշնամիներ չեն» (զեկուցող՝ Սիդնեյի համալսարանի աստղագիտության բաժանմունքի վարիչ պրոֆ. Ռոբերտ Հենբրրի Բրաուն), «Քրիստոնեական հեռանկարներ տիեզերքի ողջ ստեղծագործության մասին» (զեկուցողներ՝ բիոլոգիայի դասախոս պրոֆ. Շաղ Բիրչ (Ավստրալիա), աստվածաբանության դոկտոր Գերհարդ Լյեդկե (ԳՖՀ), «Գիտություն և տեխնիկա—խոստում և սպառնալիք» (զեկուցող՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ժերոմ Ռավեց (Մեծ Բրիտանիա), «Տեխնոլոգիան արդյոք հարգո՞ւմ է մարդկայինը» (զեկուցող՝ Նյոշատելի համալսարանի ֆիզիկայի ամբիոնի վարիչ պրոֆ. Ժան Ռոսել, Շվեյցարիա) և այլն:

Հիշյալ զեկուցումներն այնուհետև քննարկվել են 10 աշխատանքային խմբերում, որտեղ կազմվել և մշակվել են համապատասխան փաստաթղթեր, որոնց հիման վրա կոնֆերանսը ընդունել է մի շարք որոշումներ, բանաձևեր և հանձնարարականներ՝ դրանք հանձնելով աշխարհի բոլոր եկեղեցիների, կրոնական, գիտական, հասարակական կազմակերպությունների ու հաստատությունների, ինչպես նաև պետությունների և կառավարությունների ուսումնասիրությանը:

Կոնֆերանսի հիմնական նպատակն է եղել նպաստել համաշխարհային արդար մի հասարակության կառուցմանը՝ հիմնված ժողովրդական լայն խավերի մասնակցության վրա, հասարակություն, որտեղ բոլոր մարդիկ կարողանան ապրել ազատ, խաղաղ ու երջանիկ:

«Համաշխարհային արդար մի հասարակության հասնելու միջազգային բանալին ժողովրդի մասնակցությունն է այդ հասարակության կառուցմանը, մասնակցություն, որը թույլ տար մարդկանց ասելու իրենց խոսքը իրենց երկրի տնտեսական քաղաքականության «ինչպես»-ի և «ինչքան»-ի

մասին, նշված է կոնֆերանսի փաստաթղթերից մեկում:

Մի այլ փաստաթղթում, որը վերաբերում է ժամանակակից աստվածաբանությանն ու գիտությանը, ընդգծված է. «Մեր աստվածաբանությունը պետք է շեշտը դնի բնության, Աստուծո ստեղծագործության նկատմամբ մեր ունեցած պատասխանատվության վրա»:

Ինչ վերաբերում է գիտությանը, փաստաթղթում նշվում է, որ կոնֆերանսի հիմնական խնդիրներից մեկն է եղել գիտության քնագավառի աշխատողներին հատկապես հասկացնել տալ այն համոզումը, ըստ որի գիտությունը կդավանանի իր իսկ կոչմանը, եթե այն չի ծառայում մարդկության նկատմամբ սիրո նպատակին»:

Բոստոնի կոնֆերանսի մասնակիցները այն ցանկությունն են հայտնել, որ սույն միջազգային կոնֆերանսին հաջորդեն այլ խորհրդակցական ժողովներ և հանդիպումներ, որոնց առանցքը կազմեն քրիստոնեական հավատքի և ժամանակակից գիտության հարաբերություններին վերաբերող հարցերը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ Տ. ՍԵՐԱՖԻՄ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻՆ

Հոկտեմբերի 11-ին Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, Մայր Աթոռից դեպի իր թեմ վերադարձի ճանապարհին, այցելում է Հունաստանի հայոց թեմ և հյուրն է լինում մի քանի օրով թեմական խորհրդին և հոգևոր հովիվ տ. Հակոբ քհն. Ռուստեմյանին:

Հոկտեմբերի 12-ին տ. Թորգոմ արքեպիսկոպոսը, ընկերակցությամբ Հունաստանի հայոց թեմական խորհրդի ատենապետ տիար Ստեփան Ֆեսճյանի, տեղի հոգևոր հովիվ տ. Հակոբ քհն. Ռուստեմյանի և Հ. Բ. Ը. Միության Ա. Գալբակյան վարժարանի տեսուչ պրն. Զ. Գրիգորյանի, քաղաքավարական այցելություն է տալիս Աթենքի և Համայն Հելլադայի տ. Սերաֆիմ միտրոպոլիտին:

Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը Հայոց Հայրապետի ողջույններն է հաղորդում տ. Սերաֆիմ միտրոպոլիտին:

Այնուհետև տեղի է ունենում ջերմ զրույց երկու բարձրաստիճան հոգևորականների միջև, հայ և Հունաստանի հույն օրթոդոքս եկեղեցիների հետագա հարաբերությունների մասին՝ էկումենիկ ոգով:

Զրույցի ավարտին տ. Սերաֆիմ միտրոպոլիտը խնդրում է տ. Թորգոմ արքեպիսկոպոսին իր «խորին հարգանքներն ու լավագույն մաղթանքները» ներկայացնել Ամենայն Հայոց Հայրապետին:

ՄԱՐՍԵԼԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ ՌՈԺԵ ԷՋԵԳԱՐԱՅԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Ս/թ. հոկտեմբերի 11-ին, հինգշաբթի օրը, Մարսելի ս. Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցու կրոնական ընկերակցության վարչությունը կազմակերպել էր շնորհավորական ընդունելություն՝ ի պատիվ Մարսելի նորընտիր կարդինալ արքեպիսկոպոս Էջեգարայի:

Ընդունելությանը ներկա էին պետական բարձրաստիճան անձնավորություններ, թղթակիցներ, հոգևորականաց դասը, հայ կաթողիկե և ավետարանական համայնքների հովիվները, հայ և ֆրանսիացի հավատացյալների հոծ բազմությունը:

Երեկոյան ժամը 19-ին, երբ Մայր տաճարը և եկեղեցու շրջապատը ողողված էր լույսերով, կոչնակների ղողանջի ներքո, Հարավային Ֆրանսիայի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպս. Վարդանյանի ընկերակցությամբ, «Հրաշափառ»-ով Մայր տաճար է առաջնորդվում Մարսելի արքեպիսկոպոս կարդինալ Ռոժե Էջեգարայը:

Ընդունելության բացումը Մակար Եկմալյանի «Սուրբ սուրբ» շարականի երգեցողությամբ կատարում է ս. Սահակ-Մեսրոպ երգչախումբը, որից հետո կատարվում են ս. գրական համապատասխան ընթերցվածներ:

Երկու բարձրաստիճան հոգևորականների ողջագուրվելու պահին երգչախումբը կատարում է «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» խմբերգը, որից հետո խոսք է առնում նորընտիր Մարսելի կարդինալը, որը բարձրը տրամադրությամբ շնորհակալություն է հայտնում այս ջերմ ընդունելության համար, այնուհետև իր խոսքի մեջ անդրա-

դառնում է հայ ժողովրդի մասին, որպես քրիստոնեության պատմության մեջ նոր կրոնը առաջինը պետականորեն ընդունող ժողովուրդ:

Այնուհետև կարդինալ Էչեգարայը կարեվորությամբ նշում է 1979 թվականի հունիսին Հայոց Հայրապետի այցելությունը Մարսել և իր հանդիպումներն ու տեսակցությունները Նորին Սրբության հետ թե՛ հայոց եկեղեցում և թե՛ Մարսելի կաթոլիկ արքեպիսկոպոսարանում:

Հոգևոր հանդեսը ավարտվում է խմբովին երգված «Տէր ողորմեա»-ով:

Հանդեսից հետո մշակութային կենտրոնի Զրբաշյան ընդարձակ սրահում, ի պատիվ Մարսելի նորընտիր կարդինալ Ռոժե Էչեգարայի, կատարվում է ճոխ հյուրասիրություն:

Գերաշնորհ կարդինալը լավագույն տպավորություններով հրաժեշտ է տալիս տ. Հակոբ եպս. Վարդանյանին, Մարսելի Կրոնական Ընկերակցության անդամներին, հայ ու ֆրանսիացի ներկա հավատացյալներին և մեկնում՝ լավագույն տպավորություններով:

Կարդինալ Էչեգարայի հայոց ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցի այցելության մասին մեզ տեղեկություն է հաղորդել Մարսելից թղթակից Հովհաննես Վարժապետյանը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում 3
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյանին արքության պատիվ շնորհելու առթիվ . . . 7
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը Փարիզի «Դպրոցասեր տիկնանց վարժարան»-ի տնօրենությանը, խնամակալ մարմնին, դասախուսական կազմին, պաշտոնեությանը և աշակերտությանը 9
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը ակնանավոր նկարիչ Գառզուին (Գառնիկ Զուլումյան) «Ս. Սահակ—ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու առթիվ . . 11
Վեհափառ Հայրապետի գահակալության 24-րդ տարեդարձի հանդիսությունը Մայր Աթոռում 13
Հաղորդագրություն 17
Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատվիրակությունը ս. Էջմիածնում . . 20
Հաղորդագրություն 23
ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ—Հովվապետական այցելություն Ադրբեջանի հայոց տիրախնամ թեմին 25
Սուրբ պատարագ, քարոզ և հանդիսություն ս. Հռիփսիմե վանքում . . . 35
ՎԱՉԱԳԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Հոգևոր ճեմարանի վերաբացումը . . 39
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 43
ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ—Աստվածաշնչական սուրբեր . . 49
Ս. Ա. Մ.—Շիպոլեթի առեղծվածը 55
Հայաստանյայց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի 52-րդ թեմական պատգամավորական ժողովը 57
Փիթեշթի (Ռումինիա) հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հիմնադրության 150-ամյակը 58
Մոնրեալի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շաբաթօրյա դպրոցի ուսումնական վերամուտը 59
Միջազգային ծիսագիտական ընկերակցության 7-րդ համագումարը 60
Հնդկական մալաբար եկեղեցու պետը ԱՄՆ-ում 61
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ժողովը Բոստոնում 61
Այցելություն Աթենքի և Համայն Հելլադայի Տ. Սերաֆիմ միտրոպոլիտին . . 62
Մարսելի արքեպիսկոպոս կարդինալ Ռոժե Էչեգարայի այցելությունը սուրբ Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցի 62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 11.10.1979 թ.: Ստորագրված է տպագրության 3.12.1979 թ.:
Տպագրական 4 մամուլ+10 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 846

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1979 թ.